

Վ. ՄԻՄՈՆՅԱՆ

ԺՊԻՏԾՆԵՐ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

«ՍԱԽԵԼԳԱՄԻ»

ԹԻՖԼԻՍ - 1 9 3 5

891.99
U-50

Ե-6 NOV 2011

891.99
U-50

ԳԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԺՂԻՏՆԵՐ

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ)


1084

1010
42834



ՍԱԽԵԼԳԱՄԻ

ՊՐՓԼԻՒ



1935

Յ Թ Ո Յ Ա Կ ՈՒ Յ Հ -

55117

Ժ Պ Ի Տ Ը Լ

1.

Գաղջ ու անշող որերը միսրճվում եյին բութ տարիների կողերը և մշուշապատ տարիների վոլորտներում խճճվում եյին նրա մտքի թերերը, անկար ու անոգնական դառնում ուղեղը և նա դժվարանում եր վերհիշել թե են յի՞րը եր, վոր դալուկ աշունը նախորդեց գարնանը ու տերեները թափվեցին չգեղնած...

Հիշում ե այսքանը միայն:

Մեծ պատերազմի որերին եր այդ:
Կոիվ տարան հարեան նատոյի ջահել-ջիվան ամուսնուն, տարան ծուռ Հերիքի ազիզ բալին, տարան ելի ուրիշ շատշատերի:

Տարան և իր ամուսնուն—խառաս Մելքոնին:

Պոկ ավին զլուխն ընտանիքի մարմնից ու քշեցին հեռու, հեռու, անծայր ու անծանոթ հորիզոններ: Ո՞ւր քշեցին, ինչի՞ քշեցին,—բան չհասկացավ Շուշանը:

Նա միայն զգաց, վոր Մելքոնի գնալով ընտանիքի սայլը մնաց թաք անիվի հույսով:

Հույսը՝ Պետիկն եր, քսան տարեկան թխաչյատղան՝ մշտածիծաղ ու վառվուն դեմքով:

Շուշանը դեռ հիշում ե այն բոպեն, յերբ կայարանում Մելքոնը բաժանվում եր իրենցից, պմպած աչքերով գրկեց Պետիկին, հայրական զգվանքով համբուրեց նրա ձակառը ու ապա «մնաս բարով»-ի համար ձեռքը մեկնելով իրեն, թախանձեց աղերսագին.

Պատ. խմբագիր՝ Վ. ԱՏՐԵՎԱՆ

ՏԵԽ. խմբագիր՝ Գ. ԲԱԲԱՆԻՔՅԱՆ

Ստորագր. ապագր. 5 հուլիսի 1935 թ.

Թղթի ստ. ձեռ՝ 72×105

Տիպogr. изд. газ. „Коммунисти“, Ул. Камо, 68.

Главлит № А-2040

Заказ № 2726

Тираж 2000

ԹՐՈՅՆ Հ-2013-

55177

Ժ Պ Ի Տ Ը Լ

1.

Գաղջ ու անշող որերը միրճվում եյին բութ տարիների կողերը և մշուշապատ տարիների վոլորտներում խճճվում եյին նրա մոռքի թեկերը, անկար ու անոգնական դառնում ուղեղը և նա դժվարանում եր վերհիշել թե են յերբ եր, զոր դալուկ աշունը նախորդեց գարնանը ու տերևները թափիցին չգեղնած...

Հիշում ե այսքանը միայն:

Մեծ պատերազմի որերին եր այդ:

Կոիդ տարան հարեան նատոյի ջահել-ջիվան ամուսնուն, տարան ծուռ Հերիքի ազիզ բալին, տարան ելի ուրիշ շատ-շատերի:

Տարան և իր ամուսնուն—խառատ Մելքոնին:

Պոկ տվին զլուխն ընտանիքի մարմնից ու քշեցին հեռու, հեռու, անծայր ու անծանոթ հորիզոններ:

Ուր քշեցին, ինչի՞ քշեցին;—բան չհասկացավ Շուշանը:

Նա միայն զգաց, զոր Մելքոնի գնալով ընտանիքի սայլը մնաց թաք անիվի հույսով:

Հույսը՝ Պետիկն եր, քսան տարեկան թխաչյա տղան՝ մշտածիծաղ ու վառվուն դեմքով:

Շուշանը դեռ հիշում ե այն բոպեն, յերբ կայարանում Մելքոնը բաժանվում եր իրենցից, պմած աշքերով գրկեց Պետիկին, հայրական զգվանքով համրուց նրա ձակատը ու ապա «մնաս բարով»-ի համար ձեռքը մեկնելով իրեն, թախանձեց աղերսագին.

Պատ. Խմբագիր՝ Վ. ԱՅԲՅԱՆ
ՏԵԽ. Խմբագիր՝ Գ. ԲԱԲԱՆԻՔՅԱՆ
Ստորագիր. տպագր. 5 հուլիս-1935 թ.
Թղթի ստ. ձեւ՝ 72×105

— Շուշան ջան, վերև աստված, ներքեւ Պետիկար
Լավ պահիր: Ձեր զլուխները մի կերպ պահեք, դիմա-
ցեք, յես ել շուտ կզամ:

Ու հետո արցունքի կաթիլներ դուրս ցայտեցին
նրա աչքերի խորունկ խոռոչներից ու սահեցին յերե-
սի կնճիռներով ցած...

— «Յես ել շուտ կզամ», — ասաց ու խոսքը սա-
ռեց կապտավուն շրթունքներին:

Հավատաց ինքն իր խոսքերին:

Հազիվ թե...

Ո՞վ եր շուտ յետ գալիս, վոր նա յետ գար...

Թաղում բոլորը, բոլորը յուրայինների միայն
գնալը դիտեյին, իսկ յետ դառնալը՝ չե:

Ասում են՝ նեմենցն ու թուրքը ուղում են գան
մեզ կոտորեն, գրուստ ամ, Անան ջան, — հարց տվեց մի
որ Շուշանը, յերբ լուսաբացին նրանք հանդիպեցին իւ-
րար փողոցի դռան մոտ:

Անանը, վոր մի տարի յեր վոչ մի խաբար չուներ
իր զինվոր գնացած ամուսուց, մի խորունկ թառանչ
քաշեց ու, գլխի փաթաթանի ծոպերն իրար զցելով
վրա բերեց.

— Ո՞վ իմանա, Շուշան ջան, ես կովից գլուխս
բան մտնում ամ... Ասում են՝ միթամ Նիկոլի լաշառ կնի-
կը նեմենցի թագավորի հետ սիլիւրիլի ա արել հիմի
նեմենցի թագավորը կանգնել ա Նիկոլից համ կնիկն
ա ուզում, համ թագավորությունը: Միթամ կովի սա-
բարն ետ ա...

— Հալբաթ ետ կլի ելի, — վրա բերեց Շուշանը
ձեռները կրծքին խաչ տված, — վոր Նիկոլը վոչ են ա-

տուր տալիս, վոչ են, ու նեմենցն ել վեր ա կացել ու
կոփվ հայտարարել:

— Ետ ասենք թե ետպես ա, բա թուրքն ինչի՞ ա
զլուխը մեջը զցել — կարծես ինչ վոր անհարիու-
թյուն նախազզաց իր լսածի ու պատմածի մեջ Անանը
ու հարցական հայացքը սկսուց Շուշանի վրա:

Այ, եղ մեկը Շուշանը վոչ հասկանալ կարողա-
ցավ, վոչ բացարել:

— Զե, Անան ջան, եստեղ մի ուրիշ բան կա, վոր
յես ու դու զիսի չենք ընկնում, — յեղափակեց Շու-
շանը:

— Կրակ ընկնի նրանց ջանը, կրակ, վոնց վոր
մեր մարդկանց ու վորդկերանց տարել զցել են կրա-
կի մեջ, — իսրունկ կոկծի մաղձը թափելով, կարծես
սիրուը թեթևացըրեց Անանը. — քարն իրենց գլուխը,
թեկուզ իրար միս ուտեն, համա... վոր մեջտեղը մենք
ենք ճիւլգում... թանգվի ու ըրիշակ ըլի թագավորի
տունն ու տեղը, վոնց վոր ըրիշակ արեց իմ տունը.
մարդու քշեց կրակի բերանն ու գուռը վրես յետ
դրեց:

Անանի ասածներին Շուշանն ավելացնելու բան
չուներ: Նրան թվաց, թե Անանը անեծքը իրեն սըր-
տից եր գուրս քաշում ու իրեն բերանով խոսում: Նույն
մզկացն ու մաղձը բուն եր զրել նաև Շուշանի սըր-
տում, բայց Շուշանը գոնե մի թեթև միսիթարանք ու-
ներ իր համար, մի ծաղիկ տղա ուներ տանը, վորից
համ հոր հոտն եր առնում, համ վորդու: Դա մի յեր-
ջանկություն եր, վորից գուրկ եր Անանը. բայց Շու-
շանը խոսափում եր Անանի մոտ այդ մասին վորեն
ակնարկ անել:

— Սիրտը կտակուի, մեղք ա, — մտածում եր նառ
ու շտապ հեռանում, վոնց վոր գործի շտապելիս լինի:

Ու ամեն անգամ, յերբ նրանք բակում կամ փո-
ղոցում իրար պատահելիս խոսում եյին պատերազմից,
յերկար դաստղություններ անում, վերջը դժվարանում
եյին վորոշ յեղրակացության գուլ և հանելուկը մնում
եր ելի անլուծելի, խճճած կծկի նման իրեն հին տե-
ղում ընկած:

2.

Մելքոնից առաջին նամակը յեկավ յերեք ամիս
անց: Գրում եր գերմանական ֆրոնտից: Վոր քաղա-
քից եր նամակը գալիս, Շուշանը բան չիմացավ. նա-
մակի վերջը ուսւերեն զրած հասցեյի մեջ վոչ մի քա-
ղաքի անուն չկար. մենակ գրած եր՝ «Западный фронт,
действующая армия, 10 стрелковый полк, 4-я ро-
та, Мелкону Парунакяну»—այգան գիրկապ արեց
Պետիկը, վորոշ յերեք տարի յեր միայն գլուխում սո-
վորել, իսկ հետո անցել եր հոր փեշակին՝ խառասու-
թյուն սովորելուն:

Մելքոնն այնքան իրեն կյանքից բան չեր գրում,
ինչքան կոչ ու մանավանդ Պետիկի դրությունից եր
հարցնում: Պատերազմից են, եր գրում, վոր որ ու գի-
շեր կովի մեջ են, գիշեր-ցերեկ գիրքերումն են անց-
կացնում, վոր շուտ-շուտ առաջ են զնում ու նոր գիշ-
եր գրավում: Հետո ել հույս եր տալիս, թե ես ար
կովիը կպրծնի ու նա շուտով տուն կվերադառնա:

Բայց Պետիկը դժվարանում եր հավատալ այդ բո-
լորին, վորովհետեւ նախ լսել եր, վոր ֆրոնտում գտըն-
վող զինվորներին թույլ չեն տալիս ճիշտ իրողությու-
նը գրել և մյուս կողմից՝ գործարանում բոլորովին ու

բիշ բան եյին ասում պատերազմի ընթացքի մասին:
Բոլորն ել պնդում եյին պատերազմի անաջողության,
ֆրոնտների ճեղքվելու, մեր զորքի յետ փախչելու և
գերմանացիների առաջանալու մասին: Բոլորն ել շը-
շնջում եյին մեր գեներալների ծախվելու մասին ու
գտնում եյին, վոր թագավորը «խալիսին աշանում» ի-
զուր տեղը կրակի բերանն ա ածում»:

Լսում եր այս բոլորի մասին ջահել Պետիկը, բայց
գեռ չեր կարողանում ինքն իր կարծիքն ունենալ նա
միայն զգում եր, վոր եղ կովի ասած բանը կապված
եր մարդկային գոհերի ու ապրուստի անասելի դժվա-
րությունների հետ: Նրա միտքը նման եր անձանոթ ու
խաչաձեվող ճանապարհների գեմ առած ճանապար-
հորդի, վորը խաչաձեման կետից առաջ անցնել չեր կա-
րողանում: Պատերազմի պատճառները նրա համար շատ
մութ եյին: Նրա արդյունքներից շոշափելին միայն այն
եր, վոր պատերազմը պոկել եր նրանց ոչախից միակ
կերակրողին-հորը: Այժմ տանը համախ ել լսվում
«չկա» բառը:

Շուշանը նամակն ստանալուն պես, տղային յե-
րեք անգամ կարդացրեց ու ստիպեց վորդուն պատաս-
խանն անմիջապես գրել:

— Հորդ աչքը ճամբի կլինի, վորդի, շուտ արա,
պատասխանը զրի, — համոզեց վորդուն Շուշանը ու յե-
րեսը շուռ տվեց, վոր Պետիկը չնկատի աչքերից ցո-
լացող արցունքի կաթիները:

Յերեք որ եր, նամակը գրած ընկած եց, մարկա-
չկար, վոր կպցներ ու ուղարկեր: Փողի բարաքյաթն ել խո-
վազուց եր կարվել Առաջին որը նամակը ձեռքից վայր
չգրեց, ուր գնում, նամակը ձեռքին ման եր ածում են

հույսով, թե մի տեղից փող իրար կանի, մարկա կառանի, կղրկի: Յերկրորդ որը նամակն ընկած մնաց կամողի գլխին դրած տախտակե արկղիկի վրա: Նամակը փոստն ընկավ միայն յերրորդ որը, յերբ Շուշանը ջուխտ արծաթե գլալը ձեռքին բազար գնաց: Գղալ-ները ընծա յեր բերել Պետիկի կնքահայրը, նրա կնունքին: Ընծան թանգ բան եր, հիշատակ եր, նա այդ բանը շատ լավ եր հասկանում, բայց ի՞նչ կարող եր անել յերբ այդ որը հացի փող ել չկար տանը: Իսկ յերեխան պիտի քաղցած գար տուն և ուտել ուզեր: Նրա բերած ոռճիկն ի՞նչ եր վոր... շաբաթը հազիվ 2 մանեթ. վոր մի գարզին աներ յերկու մանեթը:

Յերկրորդ նամակը յերկավ մի յերկու ամիս անց: Ելի կարճ ու համառոտ: Բարեներ ու կարոտի գեղում: ապա ընտանիքի հալ ու ափալի հարց ու փորձ: Վերջում գրում եր, թե ծուռ չերիքի տղեն ել ընկել ե իւրենց պոլկը:

Դրանից հետո այլևս վոչ մի նամակը վոչ մի տեղեկություն:

Հարվում եր Շուշանն անհանգստությունից, բայց իր հոգու վայրիվերումները թագցնում եր Պետիկից:

3.

Քաղաքն ապրում եր տագնապի որեր:

Կտուրների ու հարկերի տակ արցունքի ակունքներ եյին բացվել:

Վոմանք վորդի եյին վորոնում, վոմանք հայր...

Իսկ քրոնտում արյան հախուռն գետեր եյին հորդում:

Շողում եյին սվինները գերանդու պես լայնարձակ գաշտերում ու թափալլոր ընկնում անթիվ ու անհամար մարդիկ՝ հնձած հասկերի պես:

Պատերազմի արյան հեղեղը թիկունքում կուտակում եր յերկու բան—թույն ու վոսկի: Թույնը մի դասին, վոսկին՝ մյուսափն: Ու խորանում եր վոսկու և թույնի ոլայքարը աննկատ ու զսպված:

4.

Դեռ փոքր հասակից Պետիկը սիրում եր հործիքների հետ աանը փսփսալ և մանր-մունը բաներ շինել: Անչափ եր նրա ուրախությունը, յերբ մանկան առաջին անգամ աշողվեց իրենց փակ մնացած կողպերը բանալ: Այդ որը նա բոլոր ընկերներին պատմեց իր հուսարի մասին: Յերկրորդ հրճվալից բոպեն այն բոպեն եր, յերբ նա հարեանի փչացած կարի մեքենան կարշի ցցեց:

Այդ որը Շուշանը չկարողացավ զսպել իր ուրախությունը:

— Ա տղա, տեսնում ես սրան, ինչեր ա անհեմ, — զիմեց նա ամուսնուն, յերբ նա գործից հենց նոր եր վերագարձել տուն, — բա չես զարմանա, վոր ասեմ Մադթաղի կոտրած մաշինեն սարքի ցցեց ու բանեցրեց...

— Մատաղ ըլեմ յես դրան, — խանգաղատանքով վրա բերեց հայրը, — բա ում տղեն ա, վոր ըտենց հունարով չի:

— Զե, ես յերեխու ուշքն ու միտքը փեշակի ա, սրան փեշակի պիտի տանք, — յեղբափակեց Շուշանը:

Ու հայրը տարավ նրան իրենց գործարան՝ փեշակ սովորելու:

Յերբ Մելքոնը կոիվ գնաց, Պետիկն արդեն չորս տարվա բանվորական ստաֆ ուներ: Նրան գործարանում ճանաչում եյին իբր համառ ու շնորհքով գործ անողի: Ինչչ վոր ձեռք զարկեր, անպատճառ պիտի պատ-

վով վերջացներ: Այդ գիծը շատ եր դուք զալիս մանավանդ ուստա Ոհանին:

5.

Գարնան շունչ եր ամենուրեք:

Հմբուխտ դաշտում խաղում եր գարնանային մովը ու ցրում անհուն կապույտի մեջ գործարանի վերասլաց ծխնելույզից յենող գորշ ծուխը:

Քաղաքի ծայրամասում փուլած գործարանում կյանքը խփում եր լեռնային ակունքի պես: Բակում մի ընդարձակ ծածկի տակ լեռնանում եյին հրացանի կոթեր, խողովակներ, գնդացիրի անիվներ, մետաղի բազմապիսի կտորներ և այլն:

Գործարանը ուազմական պատվերներ ուներ, վորոնք պիտի կատարվեյին կարծատեև ժամկետներում:

Գործարանի տեր ինժ. Յարալովի ճակատին միշտ թուլում եր զաված խնդությունը, յերբ նա կանուխ առավոտից շրջում եր ցեխերը և անձամբ հսկում պատվերների իրացումը:

Ինչքան վոսկի տվեց այդ պատերազմը նրան... ինչքան գեռ ելի պիտի տա...

Ավսոս, վոր պակասում են աշխատավոր ձեռքերը:

6.

Այն որը, յերբ վաղ առավոտյան Պետիկը շտապ գործարանի քակը մտավ, մուտքի մոտ կանգնած պահապանը հայտնեց նրան, վոր 5 րոպե ուշանալու համար տուժանքի յե յենթարլվում:

— Հինգ րոպեյի համար,—զարմացած Պետիկն աչքերը հասեց պահապանի վրա:

— Հա, հինգ րոպեյի համար. թագա պուալիկին բա չես իմանում,—պնդեց խորուաղեմ պահապանը:

Թանձը ահաճության մի զգացմունք պարուրեց Պետիկին: Բայց այդ ահաճության զգացմունքն ավելի ուժով եր մյուս բանվորների մեջ, վորոնք արդեն լսել ելին աշխատանքի ժամերը 2 ժամով յերկարացնելու մասին:

Հին բանվոր ուստա Ոսեփի բողոքը բոլորովին դուք չեկավ ինժեներ Յարալովին: Բայց այդ բողոքը լայն արձագանք գտավ ցեխերում:

Տրառնջը ուղիուալիքի պես՝ թոթուց գործարանի բոլոր բաժանմունքներում:

Իսկ ուստա Ոսեփին հետեւյալ որը գործարան ներս չժռղին՝ իբր բունտով շնչելի:

7.

Մելքոնի կոփի գնալուց հետո գործարանի խառնատի ցեխի ավագ վարպետի զերն ստանձնեց «Պալլ» Ոհանը, վորի ձեռքի տակ աշխատում եր և Պետիկը:

Դալր Ոհանը գործարանի հին բանվորներից եր և Մելքոնի մտափկ ընկերը: Բանվորները նրան սիրում ու հարգում եյին իր պարզախոսության և համարձակության համար: Ամաչելն ու քաշելը Ոհանի համար իրորթ հասկացողություններ եյին: Դուզ խոսքի տեղը վոր գար պիտի ասեր:

Մի անգամ, յերբ Ոհանը զազգահի մոտ կանգնած առաջինով հարթում եր մի ինչ վոր յերկաթի ծայր, ինժեներ Յարալովը, վորը հենց նրա մոտը կանգնած եր, նկատողություն արեց:

— Զի լինի մի քիչ ուժով քսես եղ ուաշպէլը:

— Ցես եղ քեզ պես զիշերը ինդառուրի բուդ կերե՞ն վրեցն ել կոնյակ խմե՞լ վոր քեզ պես ուժով ըլե՞մ, —վրա բերեց Ոհանը:

— Ե՞ն, դալր մարդ ես, դալր,—սրտնեղեց Յարաւով ու հեռացավ:

Թերեւ չուզեց վիրավորել Ուանին, վորովհետեւ Ուանն անփոխարինելի վարպետ եր:

Ցեխում զագված քրթեջ առաջացավ:

— Լավ վրա բերիր այ, — ձայնեց բանվոր Մեգրելիձեն հարեան դազգահի մոտից:

— Բա ի՞նչ, հերիք ինչ վոր վզներիս նստեց: Չի հարցնում, թե վոր գործդ պլոծնես, տուն գնաս, տանը հաց ունես ուտելու. եկել ա, գլխիս կանգնել ու ուժ պահանջում, — թույնը թափեց Ուանն ու աղաներին աչքով արեց:

Բոլորն ել համերաշխության նշան ցույց տվին: Այդ որից ել «զալր» մականունը դարձավ Ուանի սեփականությունը՝ թեպետ բանվորները կանչում եյին վոչ բացասական իմաստով: Բայց Ուանն այդ մականունը կրում եր պատվով, վորովհետեւ նա համոզված եր, վոր այն, ինչ վոր զալբություն եր շահագործողի համար, ճշմարտության ու բողոքի արտահայտություն եր բանվորների համար: Այդ բողոքի ու անարգարության դեմ պայքարելու անհրաժեշտության մասին եր միշտ պնդում ինքը բանվորական գաղտնի ժողովներում:

8.

Մայիսի մոկի նախորեն եր:

Արեի ջերմ ճառագայթները վողողել եյին գործարանի ընդարձակ բակը: Յերկաթե մեծ դռան մոտ նըստած պահապանն արեի ջերմությունից թմբած, նիրահում եր անգործությունից: Բակի մեջ նկատվող յեռ ու գեռը նրան բնավ չեր խանգարում:

Գործարանի բակում հանկարծ ինչ վոր իրաբանացում ընկալվի:

Ցեխերում բանվորներն ինչ վոր շնչացին իրար ականջի:

— Զավողը ցեպ են կապեր — շնչաց Մեգրելիձեն դալր Ուանի ականջին, — շուտ արա, ճարդ տես:

Ուանը մի պահ գույնը գցեց, բայց իրեն չկորցրեց: Նա աջ ձեռքով շփեց ճակատը, մտքերը հավաքեց գլուխն ու շատապ մոտեցավ պատի տակ զրված իր արկըին, ուր նա հազուստ եր պահում: Աջ ձեռքով արկըի հատակից ինչ վոր թղթեր հանեց, դրեց ծոցը և մոտեցավ իր դազգահին: Աչքով մոտենալու նշան արեց Պետիկին, վորը կանգնած տիսկիների մոտ մանրիկ շպիլկաներ եր խառապցում:

— Խառապցը զգույշ քաշի, վոր շպիլկաները շատ չբարակացնես, — ասաց նա Պետիկին բարձրաձայն, բայց հետո շնչաց ականջին:

— Պետիկ, սիրում ես հորդ:

Պետիկը ապշած նայեց նրան:

— Հորդ սիրում ես, թե չե, շուտ ասա, — կրկնեց Ուանը դողոգնուն ձայնով:

— Իհարկե, սիրում եմ:

— Դե վոր սիրում ես, ես ել հորդ սիրած թըդթերն են: Ես թղթերը պիտի ազատես: Յեթե ես թըդթերը մի կերպ զուրս թոցնես զավողից, կնշանակի հերդ ել շուտ կզա: Տես, մարդ չնկատի:

Պետիկը մտորեց: Հայրիկին, իհարկե, սիրում ե: Բայց ինչ կապ կար այդ թղթի կտորների և իր հայրիկի միջև: Այ, կարծես նոր հիշեց: աղոտ յերազի պես հիշում ե նա, վոր հայրիկը մի անգամ ել եր իր մեջ-

քին կապել նման թղթի կտորներ և ուղարկել եր ընկերներից մեկին հանձնելու: Նա շատ լավ եր հիշում, վոր Ոհանն եր հոր ամենասիրած ու ամենամոտիկ ընկերն եր, վոր նրանք հաճախ, ուրիշ մի շաբթ բանվորների հետ, հավաքվում եյին իրենց տանը ժողովի: Այդ ժամանակ նա բավական փոքր եր և ընկերների հետ վեգ կամ աչքակապուկ եր խաղում բակում: Կանչում եր հայրիկն իրեն, խաղից կտրում ու խնդրում, վոր փողոցի դռան մոտ կանգնի, աչք ածի, հենց վոր գարադավոյ կամ վորեն վոստիկան յերեա, անմիջապես իմաց տա իրենց:

Փոքրիկ եր այն ժամանակ Պետիկը և անտարբեր դեպի նման բաները:

Բայց հիմա նա զգում ե, վոր այդ թղթի կտորների մեջ բողոք կա հայրիկներին պատերազմ տանելու գեմ... Նա այդ զգում և հավատում ե վարպետ Ոհանին: Ու նրա ձեռքերը մեքենայաբար ուղղվեցին գեպի Ոհանը: Թղթերն առավ նրա ձեռքից ու վայրէնապես խոթեց բրյուկի մեջ, մեջքի կողմից:

Պետիկը մտածեց մի խոռվան անցնել՝ թղթերը մեջքին դասավորելու համար: Խորվ տեղը գտնվում եր բակի մյուս ծայրին. պետք եր զուրս գալ ցեխից, բայց վոստիկաններն արդեն պատճեշել եյին մուտքը:

Խուզարկությունն սկսվեց:

Յերբ վոստիկանները Պետիկի մեջքից հանեցին մայիսմեկյան թուուցիկները, Ղալր Ոհանի չեչոտ դեմքին այլս գույն չեր մնացել: Նրա թափ հոնքերի տաշկից կայծկառում եյին խոր ընկած աչքերը՝ ասես պատրաստ եյին հարձակվելու:

Ավելի արագ ու արագ եյին պատվում Ոհանի

գաղգահի անիֆսերը, բայց նա գլուխը կախած անիվների վրա, բոլորովին չեր հասկանում, թե ինչ ե կատարվում իր հետ:

— Խեղճ յերեխուուն պցեցի կրակի մեջ,—մտորում եր նա ու տանջվում:

9.

Պետիկին ձերբակալեցին:

Նրան մեղադրեցին մայիսմեկյան ցույցի նախապատրաստման մեջ: Այդ եյին ապացուցել թուուցիկները:

— Դու գիտես, վոր դու պետական դավաճան ես, — սպառնական տոնով դիմեց նրան իր փափուկ գահավորակին բազմած ժանդարմական սպան, յերկայն ու շեկ բեղերը սրելով:

Պետիկը վոչ մի ձայն չհանեց:

— Ձենդ փորդ ե ընկել համ, շան լակոտ: Կարող ես միտինգ սարքել լավշավ ճառեր ասել: Հիմի վոնց ես մկան նման կուչ յեկել:

Պետիկի մարմնով սարսուռ անցավ, բայց չընկճավեց:

— Քեզ եմ ասում,—դիմեց նորից ժանդարմական սպան, — զու զգո՞ւմ ես, վոր քո արածը դավաճանություն ե:

— Վհչ,—սառը վրա բերեց Պետիկը:

— Այս, այդպես, ուրեմն զու վորոշել ես կախաղան բարձրանալ համ... Բայց չե՞ վոր դու յերիտասարդ ես, դեռ կյանքը թանդ ե քեզ համար: Յեթե ուզում ես գեռ ապրել ու աղատ զգալ, ապա պիտի ասես ովքեր են ընկերներդ, — տոնը մեղմացնելով, փորձեց խոսք գուրս քաշել Պետիկից սպան:

— Զգիտեմ:
 — Ախ, այլպես. ուրեմն չգիտես հա...— նորից.
 սպան տեղից վեր կենալով.— Բնչ կարծում
 էս մենք ել չգիտենք, թե ովքեր են քո ընկերները:
 Մենք ձեզ ձեր կճեպի մեջ ենք ճանաչում: Յես պաշանջում եմ, վերջապես, ասես ինձ, թե վորտեղ են
 տպլել ձեր թոռոցիկները:
 — Զգիտեմ:

Պետիկի վճռական բացասական պատասխանը
 պայրացրեց սպային:

— Ընդ... ուրեմն եղ ել չգիտես, դե հիմի կիմանաս:
 Զանգը տվից: Ներս մտավ հերթապահ վոստիկանը:

— Գցեք սրան 5-րդ կամերան:
 Կամերան գերեզման եր, միայն կենդանի մարդկանց համար:

Խոնավ նկուղի պատերն ասես լացում եյին այն
 կյանքերի համար, վորոնց վիճակվում եր ընկնել այն-
 տեղ: Դա Պետիկի առաջին հեղափոխական կնունքն
 եր. բայց խոնավ պատերը նրա զգայուն հոգին չեցին
 ընկնում: Վորովհետեւ նա առաջին անգամ զգաց ու գի-
 տակցեց, վոր հայրիկների կյանքի վրկության միակ
 ճշմարիտ ուղին այդ ուղին եւ:

10.

Դուռը ճոռոցով մեկը բաց ու խուփ եր անում և
 շարունակ գուրս ու ներս անում:

Դա — Շուշանն եր:
 Ժամը 4-ը վոր խփեց, արդեն մոտ եր հինգի կե-
 սին, Շուշանը շալը զցեց ուսերին, գուրս յեկավ փո-
 ղոցի գուռն ու աչքը ճամբի պահեց:

— Ու՞ր մնաց յերեխին, քա... — մամաց ինքն
 իրեն Շուշանը ու կրծքի տակ թաց շորի նման մի
 բան ասես մզկցին: Սիրան անհանգիստ եր: Յերեխան,
 վորն արդեն հասունացել ու բեղատեղին աղվամաղի
 ու զոլ եր քաշվել ուշացել եր: Ի՞նչ յեղավ, ինչի ու-
 շացավ... Զե վոր նա սովոր չեր դուրսը բռնվել ուշ
 տուն զալ:

Շուշանն անհանգիստ նորից տուն մտավ. աչքը
 զցեց սեղանի վրա տղի համար պատրաստած ճաշին,
 վոր սովորական ցամաք հացից ու կարտոֆիլից դենը
 չեր անցնում, ու միտքն ելի զցեց տղի ճամբին:

Թեպետ դիշնովա ժամը 10-ն եր, բայց Շուշանի
 համար զիշերն արդեն կես եր յեղել. հապա ինչո՞ւ չի
 գալիս Պետիկը:

Կասկածը մկան կերպարանքով փորփրում եր նրա
 հոգու հատակը:


— Անկողինն ել զցած, պատրաստ, արի ե...
 արի, վոր թիքեդ ուտես ու խուչխուչ, փուչ-փուչ
 պառկես սնկողնումդ, վերմակիդ յերեսն ել եսոր եմ
 Ելացել ու մեկտակել — շնչաց Շուշանն ինքն իրեն
 ու լամպի լույսի տակ իրեն սովորը պատին յերկա-
 րած տեսնելով, ասես, վախ զգաց ու շալը նորից ուշ
 աերն առավ, դուրս վագեց:

Հարեան Սոփոյենց տանը դեռ խոսակցության
 ձայներ եյին լսվում:

Կամս ցուկ թակեց նրանց զուռը:
 Դուրս յեկավ Սոփոն, մի հաստիկ ու քիչ ել կու-
 ղին ավող կարճահաստակ կին:

— Ախչի, Սոփո ջան, Պետիս դեռ չի յեկել ուշը
 գնում ու զալիս ա, Ենք գործ ա պատահած լինել —

2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

աղերսալից ձայնով դիմեց նա Սոփոյին, կարծես նրանից մի մխիթարական խոսք խնդրելով:

— Զի յեկել... չի յեկել, կտա ելի. ի՞նչ ես գլուխդ կորցնում: Զահել տղայա յա ելի, հալբաթ լեշի ա դեմ առել, — ծոր տվեց Սոփոյն քիչ կատակին տալով:

Սոփոյի խոսքերը Շուշանի սրտին փոքրիկ թեթևություն տվին, ասես սրտին դեմ առած ինչ վոր մի քար վեր առան, դեն դրին: Միտքն, ասես, քիչ պարզվեց:

Սոփոյն շատ եր խղճում Շուշանին, վորովհետեւ նա, ինչպես և թաղում ամենքը դիտեյին նրա ամուսնու, Մելքոնի սպանվելու մասին: Շուռ Հերիքի տղան եր գրել մորն եղ մասին:

Մենակ Շուշանն եր, վոր անտեղյակ եր եղ լուսից, վորովհետեւ վոչ վոք չեր համարձակվում բոթաբերի գերում լինել Շուշանին վիշտ պատճառել:

Գրչերային զովի ազդեցության տակ Սոփոյի մարմնով սարսուռ անցավ:

— Շուշան ջան, արի ներս, քիչ կխոսենք, ես ա Պետիկն ել կդա:

Շուշանը չհամաձայնեց: Վաղեց փողոցի դուռը և ժամադիր յեղածի պես քարացած կանգնեց:

Փողոցում աննկատելիորեն շարժումը դադարեց. ասես խուլ փողոցի ցածրիկ ու խարխլած անակներն ել նիրհեցին, բայց նա ելի գեռ չկար:

Մըմուռը սրտին տուն մտավ: — Ի՞նչ անեմ, տեր աստված, զնամ զավոր, հիմի զավողում մի կլինի, — մտածեց նա, — մտածեց նա ու մկնեց իրեն իրեն պախարակի: — Զահել տղայա յա, պահանջներ ունի, միշտ խո փեղիցս կարած չի լինելու... — հանգստացրեց նա ինքն իրեն:

Մտավ անկողին, բայց լամպը չմարեց. Գիշերը ժամը մի անգամ Շուշանն արթնանում էր, աչքը զցում Պետիկի անկողնին, բայց անկողինն էլի դատարկ եր տեսնում:

Ծեզը չքացված, Շուշանը վազեց գործարան: Դեռ շատ վաղ եր: Քարշան առավոտյան մեղմիկ զեփյուռը կարծես որորում եր նրա մտքերը, բայց անձրևաբեր մութ ամպերի նման չարագուշակ մտքերը նորից գալիս, կուտակվում երին նրա ուղեղում ու նա չեր կարողանում հաշիվ տալ իրեն, թե ի՞նչ ե կատարվում իր հետ:

Հնչեց գուրովիլը: Բոլոր, բոլոր բանվորներն յեղան, անցան գործարանի հակա զարպասը, խոկ նա չեղավ...

— Տեր աստված, ի՞նչ կարող եր պատահել նրան: Դիմեց գուան պահապահնին:

— Բննեցին, տարան, — հատու պատասխանեց խոժուադեմ պահապահնն ու անտարբեր անցավ իր տախտակած մենյակը:

Շուշանը կայծակնահար յեղավ:

— Տարան... ելի տարան, — մտածեց նա, — ուր տարան, ինչու տարան: Ի՞նչ են ուզում ինձանից. մարդուս տարան, վորդուս տարան: Ծեծելու ել ուրիշ մարդ չգտմն: Աշխարհում մենակ Շուշանն ե...

Խոժուադեմ պահապահնը խնդրեց Շուշանին հեռանալ գուան մոտից:

— Կուզեք ինձ ել տարեք... Ի՞նչ եմ անում իմ կյանքս առանց նրանց, — կերկերաց նա ու մտամուլոր ուղղվեց գեղակ տուն: Բայց ում տուն, ի՞նչ կատանը, մի կա տանը... Տուն չկա, տունը քանդված ե...

Նա ապշում եր, վոր մարդիկ անտարբեք քայլում
են փողոցներում, կառքերն ու ավտոները վազում են
սովորական արագությամբ: Միթե կյանքի մահամերձ
վայրկյանները չեն զգում նրանք:

Ու յերբ Շուշանը տուն հասավ, նա ներս չմտավ.
Նստեց դռան շեմքին ու աչքը ցցեց Սովոյի դռանը:

— Ի՞նչ բախտավոր կնիկ ե, — մտածեց նա, —
վորդին մոտը, մարդը մոտը: Իսկ ինքը՝ յիթիմ ու ան-
ոգնական:

Շուշանի վիշտն անհատակ եր, մտքերը՝ խելա-
ցնոր ու անթիվ: Շուշանը և՛ կար, և՛ չկար: Ամենքը,
ասես ամենքը խուսափում եյին նրանից, վորովհետեւ
վոչ վոք չեր կարող նրա վշտերն ամոքել:

Շուշանը հաճախ առավոտը ծեզին գուրս եր զը-
նում, մթան վեմ տուն վերադառնում: Աւո՞ր եր գնում,
թու եր շինում ամբողջ որը գուրսը, վոչ վոք վոչինչ
չզիտեր: Յերեմն ամբողջ որերով փակված եր մտում
տանը: Այդպիսի որերին հարեւանները գաղտափողի մո-
տենում եյին նրա պատուհանին ու հետեւմ, թե ին-
չով ե զբաղված Շուշանը:

Շուշանը նստում եր շորերի սնդուկի մոտ, մար-
դու և վորդու հին շորերը հանում, փոռում առջեր, նա-
յում, նայում, հետո ձեռքով հարթում, ապա նորից
հայաքում, խնամքով դարսում՝ սնդուկի մեջ: Հետո
կանգնում եր տղայի և մարդու լուսանկարների առջև
ու հետները խոսում:

— Խեղճ Շուշան, խելքը կորցրել ե, — շնչում
եյին հարեւաններն իրար տկանջի և վաշ ու վուշով ա-
վարտում իրենց ցավակցությունը:

11.

Անցան ամիսներ... տարիներ...

Յերկիրը բռնկվեց հեղափոխության տեսդով:

Յեկան որերը, յերը ցարն ու յերկրի մի բռւ-
տերերը պիտի հաշիվ տային իրենց կատարած արհա-
վերքի, թափված մարդկային ծով արյան համար:

Փետրվարին հաջորդեց լուսածածանչ Հոկտեմբե-
րը: Բայց այս ամենն անցավ Շուշանի կողքով:

Շուշանը և՛ կար, և՛ չկար:

12.

Աշնան դուրեկան որերից մեկն եր:

Փողոցի ծայրից մի կառք որորվելով, յեկավ
կանգնեց Շուշանենց դռանը:

Պետիկն եր — կարմիր բանակայինի հագուս-
տով: Փետրվարյան հեղափոխության որերին նա ա-
ղատվել եր բանաից, իսկ հոկտեմբերյան որերին մտել
կարմիր բանակի շարքերը և մասնակցել ֆրոնտնե-
րում:

Հարեւաններն իրար անցան: Պառավ Սովոն առա-
ջինը մոտեցավ ու համբուրեց, ասես հարազատ զավա-
կին տեսավ: Նրա խորշումած աչքերը արցունքից կուչ
յեկան:

Այդ որը Շուշանը տանը փակված եր:

Պետիկը թակեց դուռը:

Ռւշադրություն դարձնող չեղավ:

Պետիկը նորից թակեց ու պատուհանից ներս
նայեց:

— Չե, չկա, ել մարդ չկա, տարան, բոլորին տա-
րան, — լսվեց ներսից Շուշանի կերկերուն ձայնը:

— Յես եմ, մայրիկ ջան, յես՝ Պետիկդ:

Շուշանը թերևս չհասկացավ:

— Մայրիկ ջան, բայց արա դռւուը, յես եմ, քո»

Պետիկը:

Բանալին պտտվեց դռան արանքում:

Դուռը բացվեց, Պետիկը վրա ընկավ, գրկեց մորը:

Շուշանը յետ հրեց, բայց ասլշած աչքերը սևեռելով վորդու աչքերին, բանեց նրա ձեռքից: Դժվար եղան հասկանալ նրա դեմքի արտահայտությունից:

Մի անսովոր ժամիտ փայլեց նրա դեմքին:

Դա առաջին ժամիտն եր, վոր յերկում եր Մելքոնի դնալուց հետո:

Արդյոք խելազար ժամիտ եր, թէ յերջանկության արտահայտություն — դա դժվար եր կարդալ նրա կմաղքացած դեմքին:



ՀԱՇԻՎԸ

Դուշ գյուղը դեռ բոլորվին չեր արթնացել բայց Հայկանդուխտը թևերը քշտած՝ զոմի խորքում կթում եր կովերը:

Հայկանդուխտն իր յերկար, ճկուն, նիհար ճյուղի նմանող մարմինը կոճղի վրայից բարձրացրեց, պղնձե մեծ ամանն ու կոճղը ձեռքն առավ ու մոտեցավ վերջին կովին:

Ճերմակ խալավոր կովը ծուլորեն պոչը շարժեց, ասես, ճանճ լիներ քշելիս:

— Ախչի, Հայկանդուխտ, կովի պտուկները քամես վոչ, հորթերի հմա բան թող մեշը, — լսվեց մի խուլ ձայն հարեւան ողայից:

Զայն տվողը վարդազարն եր, Հայկանդուխտի քրոջ ամուսինը:

— Վախես վոչ, ինչքան քամեմ, հորթը պտկի ծերեց իրա բաժինն ելի կհանի, — իբր պատասխան մտմտաց ինքն իրեն Հայկանդուխտն ու շարունակեց.

— ի՞նչ ա, վախում ես մի գլուխ պանիր ավել դուս դա, համ... ավել թիքեն փորդ կծակի...

Հայկանդուխտը ձեռքերի ուժին ուժ ավելացրած, ուետինի պես ձգում ու ձգձգում եր կովի պտուկները:

Վարդազարը շատ լավ եր հասկանում, վոր իր ասածին Հայկանդուխտն ուշագրություն չի դարձնելու:

Նա լեզվով, ճիշտ եր, կնոջը նախազգուշացնում
եր, բայց մտքումն ասում եր.

— Ա' կնիկ, դու գիտցածդ արա, հաշիվդ դու ին-
ձանից ավելի լավ գիտաս...

Վարդաղարը շատ եր սիրում Հայկանդուխտին.
սիրում եր նրա համար, վոր գիտեր նա ձեռը բոշ կնիկ
չի, գրսից տուն քաշող, մեկն յերկու անող ա:

— Բա վհնց... — մտածում եր նա հաճախ, — բա
վհնց պի անես, վոր մեկդ դառնա յերկու, յերկուսով՝
չորս, տասնէ քսան, հարիբո՞յ յերկու հարիր... Միւսի
սարասղ մարդ ել դանգատվում ա, թե փլանքյասը
յերկերեսանի յա: Շուռ գաս ու ասես, ան շուն ու
շան... դու յերկերեսանի չես... յերեսիս «ջան» ես ա-
սում, համա մտքումդ գիտամ, վոր ինձ հայնոյում ես:
Աշխարհի որենք ա, մարդ պաի յերկերեսանի ըլի: Տե-
սանելի յերեսովդ մարդկանց նշանց տու, թե որ ու
գիշեր մտածմունքդ նրանց մասին ա, համա անտեսա-
նելի յերեսովդ ու դուղովդ քու հաշիվներդ պինդ պա-
հիր, վոր կորչես վոչ:

Վարդաղարն ինքն ել հաշիվ կորցնող մարդ չեր:
Հաշիվ եր նրա զաշաղ դառնալը. հինգ տարի շա-
րունակ նա զաշաղ ընկած, թալանում եր սրան-նրան
ու սարերում թագնվում: Հաշիվ ու խորամանկու-
թյամբ նա գյուղի ամենաունեօրի, Բալասան բեզի
աղջկան՝ Հայկանդուխտին կնիկ առավ: Իսկ յերբ դաշ-
նակյան հրոսակային խմբերի մեջ մտավ ու հետո
յերկրում տիրեց դաշնակյան ոլիգարխիան, հաշիվ եր,
վոր նա հրաժարվեց «պաշտոնական» զաշաղությունից,
իշավ գյուղ հանգիստ կյանք վարելու, բայց և շարու-
նակելու անպաշտոն զաշաղությունը:

Հին իդիթ եր Վարդաղարը, բարձրահասակ, յեր-
կար ու ծալրերից կախ ընկած թանձը բեղերով, ման-
րիկ, բզով ծակած խորամանկ աչքերով:

«Ֆիդայ» Վարդաղար:

Այդպես եյին կոչում նրան գյուղացիք:

Դուշ գյուղում ֆիդայ Վարդաղարից վոմանք վա-
խում, վոմանք՝ պատկասում եյին:

Վախում եյին, վորովհետեւ նրա զաշաղության ա-
հը մարդկանց հիշողությունից զեռ չեր անհետացեա-
խոկ պատկասում, վորովհետեւ գյուղում ամենից հեռա-
տես, ամենից շատ պետք յեկող մարդը ելի նա յեր,
մանավանդ, յերբ քաղաքից իշխանության կողմից
վորես մարդ եր գալիս: Գյուղում ոռուսերեն իմացողը
համարվում եր մենակ Վարդաղարը, իսկ նա իր կոտր-
տած ոռուսերենը գործ եր ածում միայն յերկու դեպ-
քում — մեկ՝ յերբ հարկավոր եր լինում քաղաքից
յեկող մարդուն բան հասկացնել և մեկ ել՝ հանգտի
որերին՝ գյուղամիջութ հավաքված խալխի մեջ, յերբ
ուզում եր շախս բանեցնել:

— Ո՞յ, կակոյ սումբաթիչնի չալավեկ, — յեղբա-
փակում եր ամեն անգամ Վարդաղարը, այս կամ այն
ունեօրի գովքն անելուց հետո:

Հոսում եր Վարդաղարի կյանքը՝ խաղաղ ու ներ-
դաշնակ:

Վոչ մի ամպ ստվեր չեր նետում նրա հոգու յեր-
կնքի վրա...

Վարդաղարի յերջանիկ հարկի տակ ամուսնական
սերը փթթում եր ու ծիլավորվում:

Բայց...

* * *

Մի որ...

Մի արեւադառ ու պայծառ որ անծայրածիր յերկը լեռնալանջերում ու հարթավայրերում գարուն բացվեց:

Հոկտեմբերյան դարուն՝ մոլեգնոտ ու կենսապար:

Ծարաւիր յերկիրը ներծծեց նորածնդ գարնան ջերմությունը: Փթթեց հողում Հոկտեմբերյան հունտը, ուռնացավ ու կոլխոզային դաշտերը ծածկեց վոսկեծամ հասկերով:

Դյուզի հանգերում վերացան արտաքաժան ցցերն ու թմբերը, փոփեց յերկը սրտի նման լայն ու փարթամանիստ արտը կոլխոզային:

Դյուզն արտասովոր շարժման մեջ մտավ:

Գլորվեցին որերը հրաշունչ, ու մի որ զոռքա Ուանի նորաշեն տան ճակատից կոլխոզի նախագահ Գոքորն ու կոլխոզներ Վարթևանը կախ ավին՝ «Ընկենինի անվան կոլխոզ» ցուցանակը:

Նորաստեղծ կոլխոզը կուտակում եր նորանոր ու ժեր ու ամրապնդվում:

* * *

Ֆիդայ Վարդաղարի տունը փոթորիկ ընկավ, ասես նրա ընտանեկան յերջանկության անիվը կոտրվեց:

Որը մեկ եր, նրա տան մեջ կորիֆ ու դամադաւը՝ յերկու:

Նրա տան փոթորիկն սկսվեց այն որից, յերբ վարդաղարն սկսեց իր անասունների թիվը գոմում

նվազեցնել: Նրա կովերի ու լծկանների մի մասը գնացիրը մասցու, մյուսը՝ զնաց հարսան ուայոնի գյուղերից մեկը ու մտավ չքավոր բարեկամի դոմը:

Ուներության հետքը կորցնելն անհրաժեշտ եր: Իր ահագին հոտից Վարդաղարը գոմում թողեց յերկու կթան ու մի խոզ:

Հայկանդուխտն այդ բոլորից բան չհասկացավ: Ամեն նրա հարցմունքին Վարդաղարը պատասխանում եր:

— Կնողա խելքը կարձ կըլի. ամեն բան նրա խելքը չի պատի: Յես իմ հաշիվը դիզամ...

Հայկանդուխտը դգտոնում եր, տրտնջում, բայց մարդու բան ասել չեր կարողանում:

— Բերնիցդ խոսք չժողնես, համ... թե չե որ ու արև չեմ տա քեզ... — սաստել եր կնոջը Վարդաղարը:

Հայկանդուխտը զարդը զցել եր սիրտը, իսկ հիվանդ սիրտն եղ արարմունքը տանել չեր կարողանում: Հյուծվում, բարակ չթի պես մաշվում եր Հայկանդուխտը մտածմունքից:

— Ախչի, Հայկանդուխտ, — հարց տվեց մի որ զրկից նոյեմը, վոր Հայկանդուխտի հետ շատ մտերիմ եր, — Վարդաղարին եղ ինչ ա պատահել: Ես սավետական իշխանությունը յեկավ, չեկավ, Վարդաղարն ոճ ա դառել ու ջանս ընկեր թե...

— Գիդում չեմ, նոյեմ ջան, — գողզոջուն պատասխանեց Հայկանդուխտը: — Յես հասկանում եմ ինչ ա պատահել: Ես սավետական իշխանությունը յեկավ, չեկավ, Վարդաղարն ոճ ա դառել ու ջանս ընկեր թե...

Հայկանդուխտն, ըստ յերկույթին, ուզեց շարու-

Նաև կել պատմությունը, բայց հիշեց վարդապարի տված
ահը ու լեզուն պահեց:

— Զե, չե, յես տեսնում եմ, վոր մարդս շաշմիշ
ա ըլեր — յեզրափակեց Հայկանդուխտը:

— Բա, խի չես մի հեքիմի յա մի բժշկի մոտ
տանում:

— Ախչի, Նոյեմ ջան, ուզում ես գլուխս ուտի,
կարողանում եմ բան ասել...

Ու Հայկանդուխտը հուզված, չկարողացավ այլևս
իրեն զսպել.

— Նոյեմ ջան, մոտիկս դու յես, քեզ եմ ասում,
ուրիշի բերան չցցես: Ախչի, Վարդադարը կպել ա, թե
պիտի մենք սուտ բաժանվենք, յեզած-չեղածը կթող-
նեմ քեզ մոտ, ասում ա, յես կզնամ, առանձին կապ-
րեմ, վոր հետո, իրու չունոր, կոլխոզ մտնեմ. եղ
պետք ա, շատ ա պետք, ասում ա... Բա դա ըլելու
բան մ... Բա խելքը զլխին մարդը ըտենց բան կասի...
Նոյեմ ջան, քեզնից ի՞նչ թագցնեմ, իմ մտքովն ուրիշ
բան ա անց կենում: Յես ասում եմ, եղ տերամեռը
բեզրել ա ինձանից, ուրիշի ա աչք զբել ու հիմի
կոլխոզի մնանով ուզում ա ինձանից պոկ գա... Հը,
դու ի՞նչ կասես, խելքամոտիկ բան չի սա. մեր զե-
ղումն ել խո տղաթ ա զառել կնիկ թողնելը: Յես նը-
րան թողնիւ չեմ, թողնիւ չեմ եղ ոյինը զլուխս գա...

Նոյեմը զլխով հավանության նշան տվեց, իսկ
Հայկանդուխտը գոզնոցի փեշերով արցունքները սըր-
բեց:

— Ախչի, ի՞նչ խելոք բան ասեցիր, ե, եղ ա,
վոր եղ ա... Երա փորացավն ուրիշ բան չի... Ա՛յ Փողս
տամ եղ տեսակ տղամարդու զլխին հա... — ու Նոյ-

յեմը յերկու ձեռքով չանչ ուղղեց անորոշ ուզգու-
թյամբ:

Նոյեմն եղ լուրը միայն յերկու բերան գցեց, իսկ
հետո գյուղում մեծից մինչև փոքրի բերանը՝ լուրն
ինքն իրեն ընկափ: Մինչև յերեկո արդեն ամենքը
գիտեին Վարդագարի ծրագրների մասին: Բայց տար-
բեր մարդիկ տարբեր կերպով մեկնաբանեցին այդ
ծրագիրը:

* * *

Գյուղիսորհրդի գրասենյակի շեմքին նստած են
մարդիկ ասուլիսի: Գրասենյակի գուռն անդուր ու
միալար ճռում ե: Անհամար ե ներս ու դուրս անող-
ների թիվը:

Յերբ Վարդագարը ներս մտավ, գրասենյակում
գտնվող մարդկանց մեջ մի խուլ փոթեց առաջ յե-
կավ, բայց բոլորն ել զավեցին իրենց:

Վարդագարն անվճռական կերպով մի թղթի կը-
տոր զբեց գյուղիսորհրդի նախագահ Սենյի առաջ ու
վրա ըերեց:

— Խնդրում եմ վավերացնեք:
— Ես ի՞նչ թուղթ ա, — հարց ավեց Սենյն,
թե արդեն զիտեր թղթի բովանդակության մասին:
— Եղ են թուղթն ա, վոր յես ել ապրել չեմ
կարող Հայկանդուխտի հետ ուզում եմ, վոր բաժան-
բաժան լինենք:

— Բա Հայկանդուխտի համաձայնության թուղթն
ունեմ, — քմծիծաղ տալով հարց ավեց Սենյն:

— Հայկանդուխտի... — կմկմաց Վարդագարը —
Հայկանդուխտի համաձայնությունը... Ես ա, զնամ են

թուղթն ել բերեմ... — ու Վարդազարը կնդակի պես
դուրս պրծավ գրասենյակից ու արագ քայլերով շաա-
պեց դեպի տուն:

Յելք նա տուն հասավ, գյուղի մարդկանց ու կա-
նանց մի խումբ խռնված գտավ իրեն տանը:

Թախտի վրեն մեկը դիակնացած պառկած եր.
Կանանցից վոմանց աչքերին արցունքի կաթիլներ
եյին շողողում:

Դիակը... Հայկանդուխտն եր, վոր կաթվածահար
եր յեղել:

Վարդազարը մի պահ սփրթնեց, գույն տվեց,
գույն առավ, ու զայրույթը չկարողանալով զսպել, գո-
ռաց դառնապին,

— Ա՛, հորդ գյուն անիծած, մեռնելու վախտ
դում...



Ճ Ա Մ Բ Ի Ն

Զյան անդրանիկ փաթիլները նազով ընկնում
եյին գետին և սավանում ամեն ինչ: Ճերմակ
հագան Դիլիջանի ծառաշատ, բարձրակատար լեռներն
ու գաշտավայրերը: Ասես, վազաժամ ծերացան նրանք
մի ինչ վոր անորոշ հոգսի ծանր ճնշման տակ: Հեռա-
ծալ դաշտերի ծոցում վազուց եր մարել շինականի ա-
նուշ հորովելը:

Որերը, վոր սևակնած ամպերից ել սև եյին, քայ-
լում եյին ուղտերի քարվանից ել դանդաղ, ճալում եյին
մարդկանց քամած լաթի պես սրտերն ու հանգչում
ժամանակի անորոշության մնջ:

Հենց նոր եյին սկսել առկայծել հատ ու կենա-
ճրագները, յերբ խճուղուն մատ ընկած Ա. գյուղը ներս
մտավ գիրքերից վերադարձող Մուրադի խումբը:

Խումբը կովել եր բոլորիկների գեմ յերկու որ
անընդհատ: Կոխմաներից հոգնած, ուժապատ նա վերա-
դառնում եր մոտավոր թիկունք, միորյա հանգստի:

Գուղն, ասես, անշնչացած մի դիակ, որվա չարա-
շունչ տագնապներից հոգնած կծկվել անեացել եր:
Մարդիկ զալարվում եյին սովոր ու ցրտի ճիրաննե-
րում, հաց ու լաթ յերապում...

— Կանգ առնելը — խրոխտ ձայնով կանչեց խըմբապետն ու ձիու սանձը քաշեց իրեն։ Սպիտակաբաշ ձին խրխնջաց, փնչաց, գլուխը թափահարեց ու իսկ կույն կանգ առավ. ասես, ուրախացավ, վոր պիտի հանգստանա։ Յեշկու տղա՝ թիկնապահները, յերկարածե, մոխրագույն փափախները գլխներին ու փամբըշտականները կրծքին խաչկատ տված, իսկույն ձիու բից վայր սլացան, մեկը վազեց խմբապիտի ձիու սանձը բռնեց, մյուսն ոգնեց նրան ձիուց իջնելիս։

— Բաց անել տուր ես գուռը, — հրամայեց նա տղերքէց մեկին, ձեռքն ուղղելով դեպի մոտակա խըմբիթը։

Խըմթին մոտիկ շինված փայտաշեն վորչեց գուրս պիրծավ մի լզարիկ շուն ու սկսեց հաջել անծանոթ սովորների վրա։

Դուռ անսովոր թակոցը լցրեց մոտակա տարածությունը։ Անծանթ ձայներն ու շան կաղկանձը գիշերային մութի մեջ սարսուռ առաջ բերին խրծթի մի անկյունում կուչ յեկած Զանան նանի ու նրա 12 տարեկան աղջիկ Նազոյի սրտում։ Ճոթուած վերմակի տակ կուչ յեկած Նազոն վախից ել ավելի կծկվեց ու գարշագույն մասաւունը։ Իսկ Զանանը, վորը ցրտից նեղված հագի շորերով եր անկողին մտել յերկար ժամանակ դվարացավ տեղից շարժվել։

— Ո՞վ կլի, յարաք, — մըթմըթաց նա ինքն իրեն ու փորձեց տեղից բարձրանալ, բայց չեղավ... վոտերի մեջ այնքան ույժ չկար։ Ուղեց ձայնել բայց... վիրտենց եր ձայնը։ Կմախքացած կրծքի տակ թրպտում եր

սկրտը, վախկոտ թոչունի պես ու խախտում պառավի շնչառությունը։

— Բաց արեք գուռը, թե չե կկոտքենք, — ձայնեց զինվորներից մեկն ու մարմի ամբողջ ծանրությամբ ընկալ դռան վրա։

Զանանը մի կերպ հակաքեց ուժերը, անքոցով տեղից վեր յմլավ, նազոյի պատառոտած վերարկուն, վոր վերմակի վրայից փուած եր, ուսերն առավ ու վոտերը հազիվ քարշ տալով, մոտեցավ դռանն ու բացեց։

Դուռն խորքում ուրվագծվեց պառավի յերկուտակված մարմինը։

— Ո՞ւմ եք ուզուա, այ վորդիք, — կերկերուն ձայնով շնչաց նա։

— Այ պառավ, լույսը վարի, լույսը. քո տանը հյուր ենք ես գիշեր, — հրամայեց խմբապետն ու մըտքակի կոթովի եր վրայի ձյունը թափ տվեց։

— Նավթ վիրտեղից ա, վոր վառեմ, ա ձեզ մատաղ, հազիվ կմկմաց պառավն ու ապա ավելացրեց։

— Ա ձեզ մատաղ, մի ասեք, ովքեր եք ե։

— Պառավ, քեզ ասում եմ լույս տուր, լույս. քեզ ինչ, թե ովքեր ենք, — զայրացած վրա բերեց խմբապետն ու առանց լույսի սպասելու, տղերքի հետ ներս մտավ խրճիթ։

— Ազիդ ջան, եդ խի յես կզնվում. լուսը քեզ վիրտեղից տամ, մատներս խո չեմ բերի առջեղ վառի։ Ես քանի ամիս ա մենք նավթի յերես տեսնում ենք... նավթը են ա բալշեիկների ձեռին։ Ես մեր կտորվածքը բալշեկի հետ ինազի յեն ընկել ու նրա հետ կովում են, բա նա մեզ նավթ կտա։

— Զենդ կտրի, քավթառ շուն, դուն եյիր մա-

ցել մեզ վրա հաջելու, — զոռաց նա խոսկոտ ձայնով ու
աջ ձեռքով գորշագույն փափախն աչքերից վեր բարձա-
րացրեց:

— Զեմողաններիս մեջ մոմ կա, բեր ու վասի, —
դիմեց նա տղերքից մեկին՝ Սրբոյին ու ապա ավելաց-
րեց. — Սրբոյին ել ասա տղերանց տնեատուն անի, աե-
րեց:

Պառավը վոչինչ չհասկացավ... նա բաց զոան շեմ-
քին քարացած եր մնացեր. Գիշեր... չորս բոլոր անա-
պատային լուսթյուն... զինված անկոչ հյուրեր:

Նա փորձեց գուշակել այս անսախորժ հյուրերի
անժամանակ գալու նպատակն ու հետեանքը, բայց ի
զուրբ... Նրա միաքը ավելի թույլ եր, ավելի աղոտ, քան
այն մոմի լույսը, գորն իր զողովնուն, շնկ լեզվակով
հաղիվ լուսավորում եր պառավի աղքատիկ խրճիթը.

Խմբապետը հանեց վրայի գենքերը, բարձրացավ
թախտի վրա, մութաքի վրա փաշայի պես բազմեց ու
թիկնապահներից ուտելու բան պահանջեց: Իսկույն
վրավից նրա առջև մի սպիտակ սփոռց, վորի մեջ փա-
ռովեց եր մի քանի յեփած հագ, ձու, պանիր ու մի
թաթած եր մի քանի յեփած հագ, ձու, պանիր ու մի
լավաշի կտոր: Խմբապետն առանց յերկար սպա-
քանի լավաշի կտոր, հավի մսի մի փափուկ կտոր փաթաթեց լավա-
սելու, հավի մսի մի փափուկ կտոր փաթաթեց լավա-
շի մեջ, յերշիկի ձև տվեց, աջ ձեռքով բերանը տարավ
ձի մեջ, ծամեր սկսեց յերկու որ հացի յերես չտեսած
ու կծեց. ծամեր սկսեց յերկու որ հացի յերես չտեսած
մարդու ախորժակով: Պատին ընկած յերերուն ստվե-
րում պարզ ու վորոշ զրագրվում էյին նրա կզակի և
ձիդ ու սրածայր բեղի անհամաշափ շարժումները:

— Մեռլի խայը մեղի հեջ չի ըսի պատառմ խայ

ալ զուք կերեր, — տրտունջով շնչաց Սրբոն մյուս
թիկնապահի Մելիքի ականջին, յերբ սրանք, յերկուան
ել վասքի կանգնած, սպասավորում եյին նրան:

Պատի տակ սավերի պես կանգնած Զանանի թը-
քի գեղձերը գործի անցան հենց այն պահից, յերբ
սփոցն իր միջի բարիքներով հրապարակ յեկավ:

— Այ պառավ, հայ ես, յեկ թիքա վերցրու, —
դիմեց խմբապետը Զանանին, առանց նրան նայելու:

Բայց պառավը կարսղ եր մոտեհալ հացին, շատ ել
սիրան ուզում եր: Նա զգում եր, վոր քանի գնում, կո-
կորդը նեղանում ե, սարսափի մի ուրվական կրծքում
բուն զրած, կարծեա, ուզում եր շնչահեղձ անել նրան:

— Յես կուշտ եմ, այ բալա, — մտմտաց պահավը
հաղիվ լսելի ձայնով, — յիս իմ գարզով եմ կշտացել:

Խմբապետն իսկի ել չլսեց նրա մտմտոցը: Նա
ծամում ու ծամում եր: Դրսիք բարձրացրեց միայն
այն ժամանակ, յերբ Մելիքը հրամցրեց «Արարատ»
կոնյակի փոքրիկ գավաթը:

— Լավաշը պարպավ, — անսպասելի հայտարարեց
կարձահասակ ու խոժոռադեմ Սրբոն:

— Հաց կունենաս, տուր, այ պառավ, — դիմեց
խմբապետը Զանանին:

— Աբա, դե վոր ասեմ հաց չունենք, հավատալ
չպահք: Հացն ուր ա, այ վորդի:

Խմբապետը Պանկարծ գլուխը բարձրացրեց, հա-
յացքն ուզգեց զեպի պառամը ու վրա բերեց.

— Բա զուք ի՞նչ եք ուտում:

— Ե՛ վորդի, հացը վոր մենք ուտենք, բա զուք
ի՞նչ ուտեք:

Պառավի այս հանդուզն պատասխանը վոչ միայն

դուր չեկավ Մուրագին, այլ և տեղի տվեց մի անորոշ
կասկածի:

— Մարդ մւր ե,—դիմեց նա պառավին:

— Են ա, են հողի տակը, —ու մի ծանր թառանչ

գուրս թռավ նրա կրծքի խորքից:

— Վորդի չունեմ...

— Խի չի ունեմ... աղջիկս հրես ըստեղ ա, ինձ
հետ, նեղ որից տրորվում, տղես ել... տղես ել, են ա
գնացած ա կովի:

Նազոն, վոր մինչ այդ գլուխը վերմակի տակից
քիչ հանած աչքի տակով հետևում եր անկոչ հյուրե-
քին, գլուխն իսկույն նորից քաշեց վերմակի տակ,
հենց վոր մայրը հիշեց իր մասին:

— Գնացած ե կովի համ... մերոնց կողմն ե, թե
կրասնի բաշիրովուկների:

— Դե յես ինչ գիշամ, այ բալամ: Յես եղքանը
հասկանում եմ: Յես մենակ են գիշամ, վոր սարի պես
տղես ջանիցս պոկիել ու գնացել ա, վոչ եղը կա, վոչ
թողը... —ու յերկու արցունքի կաթիլ կուչ յեկած աշ-
քերից պոկ ընկած, սրբնթաց գուրվեցին այտերի խոր-
շոմների վրայով ու նրա դեմքին յերկու փայլիլուն
շերտ թողին:

Դուրսը ձյունը վաղուց եր դադարել ու կապույ-
տում լուսինը քաշում եր իր հերթական կիսաշրջանը:
Էղարիկ շունը մի անգամ ես:

— Միթամ իմ դարդն ինձ հերիք չի, —շարունա-
կեց պառավը նազոյի անկողնի կողքին տեղափորվե-
լով, —երեքի ել յերկու անգամ յեկել են տունս շուռ
ու մուռ տվել թե՝ «տղիդ տեղն ասա, թե չե որ ու ա-
բու չենք տա»: Ա՛ տերամեռներ, տղես են ա կովի ա-

ելի. տեղը վոր իմանամ, ել մւր եմ եսքան երվում ու
խորվում:

Ու պառավը բարձրացրեց էր բազմագույն կտոր-
ներից լաթած զրջազգեստի ծայրը, մոտեցրեց աչքերին
ու արցունքի կաթիլները սրբեց:

Պառավի այս միամիտ խոստովանությունը սլա-
քի ույժով խոցեց Մուրագին: Կասկածը հորդեց նրա
ուղեղում, գալարվեց գանգի խոռոչում ու նրա կապ-
տագուն կտագի աչքերում առկայծեց վրեժի թույնը:

— Հը... հիմի յեմ հասկանում, թե զու ի՞նչի
եյիր ինձ հետ եղան հանդուզն շան լեզվով խոսում:
— մոնչաց Մուրագը, կատաղի առյօւծի պես ատամնե-
րը կրճատացնելով: Տղադ բալշենիկ ա համ... յես քեզ բար-
ձիկ ցույց կտամ, քավթառ շուն:

Նա մատի մի նշանով իր մոտ կանչեց Մրգոյին
ու շնչաց:

— «Ծախիր»:

Այդ բառի իմաստը շատ լավ եր ծանոթ Մրգոյին:
Հինգ բողե անց, պառավը անհայտացավ:

* *

Մուրագը գեռ շարունակում եր վորոճալ ու կո-
սյակի գավաթները դատարկել: Վոգելից խմիչը նրա
մարմնին տվել եր մի գուրեկան ջերմություն: Նա նըն-
ջել եր ուղում:

Տղերքը նկատեցին այդ:

Մեկը բռնեց սփոռցի ծայրերից, քաշեց մի կողմ,
իսկ մյուսը շտկեց մութաքան, վորպեսպի Մուրագը
պառկի, քուն մանի:

Մոմը մարեց: Խրճիթը լցվեց թանձը մութով:

Մինչ խմբապետը տեղում շուռ ու մուռ կգար, տղաւներն իրենք նստեցին հացի: Հավի մսացորդի ախորժալատաներով տարգած ու հրապուրիչ կոնյակով զինովցած, նրանք քնակ չնկատեցին, թե ինչպես մի ստվեր կատվի զգուշությամբ պատի տակից սահելով, բաց դոնից դուրս սողոսկեց:

Քունը յերկար ժամանակ չեր կարողանում հաղթել Մուրադին: Զարթել եր նրա մեջ անասունը: Կրքի մի տաք հոսանք անհանգստացնում եր նրան:

— Աղջիկ... աղջիկ գտեք ինձի...—մըթմըթաց նա աչքերը բացելով:

— Մուրադ աղա, աղջիկը քովդ ե, ել ի՞նչ կուռես,—փսխաց նրա ականջին Սրբոն:

— Բերեք, բերեք տեսնեմ,—հաղիով լեզուն դարձնելով, փնթինթաց նա ու դառնալով դեպի ձախ կողմը, կարծես, պատրաստվեց աղջկան ընդունելու:

Սրբոն մութ սենյակի մեջ խարխափելով շարժվեց դեպի նազոն, բայց...

Աղջիկը չկար:

— Մեռլի լաճը դժուը թուավ,—մըթմըթաց նա ինքըն իրեն ու սկսեց շրջափել բաց անկողնու շուրջը:

Աղջկա անհայտացումը յերազ թվաց նրան,

— Աղջիկ, աղջիկ բերեք ինձի,—խոպս ձայնով կրկնեց Մուրադն ու դարձավ հակառակ կողմը և ձախ թաթով, կարծես, ուզեց գրկել մի ինչ վոր բան, վոր մտել եր կողքն ու հաճելի տաքություն եր հազորում: Նա ցնցվեց, յերբ սենյակը լցվեց կատվի անդուր ճվառի: Կատուն ճանկուեց նրա հաստիկ ու ծանր թաշով: Կերպ նա ընկել եր իմ կմաղքացած մարմնի վրա:

— Ու յես քու հավատը... ու Մուրադը փողոցային մի հայրոյանք շպրտեց կատվի հասցեյին:

Մուրադը նորից փորձեց քուն մանել: Զաջողվեց: Կանացի քնաքույշ մարմնի տաք բույրից արբելու տեսչը նորից մեխակց նրա զիկում:

Իսկ Սրբոն այդ բանը լավ եր հասկանում: Նա լավ գիտեր Մուրադ աղայի ընավորությունն ու պահանջները: Նա, հու շան պես, գիտեր և իր աղայի պահանջների մասին հոգաբ:

Մի միտք առկայծեց նրա ուղեղում ու նա արագ գուրս թռավ սենյակից, քայլեց ձյան վրա նշամարվող փոքրիկ վոտքերի հետքերով:

Լուսինն ասես, զողառով ժամանում եր ու լողում անսահման կապույտում: Ողը սատն եր, ոլաքի պես խայթող: Հեռվում, սայլերի ինչ վոր ճռոց խախտում եր դաշտերի գիշերային հանգիստը:

**

Գյուղի ծայրին, փայտաշեն մի խրճիթում խորքնի միջ եյին Մուրադի հոգնած խմբի տղաներից մի քանի մեջ կողմանը նրանցից մեկը՝ Սարգսիսը շատ եր անհանգիստ:

Մենակ նա պառկեց փամփշտակաները կրծքին ու ամենից շուտ աչքերը փակեց: Բայց չքննեց: Նա ավելի շուտ քնած ձևացրեց իրեն: Հոգեկան ալեկոծության ու հուզումի մի ալիք պարուրել եր նրա ներքինը:

Յերբ խրճիթում շարժումը դադարեց ու բոլորը քուն մտան, նա, զգույշ գլուխը վեր բարձրացրեց, դիմումը:

տեց իր շուրջը, կամացուկ յելավ տեղից, հրացանը
ձեռքն առավ ու անշշուկ խրճից դռւրս գնաց:

Գյուղի ծայրից քիչ հեռու, փոքրիկ ձորագլխին
բազմած հաստարուն կաղնու տակ մի ստվեր եր յե-
րեռմ:

Սարդիսն եր այն:

Ցլտից նեղված, նա մեկ ձեռքերն եր իրար շը-
փում, մերթ վոտքերն եր արագաւարագ բարձրացնում,
մերթ ուղղում եր ձախ ուսովը զցած հրացանը:

— Ինչու ուշացավ, — մտածեց նա ու աչքերն ուղ-
ղեց դեպի մշուշոտ հորիզոնը: Ծանը խոներն անինի
պես արագ գլորվեցին նրա ուղեղում: Ասես, հենց մըտ-
քերի ծանրությունից նրա լայն ճակատին ցոլցին
քրտնքի սառը կաթիներ:

Ողն արձակ ծանրություն ուներ: Աքաղաղները
հոգնեցին մոտալուտ ծեզն ավետելուց, բայց նա դեռ
ևս չկար...

Ի՞նչ անի Սարդիսը: Ելի՞ սպասի, թե ինքն առաջ
պնա: Բովեները թանգ են, տեղեկություններն ել ա-
վելի արժեքավոր:

— Զի՞նի բունվեց, — մտածեց նա ու խորաթափանց
աչքերը նորից սեեւեց հեռուն: Բայց ու ընդարձակ
դաշտում, ճերմակ ձյունի վրա սկին ամեն մի
թուփի, ամեն մի բիծ թվում եր նրան շարժող եակ,
վորը շնչառպառ, գաղտագողի գալիս, մոտենում ե իրեն
ու տեղեկություններ պահանջում: Ինչքան, ինչքան
լուր ունի հայորդելու: Ինչքան գառնություն ու ատե-
լություն կա զեպի դաշնակ խմբավարները: Զի՞ վոր
նրանց ստեղծած արյան բաղանիքը խեղում ե ամեն-
քին, ամենքին: Ու ամենքը կելնեն նրանց դեմ, մենակ

թե՝ բալշեիկն ոգնի իրենց: Այդպէս ասին Միոն, Սե-
թոն, Սմբաթը, Աւանանը: Ել ով, ել ով այդպէս չասեց:
Ո՛, յեթե շուտ հասնի նա, — ու մտազբաղ, Սարգիսը
նորից շիեց ձեռքերն ու նորից գոփեց գետինը:

— Արդյոք չեն նկատի ինձ, — մի պահ մտածեց
նա ու ավելի կծկվեց, կպավ ծառին, վոր ձուլվի ծառի
ֆոնի մեջ ու դառնա աննկատ:

Հարևան ձորամիջից դուրս սահեց մի ստվեր և
ուղղվեց զեպի կաղնի ծառը:

— Նա յե, նա, — շշնջաց Սարդիսն ինքն իրեն:
Անսահման ուրախության մի փայլ շողաց զեմքին:
Նորեկը մոտեցավ:

Վահրամն եր, Զանանի տղան: Վարիտ աչքերով ու
լայն թիկունքով մի յերիտասարդ:

Սարդիսն ու Վահրամը սահեցին զեպի ձորը:

— Ի՞նչու ուշացար, — յեղավ առաջին հարցը:

— Յես յեկել եմ ժամանակին, — պատասխանեց
Վահրամը, հազիվ շունչը պահելով:

— Շտապիր վերապանալ ու հայտնել վոր ամեն
ինչ պատրաստ ե խմբավետների ավանայուրային վերջ
տալու համար:

— Վերապանալ... այլոս կարիք չկա, — վրա բե-
րեց Վահրամը, — մերոնք գտիս են առանց զիմալըսու-
թյան: Մեզ մնում ե շտապել այստեղ իշխանություն
նախապատրաստել: Շտապինք մեր տուն, ծրագրենք
մեր անելիքը: Շուտով մերոնք կլինեն այստեղ:

* *

Մելիքին իսկի ել դուր չեկավ Սրբոյի արարքը՝

յերբ նա, հերիմ, Նազոյին շալակած բերեց, զցեց Մուռաղի կողքը:

— Հայվան, իդա լաճը մեղք չե՞— շնչաց նա ինքըն իրեն ու թվաց, թե նույնիսկ հայոյեց թե Սըրքոյին և թե Մուռաղին:

Մելիքն ու Սըրքոն գուրս յելան սենյակից:

* *

Լուսաղեմ եր:

Դուրսը չոր ու ճարճատուն ցուրտ:

Գյուղում անսպասելի իրարանցում ընկափ:

Ֆրոնտի ձեղքվելու և բոլշևիկյան զորքի գյուղին մտանալու լուրջ բոլորն եյին առել: Ամենքն իրար աշխանջի ինչ վոր փափացին:

Մուրաղի խմբի տղերքը ցաք ու ցրիվ յեղան: Մենակ Սըրքոն ու Մելիքը Մուռաղի յետեկց ընկած, փախան անհայտ ուղղությամբ: Վարեղից, հայտնի չե, բայց Սըրքոյի ձիու վրա, խուրջինում, վեց հատ թանգին խալիչա կար ճիտած:

Յերբ Սարգիսն ու Վահրամը գյուղ մտան, նրանք գյուղում կարմիր դրոշակներ տեսան, իսկ կալամիջում հետզհետե խմբվող ամբոխ: Անընդհատ արհապիրքներից ծեծկող գյուղը սրտատրոփ պատրաստվում եր բոլշևիկներին հանդիսավոր ընդունելություն ցույց տալու և ապա միտինդի:

Առաջին ճառը Վահրամինն եր, գյուղի նորընտիր ուկոմի նախագահինը:

— Հերիք ինչքան լողացինք արյան ծովի մեջ: Թող կորչեն քյալագյող դաշնակները: Կեցցե ազգերի

համերաշխությունն ու Ռուսաստանի հեղափոխական բանվորությունը:

Հազիվ վերջացրեց հուզված Վահրամն իր վերջին խոսքերը, յերբ ամբոխի միջից մի ձայն կանչեց դառնագին:

— Ախպեր ջան, ազիդ ջան,—ու լացակումած, ամբոխը ձեղքելով, վազեց դեպի Վահրամը:

Նազոն եր:

Կարսոտ գրկվեցին քույր ու յեղբայր: Նազոն արցունք եր թափում աչքերից: Համբուրլեցին նրանք այնքան կարսոտ, այնքան խանդադատանքով: Դեռ վոչ մի համբույր այդքան քաղցրություն, այդքան ջերմություն չեր պարունակել իր մեջ: Նազոն կարծեալ պատրաստվեց մի բան առելու յեղբորը, բայց ամաչեց ու նույնիսկ վախեց:

Միտինդը դեռ շարունակվում եր:

Կարմիր դրոշները ծածանվում եյին ու ժպտում կարմիր սկզբանդի մեջ բազմած հորիզոնում յելնող արկին:



四〇二六

Գարնան ջերմաշունչ ու արեկող որերն սկսվում եյին թե չե՝ «Հոկտեմբեր» կոլխոզի վարչության գրասենյակի նեղիկի դուռն ափելի հաճախակի յեր բաց ու խուփ լինում: Արվա ընթացքում հազար մարդ եր ներս ու դուրս անում, հազար տեսակ խնդրավ ու դիմումներով մոտենում կրիխողի նախագահ Պետիկին ու լուծում պահանջում: Պատահում եր, վոր գրասենյակում հավաքվում եյին նաև վարչության հետ գործ չունեցող մարդիկ ու գրասենյակը վեր ածում գրուցավայրի: Գրասենյակում յերբեմն այնպիսի աղմուկ եր բարձրանում, վոր Պետիկն իր առջև թափած թղթերը կարգում, կարգում ու բան չեր հասկանում: Նման գեղքերում նա հաճախ գլուխը դնում եր սեղանին ղեմ աըմ պահ թերեին, բութ մատներով ականջները խցանում եր ու հայացքը գցում առջեկ թղթին: Այդպես եր անում նա, յեր պատրաստվում եր զեկուցելու այս կամային նիստում, կամ արտակարգ ժողովում:

Քոքոր ամին ու Փանոս ապին կոլխոզի գրասենյակի անդավաճան այցելուներն եյին։ Յերկուսն ել տարիքավոր մարդ, յերկուսն ել խոռը ու զրիցի սիրահար ու չիբխի ծխին զոռ տվող։ Յեթե ուրիշ ծխող մարդ ել ներս չմտներ, են յերկուսն ել բավական

Եյին, վորպեսդի ծխի մի թանձը շերտ ամպի նման
բռներ գրասենյակն ու ուղղ դարձներ հեղձուցիչ:
Քոքոր ամին, վոր 60 տարուց անց մարդ եր ու
վորի գլխին հասակն արդեն ճերմակ ձյուն եր սփոխը
կոլխոզի վարչության կուրյերն եր: Խակ Փանոս ապին՝
նրա ոգնականը, մի տեսակ կամավոր կուրյեր:
Զառամյալ հասակը նկատի ունենալով, Պետիկն
եր հորը — Փանոս ապուն թույլ չեր տալիս աշխատ-
աել բայց նա անջործ մնալ չեր կարու Գործ անելը
Փանոս ապուն ենքան եր պետք, ինչքան շերուիլը
սրա գնչին, վորը կաբծես նրա մարմնի անբաժան մա-
սը լիներ:

Դեպք եր լինում, յերբ Պետիկը խնդրում ու քոր ամուս ես կամ են կոլլոգնիկին զբասենյալ կանչել: Մինչև Քորը անքցով տեղից կշարժվեր, Փառապիտին առաջ եր ընկնում ու ինքը վագում կոլխոզնիկի յետեից: Այս հաճամանքը մի տեսակ փոխողնիկի յետեից:

Խոսելու ու զրից անհեռու նյութ սրամք ու շաբաթին Աւրիշը կատարեց առաջին առաջարկը՝ կուլտովի լծկանի սպառագիտության առաջարկը կատարեց առաջին առաջարկը՝ կուլտովի լծկանի սպառագիտության առաջարկը՝ կուլտովի լծկանի սպառագիտության առաջարկը՝

— Ավել չեմ ասում, Քողոր չամ, — ու հաճախ հաճախ Փանոս ապին նրան, չիրուխը դնչից հանելով,
ապին պետք չի մի չորս-հինգ լուծ յեզն ել զոր
— ապին պետք չի մի չորս-հինգ լուծ յեզն ել զոր
— կոյի կոյի բանը թամամ կդպի:

— Զան սաղութին ասա, Փանոս ապեր, Հան սաւ-
դութին, — վրա յեր բերում սովորաբար Քոքոր ամիս

ու մասի աջ թաթով սրում ճերմակ ու թանձր բեղերը. — ջան սաղութին վոր ըլի, ամեն բան ել կրպի: Աշխարհն նարգևան ա, եղ գու ինձանից լավ գիտաս, մեկը վոր կըարձրանա, մեկելը ցած կիջնի: Մինչկի որս գեղի քյասիքները կորչում եյին վոտի տակը, ու նորներն ին վեր բարձրանում, հիմի, վառք իմ աստըծուն, բարձրանալու ճերթը քյասիքներինն ա...

Ու յերկու ծերունիներն ել իրենց դատողությունները մի հայտարարի բերելով, իրար հետ համաձայնության գալով, խոսքը մեկ ել շուռ եյին տալիս գեղի գեղի անց ու գարձը, մեծն ու փոքրը և, ստեղծված գրությունը ծանը ու թեթև անելուց հետո, գալիս եյին այն յեղակացության, վոր կոլխոզի «վերջը բարի ա ըլելու»:

* * *

Գրասենյակ-խրճիթում անհարթ ու մոխրագույն սեղանի վրա գրված լամպի լույսն աղոտ ստվերներ և փոել գորշագույն պատերին: Լամպի շուրջը խմբին են աշխատանքից կշտացած, բայց հետագա աշխատանքների համար գեռ թարմություն պահպանած առույդ ու խոհերով լի բրոնզեգույն դեմքեր:

Կոլխոզի վարչության անդամներն ու ակտիվնեն, յեկել են վարչության ճերթական նիստին:

Ճիւտած գլխարկը ծուռը գրած, նստած ե կոլխոզի նախադահ Պետրիը, գլուխը թեքած իր առջև թափած թղթերի վրա. թերթում և նա անհանգիստ մեկը մյուսի յետերց մեծ ու փոքր թղթերը, նորից յետ ու առաջ շուռ ու մուռ տալիս ու մատիտով ինչ-վոր թը-

վեր գրի առնում կարմրագույն փոքրիկ ծոցատեաւրում:

Թեթև, բայց անդուր ճուղով բացվում ե դուռը և մեկը մյուսի յետերց գալիս են և վարչության ու շացած անդամները:

Մինչև ժողովի բացելը, ասուլիսի ձեռվ, արգենծեծվում են որվա հրատավ հարցերն ու վորոշ ձեած կերպում ստանում, բայց վորոշումը մնում է ողում, մարդկանց ուղեղներում:

— Ե՞ն, ա-անպետք մարդիկ ենք, ա-անպետք, — բողոքող ձայնը բարձրացրեց բրիգագավար Սերգոն, մոայլ տեսքով, դեմքը չեչոտ, գլխի նոսր ու հարթ մազերը յետ զցած մի միջահասակ մարդ, վորը խոսելիս մի քիչ կակաղում եր:

Նրա տոնի մեջ և՛ հուղմունքի, և՛ մի տեսակ դառնության շեշտ կար:

— Ե-եսոր 15 հոգուց ուշութ հոգի եյին յեկել սարը խոտ հավաքելու, — շարունակեց նա. — Ին, փոել գորշագույն պատերին: Լամպի շնչումը կամ մարդինչ անես, ինչ ասես եղ մարդկանց... քիչ ել մարդինչ անես, ինչ ասես եղ մարդկանց... գուր բեյինումը պատի ըլի. մարդիկ չեն հա-հականում, վոր իսու-խոտահավաքի յետ դցէլը կոլխոզի տունը քաշանդել ա նշանակում:

Ու նա աջ ձեռքում բոնած ճիւպոտի ծայրը հատակին շինուի, ինչ-վոր անորոշ գիծ գծեց:

— Անցյալ տարի յել սարի խոտը ժամանակին հնձեցինք, ինչ ելավ, բերիք, տունն հասցըլք, — վրա բերեց խանձված ձենով Աղաջանը, 40 տարուն մոտ մի բարձրահասակ մարդ, վորի ատամները սնկիտակին եյին տալիս թույլ լուսավորված սենյակում:

Սերգոն նատած տեղում բարկությունից ատամ-

ներն իրար քսեց ու ջղայնությունից կարծես թևելը
դնելու տեղ չգտավ:

— Մեղավորն ով ա, մեմեղավորը, — զողողաւ-
ցող ձայնով ընդհատեց նա, — մեղավորը յեշես եմ,
թե՞ ուռ:

— Վոչ յես եմ, վոչ ել ուռ, — մի տեսակ տեղի
տալով պատասխանեց Աղաջանը, — մեղավորն ամբողջ
վարչությունն ա, ւաշչությունը...

Վարչության մի անդամն ել ուռ, — տեղից
վրա բերեց կոմյերիտ Վաղինակը, վորը մինչ այդ
փոքրիկ լուսամուտի մոտ նստած, արմաններ կոթնել
եր լուսամուտի հատակին ու լուռ հետեւմ եր խոսակ-
ցությանը:

— Ե՛, վարչությունն ի՞նչ գլուխը քարովը տա,
վոր կոլխոզը լծկանի պակասութին ունենա, — ար-
դարացրեց վարչությանն Աղաջանը:

Նախագահ Պետիկը, վոր մեկն գլուխը կախ եր
գցում թղթերի վրա ու մեկ ել՝ ականջի ծերը խոսող-
ների կողման անում, հանկարծ գլուխը վեր բարձրաց-
րեց ու մատիտի ծայրը սեղանին խփելով, ժողովը
բացված հայտարարեց:

— Տղերք, շատ եք զուր տաքանում, — ինքնա-
վստահ ու իր խոսքի ուժն զգացողի առնով սկսեց նա-
խագահ Պետիկը, վորի կապույտ աչքերը լամպի լույսի
տակ փայլվեցին, աչքեր, վորոնք կարծես հոգսերի
կապույտ ծով լինելին: — Յես կարծում եմ՝ ել իդուր
ենք սպասում, ժողովը կարող ենք բացված համարել:
Որակարգում մի կարևոր հարց ունենք — դա քարշ
ուժի հարցն ա, — ու նա թղթերը շուռ ու մուռ տա-

լուց հետո, կարմրագույն ծոցագրքույկը ձեռքն առավ
ու վոգեորդած շարունակեց.

— Վերջին յերեք ամսում մեր փոքրիկ կոլխոզը
կանխիկ դրամով 1500 ոռւբլի յեկամուտ առնեցել. ա-
ռաջարկություն կա եղ փողը խարջել քարշի ուժի,
յեղ կամ ձի ձեռք բերելու վրա: Ով ինչ կարծիքի ա,
թող ասի:

— Ավանս տղիք, ավանս, ի՞նչ յեղան յա ձիու
վախտ ա, — տեղից ձայնեց քոսա Միխակը, վորն
իսկի յել ակախիմստ չեր համարվում, բայց բոլոր ժո-
ղովների անբաժան մասնակիցն եր:

— Մեկ ա, քու աչքը եր ավանսով ել չի կշտա-
նա, — հուզված վրա բերեց նախագահ Պետիկը, ԳԵՂ-
խարկն ուղղելով: Բարկությունից նրա ճակատի ուղ-
ղահայց յերակը լարվեց:

— Բա ի՞նչ կհրամայեք, քաղցած մնամ ու ելի
գնամ Սումբաթի վոտներն ընկնեմ, վոր ինձ հաց տամ...

— Կուլակ Սումբաթը չի քեզ հաց տվողը այլ
ուռ ես կոլխոզից հացն ստանում ու նրա վրա ծա-
դու եղ կոլխոզից հացն ստանում ու նրա վրա ծա-
դու եղ քու աղաթն ա, միշտ լաց ըլես ու նորից
խում. եղ քու աղաթն ա, միշտ լաց ըլես ու նորից
հաց պահանջես, — տեղից միջամտեց կոմյերիս Վա-
հագ պահանջես, վորը կոմի պատրաստ աքւուի նման, ասես
ոինակը, վորը կոմի պատրաստ աքւուի նման, ասես

— Տո շուն ու շան... — բարձրաձայն հայհոյե-
լով տեղից վեր թուավ քոսա Միխակը, բոռնցքն ու-
գում ճոճելով, — եղ ատամներդ փշրահան կանեմ, թե
ձենդ կարես վոչ... Տո, լակու, կարմս ասածներդ համ-
տատես...

— Կարամ, բա խի՞ չեմ կարա... մենակ յես չե, ամենքն ել կհաստատեն...

Քոսա Միխակի ատամները բարկությունից դուրս ցցվեցին, աչքերի բբերը կատվի բբերի չափ մեծացան ու հուզմունքից վարի շրթունքն սկսեց անընդհատ դողդողակ:

— Ձան սաղութին ասա, Միխակ, ջան սաղութին, — ծոր տալով մեջ ընկավ Քոքոր ամին, վորը մինչ այդ առանց ձայն-ծպտուն հանելու, չիբուխը բերնին նստել եր շեմքի մոտ ու ականջ եր դնում բոլորի ասածներին. — Ձան սաղութին ասա, թե չե եդ ավանսը կա ու կա... Ի՞նչ ես զուր տեղը քեզ ճղճղատում. մարդ ես, հանգիստ բան ասա, բան հասկացու...

Գրասենյակում մի թեթև իրարանցում առաջ յեկավ: Մի կողմից կոմյերիտ Վաղինակի սուր ակնարկները քոսա Միխակի հասցեյին, մյուս կողմից քոսա Միխակի հավասարակշռությունը կորցնելը, ստեղծեցին մի տեսակ լարված դրություն և ելեկտրակայն հոսանքի պես, ասես, ցցցեցին բոլորին ու բոլորի լեզուն մեկեն բացվեց: Բոլորն ել սկսեցին միաժամանակ խռամել, վոմանք բարձրաձայն, վոմանք պատերի տակ քաշված, կիսաձայն, իրար ականջի փափսալով:

Կոմքչիչի քարտուղար Սամոնը, լայն ճակատով, ցաք ու ցրիվ մավերով թիկնեղ մի տղա՝ մի կողմ քաշեց Վաղինակին ու հարձակվեց նրա վրա.

— Տականկա չունես, տականկա, հազար անգամ ասել եմ քեզ, քիչ համբերություն ունեցի, քու շտապողականությունը միշտ փչացնում ա մեր գործը. թող հլա քիչ ծանր ու թեթև անենք, անենք, թե

թելը վորատեղ ա կտրվում... Թե թագա բան գիգաս, խի՞ չես բա հարցը ֆրակցիում դնում, քննենք...

— Այ, հենց եղ ա ե, հենց եղ ա ե՛ հաշտվողականութինը. մինչև յերբ համբերեք, — հուզված վրա բերեց Վաղինակը, — մինչև յերբ ծանր ու թեթև անեք. սպասում եք կոլխոզը քանդվի, վոր նոր քննեք... Դա ի՞նչ քրիստոնյական մտեցում ա... Ֆրակցիից քոսա Միխակին վ՞որ մեկդ չի ճանաչում, համա չե... բոլորդ ել բերաներդ ջուր եք լցրել:

Սամսոնը լսեց, բայց սրտին առավ. ընկալ մըտածմունքների մեջ:

Մատիտն ու սեղանին դրած պոռւնգը կոտրած ջրի բաժակը զանգի տեղ ծառայեցնելով, նախագահը ժողովականներին կարգի հրավիրեց, բայց «զանգի» ձայնը յերկար ժամանակ կորչում եր տիրող աղմուկի մեջ:

— Իրավացի չի Միխակը, վոր պահանջում ա նոր ավանս բաժանեք — Ժողովում կարգը վերականգնելուց հետո շարունակեց Պետիկը, — ավանան ել աժամանակին արվում ու հացն ել. բայց ես սովեյին մեղ մի ձի այ ես լույսի պես անհրաժեշտ ա, — ասաց նաև մատն ուղղելով զեպի լամպը: — Կոլխոզի խալիը դաշտում ու սարում արեի տակ կուրծք ա տալիս, քափ ու քրտնքի մեջ կորչում, մենք մի ձի ել ա չունենք, վոր հանգավորին յա ճաշ հասցնի, յա ջուր: Անցյալ տարի ահագին խոտ ու հաց կորցրինք, դաշտից կարացինք վոչ տուն հասցնել լծկանի պակասության պատճառով, բա ես ատրի ել ա սրա առաջն առնել չպահնք. Եսոր ձի կառնենք, վաղն ել յերբ վոր

կոլիողի մեջը քիչ ել պնդանա, լծկանների մասին կմտածենք:

Փողովականները բոլորն ել ականջ դառած լսում ու գեմքի արտահայտություններով հավանություն եյին տալիս Պետիկի արտահայտած մտքերին:

— Հարցը պատարգ ա, քվեարկիր, — տեղից ձայնեց բրիգադավար Սերգոն:

Գրասենյակում լսվեցին համաձայնության բացականչություններ:

Զի գնելու առաջարկն անցավ միաձայն ձեռնապահ միայն Աղաջանն ու քոսա Միխակը:

Կարճահաստիկ, ճուղուր աչքերով, լայն ճակատով յերիտասարդ քարտուղարը արձանազրության «Վորոշեցին» բաժնում գրեց.

1) Կոլիողի կարիքների համար գնել Մարդարանց Մկիչի ձին և

2) Զիու պահպանությունը հանձնել կոլիողնիկ կոնուխ Փիլոսին:

* * *

Թե ինչու վորոշվեց ձի գնել դա հեշտ, եր բացատրել, վորովհետև ձիու անհրաժեշտությունն ու շահավետությունն ամառվագ դաշտային աշխատանքների շրջանում ակնհայտ եր: Զին պետք եր յերկու ուղղությամբ. մեկ՝ դաշտից խոտ, հացահատիկ ու այլ բարիքներ տուն կրելու համար, մեկ ել տապ արեկի տակ դաշտում քրտինք թափող կոլիողնիկներին ճաշ, ջուր և այլ կենսական մթերքներ համար: Բայց թե ինչու ձիու պահպանությունը հանձնվեց կոնուխ Փիլոսին, դա այնքան ել հասկանալի չեր:

Գյուղում ովք եր տեսել վոր Փիլոսը ձիու տեր ձամ ձիապան լինի: Վոչ վոք: Փիլոսին «կոնուխ» մականունը՝ մի կիսամեր խրճիթի, մի յեղան ու վեց թուշման պարտքի հետ միասին, ժառանգություն եր մնացել իր հորից — Արեթնակից, վորը ցարի որերին սալդաթ յեղած ժամանակ նշանակվել եր վաշտապետի ձիապան: Արեթնակը, վորի ընտանիքը գյուղի ամենայետամաց ու չքավոր ընտանիքներից մեկն եր համարվում, կոնուխությունն իր համար մնծ պարծանք եր համարում և ում հետ ել զրից աներ, ինչի մասին ել խոսք բացեր, վերջում պիտի իրեն կոնուխությունը հիշեր:

Արեկի շոյող ջերմության տակ գեղամիջի մեյզանում մարդիկ հավաքված ասենք թէ մասլահաթ են անում ու խոսում յերկու զրկիցին նու, որինակ Մոռությունների ու կիստարանց Սեթոյի միջն տեղի ունեցած թեթև ընդհարման մասին:

— Էսկի իմ կոնուխ ըլած վախտն ել մարդիկ իւրաքան խորթ աչքով չեյին մտիկ անում, վոնց վոր Մոռություն ու Սեթոն, — վրա յեր բերում Արեթնակն այնպիսի առողանությամբ, վոր կարծես նրա կոնուխությունը իր ժամանակաշրջանի համար բնորոշ յերկույթ լիներ: Իր կոնուխ լինելը շեշտելը նրա համար դարձել եր մի տեսակ սովորություն: Այստեղից ել սկիզբ առավ «կոնուխ» Արեթնակը, իսկ նրա մեռնելոց հետո՝ նաև «կոնուխ» Փիլոսը:

* * *

Արեկի բրոնզե շիթերը գունագում, թագնվում եյին լեռների յետեւում:

Սութը համրաքայլ իջնում եր լեռան փեշերին ծվարած դյուզի վրա: Դանդաղ ու վոլորտուն ծխի քուլաներ վեր բարձրացան կտուրներից: անծայրածիլ դաշտերն ու հատ ու կենա ծառերի տերևներն ասեւ մրափեցին մթության մեջ:

Բայց Փիլոսի հոգում արևը յերբեք չեր մարում: Նա ուներ մի արև ել տանը: այդ արևը՝ Սուսամբարն եր, վորին նա սիրում եր անյեղը ու անսահման սիրով:

Դաշտից վերադառնալուց հետո, նա յերբեք ձեռքը ծալած չեր նստում: Նա Սուսամբարի հետ կիսում եր և տանու աշխատանքը:

— Սուսամբար ջան, կժերիդ ջուրը հատել ահա... — հարց եր տալիս նա կնոջը հաճախ ու, առանց պատասխանի սպասելու, կուժն ուսն եր առնում ու շտապում աղբյուրը: Զուրը տուն հասցնելուց հետո, մտածում եր և ցախ ու ցուխի և այլ մանրամունք գործերի մասին:

Այն յերեկո Փիլոսը նստած իրենց խրճիթի շեմքին պատռած մազն եր կարկատում: Ճուղբիկ մի հավկառուց ցցած բակի աղբակույտի մեջ, Փիլոսից հենց մոտիկ ծվարել եր. խեղճը քջուշով տարվել ու ժամանակին չեր կարողացել իր բունը հասնել:

— Մաշիկ ջան, բա եղ խի՞ յես գուսը մնացել, — դիմեց Փիլոսը ճուղբիկ ու իր միակ ձուածան հավին ենպես, վոր կարծես հավը լեզու առած՝ իր վրա բերել են, բայց գործի մեջ իր յեսը, իր նախաճեռնությունը չի ցուցագրել:

Զուածան ճուղբիկ հավը Փիլոսի համար կովկ

արժեք ուներ ու նա խնամում եր նրան անսովոր հոգատարությամբ:

Մաղի կարկատանը Փիլոսը հենց նոր վերջացրած, պատից կախեց ու սովորականի նման ուզեց ուղղվել զեպի կոլխոզի գրասենյակը: ինչ-վոր տեղեւկանք ստանալու, հենց եղ պահին Ասլան ամին, Սուսամբարի հորեղբայրը, վոտը ներս զբեց:

Ասլան ամին պատմեց նրան կոլխոզի գարչության ժողովում տեղի ունեցած անց ու դարձի մասին և այն մասին, վոր Փիլոսին ընտրել են ձիապան:

Փիլոսին եղ լուրը հանկարծակի բերեց, բայց... ճիշտն ասած, քիչ ել շոյեց նրա ինքնասիրությունը:

Փիլոսն իր կյանքում առաջին անգամն եր ընդհանուր ժողովի ուշադրությանն արժանանում ու առաջին անգամն եր ընտրվում:

Փիլոսն աշխատանքից վոչ վախեցող, վոչ ել փախչող մարդ եր: Այդ մասին գիտեյին բոլոր զյուղացիք: Երան բոլորն ել ճանաչում եյին վորպես լավ աշխատող յեզան, վորին ինչ պայմաններում ել լծես իր լուծը կբաշի բարեխզնորեն, բայց գործի մեջ իր յեսը, իր նախաճեռնությունը չի ցուցագրել:

— Ամոթ են մարդի փափախին, վորը գործը վիզ վեր կունի ու չի կատարի, — կրկնում եր նա հաճախ իր կին Սուսամբարին, ընտանեկան խոսակցության ժամանակ: Ու Սուսամբարը, վոր զյուղի ակտիվ կանանցից եր, ամուսնու բնավորության հենց եղ գիծն ել հավանում եր: Փիլոսը կոլխոզ եր մտել Սուսամբարի առաջարկությամբ, թեպետ ինքն ել համոզվել եր կոլխոզի առավելության մեջ իր հարեան Միույթի գործից: Միոն առաջ մի տուն լիքը քյուլփաթին

հազիվ եր հաց հասցնում, հաճախ գալիս, իրենից եր
հաց փոխ ուղում, բայց հիմի, կոլխող մտնելուց հետո՝
նրա տաշտիցը հացը չեր պակասում, կծումէց՝ յեղը:
Փիլոսն են մարդկանցից եր, վորոնք չեն սիրում,
յերբ իրենց սովորական աշխատանքի աշխանակներից
հանում ու նոր աշխատանքի յեն դնում: Չի պահելը
նրա համար նոր աշխատանք եր, նոր ձեի հոգացողու-
թյուն պահանջող — ձիուն թիմարեև մաքրել, ջրել
եր պետք, ինքն այդ աշխատանքին անձանոթ եր:
Այդ հանգամանքը նրան այնքան ել չեր հրապուրում:
— Այ, ինձ տու կով, մի յեզ — մի Շողեր կամ
ծիրան, ընենց պահեմ, վոր քեֆդ գա. ախր ձի պա-
հելն ի՞նչ իմ գործն ա, — մտածում եր նա:

* *

Յերբ Սուսամբարը Փիլոսին կոնուխ ընտրելու
լուրն առավ, ճիշտն ասած՝ մտքում անսահման ուրախա-
լու առաջ նենց եղ եր, վոր Փիլոսը մի
ցավ: Նրա փափագածն ել հենց եղ եր, վոր Փիլոսը մի
քիչ առաջ գնա, մարդամէջ խառնի ու գեղի ակախիվ
սամբարի մարդկանց շարքը դասիվ: Թեև ինքը՝ Սու-
սամբարն ել կիսագրագետ եր և գյուղի գլորցում մի
սովորելով, միայն «ա»-ի և «բ»-ի հետ եր ծա-
տարի սովորելով, միայն «ա»-ի և «բ»-ի հետ եր ծա-
տարի բայց բնականից շատ աշքաբաց և խելա-
կտրուկ եր: Ինչքան ել սիրեր Փիլոսին նրա աշխատա-
կտրուկ եր: Ինչքան ել սիրեր Փիլոսին նրան գուր չեր
սիրության համար, այնուամենայնիվ նրան գուր չեր
գալիս նրա ինքնամփոփվածությունն ու գեղական գոր-
ծերից հեռու մնալը: Ինքն են կանանցից եր, վորոնք
մի վոտն ոջախումն եյին պահում, մյուսը՝ գյուղի պատ-
գամավորական ժողովում: Այդ եր պատճառը, վոր յերբ
Սուսամբարը նկատեց, վոր Փիլոսն ընկել և տատան-

ման մեջ — ընդունել թե չընդունել կոնուխությունը —
իր սովորության համաձայն հարձակվեց նրա վրա: Դեռ իմ
— Դե, հլա մի սրան տես, հլա նազ ել ա անում...
Բա եղքան ել ա հասկանում չես, վոր ըսոր կոնուխու-
թին ա, եղուց նախագահութին կլի: Գնա աշխատի, վոր
մարդ ել ա գառնաս ե...

Սուսամբարի խոսքը Փիլոսի համար որենք եր:
Այս կամ այն հարցը լուծելիս, կարեսը եր, թի ինչ
կասեր Սուսամբարն աչքով ու ունքով: Փիլոսն արդեն
եր հաշիվսերը վերցնում եր:

— Դե յես խո բան չեմ առում, — վրա բներեց Փի-
լոսն են որը նահանջող մարդու տոնով ու, ասես, մի
ծանր քար սրտից վեր կալան ու գինը գրին:

* *

Ամեն առավոտ, դեռ արել լեռների բարձունքնե-
րից գլուխը գուրս չհանած, Փիլոսը շտապում եր գոմ,
շեկիկ ու աղվամազ ձիուն — Զավադին նայելու: Ձիուն
գոմից գուրս եր բերում, գուրսը ծառի մոտ կանգնեց-
սում, մի ճիտ չոր խոտ բերում, առաջը թափում, խեկ
տակը կարգի զցում: Հետո հեծնում եր առանց թամբի
ձիուն, քշում նրան աղբյուրը՝ ջրելու: Քիչ անց՝ ըն-
դիուն, գաղտն պահանձնություն կատարում եր գեղա-
դարձակ դաշտի նեղիկ խճուղիով, սվավան ու գեղնա-
դարձակ դաշտի վոլորապտույտներով խլրտալով, բաշը
վուն արտերի վոլորապտույտներով ու մեկ-մեկ ել փնչացնե-
մեր ու վար թափահարելով ու մեկ-մեկ ել փնչացնե-
մեր վազում եր ձին դեպի դաշտ՝ կոլխողի փոքրիկ
լով՝ վազում եր ձին դեպի դաշտ՝ կոլխողի փոքրիկ
փուրգոնին լծած՝ դաշտում աշխատող կոլխողսիկներին
ջուր, նախաձաշ և այլ անհրաժեշտ պարեն հասցնելու
ջուր, նախաձաշ և այլ անհրաժեշտ պարեն հասցնելու
համար: Ամառվա թեժ արևեն նա որվա մեջ մի քանի

անգամ կտրում, անցնում եր եղ ճամբեն, յետ ու առաջ դառնում, մինչև մութը վրա հասներ, մինչև մայր մըտնող արևի բրոնզե ճառագայթները անլոց կրակ վառելին ծառերի կատարներին ու մինչև վոր հանդավար կոլխոզնիկները դաշտից յետ վերադառնային իրենց տները:

Փիլոսը վաղուց արգեն ընտելացել եր ձիուն ու նրան սիրում եր իր յերեխու պես: Նա նրան կերակրելու, ջրելու և մաքրելու մասին ենքան եր մտածում, ինչքան կմտածեն հարազատի մասին: Ճիշտ ա, կոլխոզի ձին պահում եյին ընդհանուր գոմում, բայց նա ձիու տեղն առանձնացրեց, յերկու անհարթ տախտակով նրան բաժանեց յեզներից, վոր չնի նրանց հետ ընդհարվի ու նրանց հետ շիռում ունենա:

Նախագահ Պետիկն ու ակտիվից շատերը Փիլոսի այդ աշխատանքը տեսնում ու գնահատում եյին, նրան ավելի ակտիվացնելու նպատակով, աշխատում եյին ավելի առաջ քաշել: Մի որ ել նրան ընտրեցին կոլխոզի վերասառուցիչ հանձնաժողովի անդամ:

Փիլոսի առաջ գնալը Սուսամբարին մեծ հրաժանք եր պատճառում: Բայց վրա փոխարեն պասսիվացել եր ինքը՝ Սուսամբարը: Վերջին որերը նա համարյա վոչ մի ժողովի չեր մասնակցում: Նրա պասսիվանալու պատճառը... ընտանիքի այն յերրորդ անդամն եր, վորն աձել ու հասունացել եր Սուսամբարի արգանդում՝ լույաշխարհ գալու համար: Բանի աղատվելու որերը մոտենում եյին, այնքան ավելի յեր վոգերվում Փիլոսը ու անկրկնելի մի ժողով թառ եր լինում նրա հողեւ գույն դեմքին:

— Սուսամբար ջան, արի քեզ ոտպուզ տամ, գնա

քաղաք, քիչ սեյլ արա ու յետ արի, — կես հանաքով, կես լուրջ տոնով առաջարկեց նա մի որ իր կնոջը:

Սուսամբարը, վոր այդ ըսպեյին կուժը ձեռքին ջուր եր բերում աղբրից, քիչ քմծիծաղ տվեց, բայց հասկացավ «ոտպուզ» բառի իմաստը և հավանության նշան արեց:

Հետեւյալ որը Փիլոսը ձիու սանձից բռնած ու ինքն առաջ ընկած, լեռների արահետներով շարժվում եր գեղի յերկաթուղային մոտակա կայարանը, իսկ ձիու յեռեկից հանդարտ քայլում եր Սուսամբարը, շուրերի մի բոխչա ու մի շալ ձեռքն առած:

* *

Դաշտերում յեռում եր կյանքը: Գյուղացիք ոգտավում եյին չոր յեղանակներից, վորպեսզի դաշտային բարիքները շուտ տուն հացնեն, խոտը շուտ դիզեն խրճիթների մոտ ու հացահատիկները շուտ լցնեն ամբարները:

Հեռու, հեռու, կեռ ու մեռ ճանապարհներին, ու ձապտույտ գալարումներով, անդուր ճոճողով զանդադ սահում եյին սայլերը՝ յետ ու առաջ:

Իսկ Փիլոսը՝ սայլերի շարաններին հանդիպելիս, կարծես, յեղների հանդեալ իր ձիու առավելությունն զգալ տալու և իր Զավադի հունարը ցույց տալու նըսպատակով, մորակը ճոճում եր ոգում, մի յերկու յել «յո, յո» անում ու սլանում եր առաջ, իր յետեւութողներով գալարվող սայլերին:

Բայց միտքը թոշում եր քաղաք՝ Սուսամբարի ու յերկար, շատ յերկար սպասած հյուրի մոտ, վորը գեռ չկար, բայց պիտի գար...

Սաքերի հետմից ընկնելով, Փիլոսը բաց գաշտում յերենն փորձում եր գուշակել, թէ յեկողը տղա յելինելու, թէ աղջիկ. փորձում եր նույնիսկ պատկերացնել նրա դեմքը—հորն ե նման լինելու, թէ մորը... Պայծառ լաղուրում լողացող փոքրիկ ամպի կտորի նըման նրա ուղեղում յերենն լողում եր և մի մուլթ միաք, թէ կարող ե յեկողը կենդանի չգալ... ու խճափում եյին նրա մաքի թելերն այնքան, վոր նա չեր նկատում, թէ ինչպես Զավարը գանգաղեցրել ե քայլերն ու շեղել ճամբան: Պատահական անցորդի բարեկից կամ խորդ ու բորդ տեղի հանդիպելուց նա հանկարծ սթափվում եր, զուրս եր թոշում փուրգոնից ու ձիու սանձից բռնած, քաշում նրան, յետ եր դարձնում դեպի են ճամբեն, վորտեղից պիտի գնար:

Սուսամբարի բացակայության ծրդ որն եր: Փիլոսն անհանդիսա ու մի ամաչոտ ուրախություն գենքին ֆուրգոնը բերեց, կանգնեցրեց կոլխոզի գրասենյակի շեմքին:

— Ընկեր Պետիկ,—զիմնց նա անվճական ձայնով կոլխոզի նախագահին, չիմանալով ինչից ու ինչպես սկսել.—ինձ մի յերկու որով ազատիլ պահք...քաղաք պտեմ գնար:

— Հը, կարոտդ տհենց շուտ բռնեց... իմացա, իմացա փորիդ ցավը,—կատակեց Պետիկը, ձեռքը նրա ուսիրն խիելով.—առանց Սուսամբարի չես կարում դիմանաս ելի...

— Չե, Սուսամբարը չի բանը,—տղամարդուն վոչ սազական ամոթիածությամբ վրա բերեց Փիլոսը,— բանը երեխեն ա, վոր ըլել ա, ուզում եմ դնամ, տեսնամ ու վեր ունեմ, հետս տուն բերեմ:

Պետիկի համար հարցը պարզ եր: Նա կարգադրեց ձին ու ֆուրգոնը մի յերկու որով հանձնել կոլխոզնիկ քոսա Միխակին, մինչև Փիլոսի վերադարձը:

Քոսա Միխակը, ճիշտն ասած, կոլխոզնիկների մեջ այնքան ել լավ համբավ չուներ: Նրան բոլորն ել ճանաչում եյին իր գջողի, իր նախկին մարդկանց աղղեցության տակ ընկած մարդու, վորը մի վոտը միշտ կուլակների կողմն եր պահում:

Եերբ Փիլոսը ձին քոսա Միխակին հանձնելու կարգադրությունն ստացավ, մի քիչ վարանեց, ուզեց առարկել բայց... զսպեց իրեն, վորովհետեւ մի կողմից՝ կոլխոզում ազատ մարդ չկաք, մյուս կողմից՝ քաղաք գնալու ցանկությունը շատ եր ուժեղ:

* *

Գիշերն իր խոնավ թեկը փոեց գյուղի վրա: Լեռների հովը սուրաց խրճիթների վրայով: Կյանքը՝ ասես՝ դադարեց դաշտերում ու գյուղի ծուռ ու մուռ փողցներում, բայց խրճիթներում դեռ ազոտ ճրագներ կային ու հանդարտ զրույցներ՝ միացող ոչախների շուրջը:

Կոլխոզի բրիգադիրները զրասենյակում նստած՝ հաշվետարի հետ միասին՝ որվա ընթացքում կատարած աշխատանքի հաշվառքն եյին կազմում, իսկ այդ նույն պահին, գիշերային անթափանց մթության մեջ կոլխոզի գոմի տախտակամած գուռը թույլ ճռոցով բացվեց և մեջքը թեքած մի մարդ յելավ՝ բեռը ուսին: Մարդն ուղղվեց գեպի քոսա Միխակենց ողան, վորն այնքան ել հեռու չեր գտնվում ու մի ակնթարթում անհայտացավ:

Աղա, եղ իմ եղքան յեղացար,—լսվեց մի շնորհ:
Քիչ անց լսվեց նաև ինչ-վոր իշխոց:

Երջապատի գորշ մթության մեջ սրատես աչքն անգամ հազիվ կնշմարեր, թե ինչպես ողայից յեղավ մեկը՝ նորից բեռն ուսին ու թեքվեց գեպի ողայի յետեւ կածանանման փողոցը:

Յելնողը կուլակ Սումբաթն եր:

Յելնող որ շարունակ կրկնվում եյին գիշերային այդ հանդիպումները գոմում, յերեք որ շարունակ լըսովում եր նույն խշցոցն ու ձիու բաժին գարին քոստ Միխակի միջոցավ ընկնում կուլակ Սումբաթի ձեռքը:

— Կոլխողից ինչ վոր պոկ տաս, են ա քու խերը, թե չե մեկ ա, զու ընդեղ որ ու արև տեսնելու չես, — այդպես եր համոզել նրան կուլակ Սումբաթը ու ձիու բաժին գարին ձեռիցն առել:

Փիլոսի քաղաք մեկնելուց հետո, ձին համարյա անուշագրության եր մատնվեր, որեցոր հյուծվում ու մաշվում եր կերի պակասությունից և թուլացնում աշխատանքի թափը:

Մի որ ել յեղավ այնպես, վոր քոստ Միխակը, ամբողջ որն աշխատեցնելուց հետո, քափ ու քրտինքի մեջ կորած ձիուն ջուր տվեց ու ձին հիվանդացավ քյափանակ հիվանդությամբ:

Քոստ Միխակը յերկու որ ձիուն հանգիստ տվեց, աշխատանքի դուրս չըերեց, վորպեսզի կազդուրվի, բայց յերբորդ որը ձին արդին նորից վազում եր դաշտում թուլաթափ, փնչալով ու բերանից փրփուր թափելով, մինչև վոր Փիլոսն յեկալ քաղաքից:

**

Փիլոսենց տանը մանկական արտասովոր ճիշեր լսվեցին: Փոքրիկի շուրջը պառույտ-պտույտ եյին անում Սուսամբարն ու Փիլոսը և հոգեկան անդուսպ հաճույք զգում: Փիլոսը հաճախ կանգնում եր յերեխայի մոտ, նայում նրան անհագուրդ յերբեմն նույնիսկ ոգնում եր Սուսամբարին փալասների մեջ յերեխային փաթաթելիս: Բայց հնաց վոր մայրը պատրաստվում եր յերեխային կերակրելու, Փիլոսը հիշում եր, վոր յերեխայի նման մի ուրիշ եյակ ել իրեն և սպասում գոմում, վորը նույնպես ուրիշի ողնության կարիքն ունի: Այդպիսի մոմենտներին նա շատ զգուշությամբ համբուրում եր իր փոքրիկին ու շտապում գոմ:

**

Ամառվա թեժ որերից մեկն եր: Արեի այրող ճառագայթներն ամենուրեք փոված, ասես, կանաչներ եյին փնտում խանձելու համար:

Խոտհարքի յեռուն շրջանն եր: Կոլխոզի մարդիկ շտապում եյին որ առաջ հնձել խոտը, տուն հասցնել խրճիթների առջել զիղել, անասուններին որ առաջ ապահովել ձմեռվա կերով, վորպեսզի անցած տարվա պատմությունը չկըկավի:

Փիլոսը փուրգոնին նատած, մաքով խաղում եր իր փոքրիկի հետ, բայց ձեռքով մտրակը ոգում խաղացնելով, քշում եր վոսկրացած ձիուն գեպի հանդը:

Վերին հանգամասի մոտ գտնվող զառիվայրին ձին հանկարծ կանգ առավ: Փիլոսն խկույն ցած թուափ, փուրգոնի ողքից բռնեց, հրեց, յույն արավ, ոգնեց ձիուն, վոր առաջ շարժվի:

Զին յերկարացը կիզը, ճիպերը լարեց, բայց առաջ շարժվել չկարողացավ: Մեկ ել հանկարծ ձին փուփեց գետնին ու վոտերը մեկնեց: Լարված մկաններից ու դուրս ցցված աչքերից ձիու գանգն անսահման վայրագ ու ահալի տեսք եր ընդունել Սեղմլած ծնուաների արանքից դուրս ցցված լեզվի ծայրին փայլում եր սատկող անասունի փրփուրը: Բաց մնացած խոշոր ու ճերմակ ատամները կարծես դժգոհում եյին, թե «տեսանք, ինչ որի հասցը ինձ»:

Փիլոսի դեմքը ահից սպիտակ կտավի գույնը ընդունեց: Նա մի պահ մնաց մեխիված իր տեղում ու չկարողացավ իրին հաշիվ տալ թե ինչ պատահեց: Ձիու մահամերձ ջղաձգումներից ֆուրդոնի մի անիմը ընկավ վոսի մեջ նրա միջին տակառը թեք ընկավ, ջուրն սկսեց ծորալ անընդհատ ու լճակներ դոյցնել: Բայց Փիլոսը դեռ տեղում քարացած մտածում, մտածում երև փորձում եր գտնել ձիու անակնկալ սատկելու պատճառը: Յերբ Փիլոսն սթափվեց՝ գլխի ընկավ, վոր պետք ե ձիու կապերը քանդել

— Բալքի սաղա, — մտածեց նա ու իսկույն գործի անցավ:

Բայց նրա հույսերը չարդարացան: Զին այլևս կենդանության վոչ մի նշան ցույց չտվեց: Նրա սիրատը կծկվեց ցավից: Չե վոր ձին ել մի յերեխա յեր նրա համար: Հոգեկան անոռովոր վայրուվերումներ համակեցին Փիլոսին: Մի պահ նրա աչքի առջև պատկերացան նախագահ Պետիկը, բջիջի քարտուղարը, մյուս բացան նախագահ Պետիկը, վորոնք հաշիվ եյին պահանջելու իւրենից:

— Բա վոր բերդն ել դնեն, — մտածեց նա ու

մարմնով ժի սարսուռ անցավ: Մի պահ նրա աչքերին ուրվագծվեցին մի կողմից Սուսամբարն ու մանավանող փոքրիկը՝ իր թաթիկների ու տոտիկների անհմաստ շարժումներով, սուր և ականջ ծակող ձչյունով, մյուս կողմից՝ բանտը իր անհրապույցը ու սառը 4 պատով:

Յերբ Փիլոսը քիչ ուշքի յեկավ, աչք ածեց իր չորս կողմը, մոտիկ տարածության վրա մարդ չկարստակած ձիուն ու ֆուրդոնը թողեց ձանապարհի միջին ու ինքը անվճական քայլերով մեկնեց գետի կոլշողի գրասենյակը:

* *

Գյուղովը մեկ ծայր տվեց փսխուկը:

Ծամոնի պես Փիլոսի անունն ամեն բերան ընկավ:

Գեղամիջում թե հանդամիջում յերկու մարդ իրար հանդիպեցին թե չե՝ «բարի լուսից» կամ «բարի որից» հետո առաջին խոսքը սատկած ձիու և Փիլոսի մասին ողիտի լիներ: Շատերը ձիու սատկելու ամրող հանցանքը բարդեցին Փիլոսի վրա, իսկ վումանք, վորոնք լավ եյին հանաչում նրան, ձեռնպահ մնացին, թեև ընկան յերկմանքի մեջ:

— Դե մարդ ա ու փորձանք, պատահել ա ելի. Փիլոսը չեր, կեկոսն ըլեր, սատկելու դեմն ինչ կարող եր անել — հանգստացնում եյին նրանք:

— Ենը, եղ ել քեզ կոլխողին հավատարիմ մարդը, — ասաց եղ որը կուլակ Սումբաւթը Քոքոր ամուն հաղնական մի ժպիտ դեմքին խաղացնելով, յերբ նըրանք իրար հանդիպեցին գյուղի ծայրամասում. — գետը ու եղ տեսակին կոլխողի ամանաթ պահ տու.

մարդը չի կարում իրա քինթը սրբի, բա նա ձի պահող ան, վոր նրան ձի պահ տվի՞ն:

Խորքը, ի հարկե, Փիլոսի մասին եր:

— Սարքովի ա, ուստա Սումբաթ, սարքովի, — վրա բերեց Քոքոր ամին պատի տակը պազած տեղից, մոխրով լիքը չի բուխը բոի մեջ թափ տալով:

— Հենց եղ ա, վոր սարքովի ա են, — կրկնեց Սումբաթը խոսքը խելով Քոքոր ամու բերանից, վորպեսզի նրա արտահայտած միտքն իր ուզածի պես ձեակերպի. — հենց նրանով ա սարքովի, վոր ամեն մի թամբալի, անշնորհքի ու միանքոտի խցկում են կոլխոզ, իսկ մեզ նման չարքաշ աշխատավորներին հուշտ են անում, խրանեցնում ու հեռու քշում:

Քոքոր ամու ասածը բոլորովին են չեր, ինչի մասին Սումբաթն ակնարկեց: Նրա ակնարկը վերաբերում եր ճիշտ հակառակ տիպի մարդկանց, վորոնց քիթն ինչ վոր անուշ բանի հոտ եր ընկեր, բայց գունչը գոչինչ չեր ընկնում: Քոքոր ամին շատ լավ եր հասկանում, վոր Սումբաթը խոսում ա կոլխոզից բեղամաղ ըլած մարզու լեզվով, բայց չուզեց խաթրին կըպչեր վորովհետև Սումբաթն իրեն մի ժամանակ ոգնել եր, վոր եր փոխ տվել, վոր գնա քաղաք, աչքերը բժշկի, թեպետ, ի հարկե, փողը չեր բաշխել 100 մանեթի փոխարեն 20 փութ խալիս ցորեն եր յետ ստացել:

— Հմի ես մեր կոլխոզի գործը վինց ա ըլելու, Քոքոր ամին. խոտի, կալ ու կուտի հավաքելու վախտն ա, բա առանց ձիու ու յեզների կոլխոզը վինց ա անելու, — մին, ել հարց տվեց Սումբաթը սրտացալ մարդու պետ:

— Զան սաղութին ասա, ուստա Սումբաթ, չան սաղութին, — վրա բերեց Քոքոր ամին, — ամեն ընչին ել ձար կլի: Խորհրդային իշխանութինը չի թողնի, վոր կոլխոզի վիզը ծուռը մնա: Քոքոր ամու ես պատասխանը կուլակ Սումբաթին դուր չեկավ:

— Քոքոր ամին, ախը դու ինձ հասկացար վոչ, — ծոր ալեց կուլակ Սումբաթը՝ թանձը հոնքերը խաղացնելով ու հայացքը գես ու դեն ուղղելով. եղ դեպահնելով ա հայդնի, վոր Խորհրդային իշխանութինը կոլխոզի վիզը ծուռը չի թողնի, համա... բանն եղ չի... Բանն են ա, վոր կոլխոզում տեր ու տիրական չըշկա... տանողաւանողի, քաշող-քաշողի ա: Բա կոլխոզի վարչության մեջ խելքը գլխին, մի սրտացալ մարդ ել քարչության մեջ խելքը գլխին, մի սրտացալ մարդ ել չկա, վոր աչք ածի, սրան-սրան հետեւ, թե մարդիկ ինչ բանի յե՞ն:

— Սումբաթ ջան, բա խի՞ չի կա, — ընդհատեց նրան Քոքոր ամին:

— Կան, դուզ ա, կան, համա վատերն ենքան շատ են, վոր լավերն ել կորչում են արանքում, — ծերունուն հանգստացնելու նպատակով վրա բերեց Սումբաթը, վառած լուցկին զեմ տալով Քոքոր ամու շիրիխին: — Դեք յեզ չե, սադ գեղն ա ճանաչում, վոր հալալ մարդ ես, համա դու կարմա ասես, թե մեկել կոլխոզիկներն ել քու չափ հալալ են, որինակ ասենք՝ մի Փիլոս, մի Աղաջան, յա մի ուրիշը... դե, իհարկե, կարալ չես... Այ, սահնք կոլխոզի ձին սատկեց... հմի դու վինց կասես, սատկեց, թե սատկացը ին... ինչ ասեմ, հոգիս դժոխքի փայ անելու չեմ: Փիլոսին յես ել եմ լավ կողմից ճանաչում, համա... մին-մին զրախ ջանապաղ վառվուն

ինձորն ել վոր կտըռում ես, մեջը փթած ա դուս գաւլիս: Ինչ իմանաս, թե ձիու սատկելու մեջ Փիլոսի, Աղաջանի, յա մի ուրիշի մատը չի խառը:

Քոքոր ամին, ճիշտ ա, նրան ենքան ել չեր հաւաքառում, բայց ելի ուշիուռով ականջ եր դնում: Իսկ Սումբաթը զգույշ ու հանդարտորեն կասկածի թույնը որսկում եր Քոքորին՝ Փիլոսին վարկաբեկելունպատակով: Սումբաթը շատ լավ եր հասկանում, վոր Քոքոր ամին ինքնին առանձին վոշինչ չի ներկայացնում, նրանից վոշինչ չի կախված, կոլխոզի խնդիրները նա չի լուծում, բայց նա հասկանում եր և այն, վոր Քոքորի սիրաը գցած թույնը ողայից-ողա անցնելով, պիտի վարակի ուրիշ շատ-շատ Քոքորների, ձիու սատկելու շուրջը ստեղծելու յե հասարակական կարծիք, իսկ դրանից շահելու յե ինքը, վարագուրվելու յե իր արարքը:

* * *

Յերկու որ անց կոլխոզի գրասենյակում վարչության նիստին քննովում եր սատկած ձիու հարցը:

Փիլոսը նստած մի անկյունում, ապուշ կտրածի նման իրեն արդարացնելու վոչ մի փորձ չեր անում: Վարչության անդամների բոլոր հարցերին նա մի պատասխան եր տալիս.

— Իմանում չեմ... Ու սառած աչքերով հայացքն ուղղում եր ամեն մի հարց տվողի և կարծես նոր հարցի սպասում:

Ժողովը յեկավ այն յեզրակացության, վոր ձիու սատկելու մեջ Փիլոսի կողմից դիտավորյալ հանցագործություն չկա, բայց Փիլոսին մեղավոր պետք ե ճա-

նաչել գեղի ձին անուշաղիք վերաբերմունք ցույց տալու համար: Վորոշվեց ձիու արժեքի կեսը պահանջել նրանից, յետ պահելով այդ գումարը նրա աշխուրերից՝ մաս-մաս:

Փիլոսն այդ վորոշումից այնքան ել դժգոհ չը-դնաց, վորովհետև նա ավելին եր սպասում: Բանտ նստելը նրան թվում եր անխուսափելի: Յերբ նա վերադարձավ տուն, չգիտեր ինչպիս հայտնել այդ մասին Սուսամբարին, արդյոք այդ վորոշումն ինչ տպավորություն է թողնելու նրա վրա. Նրան անհանգստացնողն այդ միտքն եր:

— Լավ ոյին չեկավ զլուխներս, համա... ինչ աշխած. փորձանք ա, յեկել ա, մի յանով տակից գուս պտի գանք..., մենակ կեղտը, կեղտը լավ չի, վոր մնում ա մարդու վրա, — մտմուաց Առւսամբարը:

* *

Արեն իր խաժ աչքերով ժպտում եր գաշտերին ու սարյակները կչկչում մոտակա ծառերին, յերբ Փիլոսը ձին գորից գուրս բերեց, լծեց սայլակին, պատրաստվեց հանդը մեկնելու:

Արդեն յերրորդ որն եր, Փիլոսը նորից անցել եր աշխատանքի: Նոր ձիուն նա դեռ բոլորովին չեր ընտելացել բայց հեշտությամբ կարողանում եր նրա լեզուն հասկանալ:

Մի յերեկո, յերբ Փիլոսը վերադարձավ աշխատանքից, յերեխային յերկար պաշաչեց, խաղացրեց ու հետո նոր միայն իրիկնահացը կերավ: Փիլոսը մտավ հանկողին, բայց, հակառակ սովորականին՝ յերկար ժամանակ քունը չմոտեցալ նրա աչքերին, նա մերթ մը-

տածմունքի մեջ եր ընկնում, մերթ գևսից-դենից անկապ հարցեր եր տալիս կնոջը: Սուսամբարն ել նկատեց, վոր նրա տրամադրությունն ուրիշ տեսակ եւ:

— Այ մարդ, ծեզը չծեղած հանդն ես դնում, բաեդ իմ չես քնում, — տարակուսած հարց տվեց Սուսամբարը:

— Յանի եդ անդեր քունը պտի կա չմ, վոր քը նեմ, — անհանգիստ վրա բերեց Փիլոսն ու տպա շարունակեց.

— Ա Սուսամբար, մի բան կա, ուզում եմ ասեմ, համա... գիզում չեմ, ասիմ, թե չե...

— Յանի զու ինձանից բան թագյնելու շնորհք ել ունեմ... — կշտամբեց կինը:

— Դե եդ ա, գիդաս, վոր քեզանից բան թագյնողը չեմ, համա... — քիչ կմկմաց Փիլոսն ու մի տեսակ հանգնություն ձեռք բերած մարդու պես վրա բերեց. — Սուսամբար ջան, վոր զու ծարակ ըլես ու յերկար ճամբա գնալիս ըլես, ճամբիդ վրա մի քչքչան տղրյուր պատահի, եդ աղբրի զուլալ ջրից խմիլ չես...

— Բա իմ չեմ խմիլ:

— Դե իմ խոսքս ել եդ ա, ելի, վոր յես ել եմ ուզում խմել...

— Ի՞նչ խմել:

— Եդ ախպրի ջրից, — զողացող ու անվճռական ձայնով ասաց Փիլոսն ու յերեսը դարձրեց դեպի Սուսամբարը. — աղբյուր չմ, բա ի՞նչ գահըումար ա Միխակի ասածը:

— Ի՞նչ Միխակ, — զարմացած հարց տվեց Սուսամբարը, ծիծը յերեխայի բերանից հանելով:

— Քոսա Միխակը, ի՞նչ Միխակ... Մարդն իմ

լավն ա ուզում, իսո գեշս չի ուզում: Միխակն ասում ա, ա տնավեր, ձիու պարտքը քեզ խեղպելու ա, բա իւելք ելա կտրում չմ, վոր ձիու պարտքը ձիու ջանից հանեմ: Արի ինձ անզած դի, ասում ա, իմ ասածն արա ու տես, ինձանից զոն կմնան, թե չե: Զիուն աւենք գարի պտի տաս որական մի փութ, ասում ա, ունք գարի պտի տաս որական մի փութ, յա 10 գրվանքա, մնացածը բեր տանք առ կես փութ, յա 10 գրվանքա, մնացածը բեր տանք Սումբաթին, որեսը աղբըի պես արժեքն ստանանք, Սումբաթին, որեսը աղբըի պես արժեքն ստանանք, թե ինչպես աղբըի պտի տաս որական մի փութ, ասում ա, կնզանդ ու յերեխիդ բերնիցը կտրես, վոր ձիու պարտքը տասս...

Փիլոսը վերջին խոսքերն արտասանելիս ձայնը փոքր ինչ իջեցրեց ու ել չկարողացավ հայացքն ուղղել Սուսամբարին, վորպեսզի տեսնի, թե ինչպես աղբըին իր խոսքերը նրա վրա:

Սուսամբարն այլս չկարողացավ զայել իրեն: Նրա շեկ ու խորոր աշքերը հուզմունքից ել ավելի մեծացան, արևավառ այտերը կարմրեցին կարմրի խնձութի նման. Նրա վարի շրթունքը այլս չեր յենթարկը վում ու անընդհատ խաղում եր ջղայնությունից, յերբ վերանը բացեց ու կես հարձակողական, կես աղերսալի ձայնով դիմեց Փիլոսին.

— Բա զու զիկիդ գդակ չունեմ... Մի կտոր հալաւ հաց ես ուտում, ուզում ես հառամեմ... Բա զու մինչեւ որս վոնց չիմացար, վոր քոսա Միխակը վոր կա, Սումբաթի ձեռի աղլուխն ա, նբա շվին ա, ինչ պար ուղինա, են պարն ել պարել կտա նրան: Հմի զու ուղինա, ես պարն ել պարել ման գմս... Բա չես ամաշում, զում ես նրա խելքովը ման գմս... Ուզում ես վոր եդ բանը մտքովդ անց ես կացնում... Ուզում ես յես ինքս գեղովը մեկ չափ անեմ, անունդ կոտրեմ...

Փիլոսի գլխին վոնց փոր սառը ջուր լցնեն։ Ասես
մահվան սարսուռ անցավ մարմնով ու անկողնում սկը-
սեց ստոչել մեկ ել ջերմի նման մի բան գլուխը տվից
ու տաք քրտինքն սկսեց պատել ամբողջ մարմինը։
Ախր չոր Փիլոսն իր կյանքում յերբեք պղտոր աղ-
բրից ջուր չեր խմել... ելի չի խմի, բայց ախր աշխորն
ընչի՞ պակաս ստանա ե... և մեմից ա պակսում, ելի Սու-
սամբարի ու երեխի բերնից չի պակսում... ե, նրանք
ինչ մեղավոր են, վոր ձին ինքն իրեն ստակի...

Փիլոսն ընկել եր հոգետանջ յերկմտանքի մեջ,
ինչ անել լսել Միխակին, թե Սուսամբարին։ Յեվ գա
առաջին դեպքն եր, յեր նա մտածում եր գնալ Սու-
սամբարի կարծիքին հակառակ։ Ու նա այդ ներքին
պայքարին անձնատուր յեղած, աննկատելի քուն մը-
տավ։

Յերբ Փիլոսը լուսածեգին աչքը բացեց, յեղրա-
կացությունն արդեն պատրաստ եր։ Մի անորոշ ձեռք
կարծես պատրաստի մի միտք տեղափորել եր նրա ու-
ղեղի խորքում։

— Զե, Սուսամբարը սխալ բան ասել չի, — մը-
տածեց նա ու շորերը հագավ, բորիկ վոտերով խրճի-
թից դուրս յելավ...»

Յերեսն ազրի սառնորակ ջրով լվանալուց հե-
տո յերբ նա նորից խրճիթ մտավ, Սուսամբարն ար-
դեն խմորի գնդիկները շարում եր մի յերկար ալլա-
պատ տախտակի վրա, վոր տանի գրկից Աղաջանանց
թոնրում հաց թիւի։

Փիլոսն արդեն պատրաստ, ճիպոտն եր փնտուռմ,
վոր գնա աշխատանքի, Սուսամբարը յետեից ձայնեց.

— Փիլոս, տուն գալիս մտի կոպերատը, յերեխու-
հմա քիչ շաքար բե...»

* * *

Աշունը դեռ շատ հեռու յեր, բայց աշնան անձրև
մաղվեց գյուղի վրա։ Ամպերի թանձր զանգվածները
անհայտացան հորիզոնից, յերբ լեռնային թեթև քա-
մին գուրեկան հոսանքով սուրաց խրճիթների ու դաշ-
տերի վրայով։ Նորից վերսկավեց գաշտային յեռ ու
գեռը և կոլխոզի մարդիկ նորից գրոնեցին գետի հան-
գերն ու կալերը՝ ընդհատված աշխատանքներն ավար-
տելու համար։ Աննկատելիորեն, բայց քրտնաշան ու
համառ աշխատանքի շնորհիվ այս ու այն կողմում
լեռնանում եյին հացահատիկների դեղերը։ Արևի շեկ-
ճառագայթները հպում եյին իրենց շուրթերը հասկե-
րին անհագուրդ կարոտով։

Սոցմբցումն ու հարվածայնությունը ստեղծել
եյին խանդակառ յեռանդի մի վարար հոսանք և բեղի
մի ծայրը ցեց բրիգավավար Սերգոն այլևս չեր տըր-
տնջում բանութի հոսունության դեմ։ Առատության
յեղջուրից բղիսող վոսկենատիկ բերքին անհրաժեշտ
եր բանութ, իսկ յուրաքանչյուր բանութի հարկավոր
եր շատ աշխոր՝ առատ բերքից տուատ բաժին ստանա-
լու համար։

Հեռու, հեռու, կապտավուն հորիզոնում փոշին
ամպի պես ելի վեր եր բարձրանում ու տարածվում
շրջակայքում։ Խլլատով վաղում եր կոլխոզի նոր գը-
նած կարմրաբաշ ձին դեսլի գաշո՞ կոլխոզիկներին
առորյա կինսականը հասցնելու համար։

Փիլոսը նստած սայլակի գլխին ինչ-վոր յերգ եր

մոմուռմ: Սայլակի ցնցումներից խաղում ելին թե նըաձայնը և թե ինքն ամբողջ մարմնով:

Այս պատույտ ես և Փուրքոնը դուրս գալով բլուր-
ների յետելից, կտրեց խաչաձևկող ճանապարհն ու ըն-
կավ զեպի գյուղը տանող խճուղին:

Յեղբ Փիլոսը գլուխը բարձրացրեց, նա նկատեց,
վոր դաշտի աջ կողմից մեկն իրեն ձեռքով նշան և ա-
նում:

Փիլոսը ուժով գեալի իրեն քաշեց ձիու սանձը,
սայլակը կանգնեցրեց ու սպասեց, վոր կանչողը մո-
տենա:

Մոտեցողը կույակ Սումբաթն եր:

— ԱՇ Փիլոս, Միկանկի բերանով քեզ բան եցի
ապսպըել բա եղ խօսքար արեր վոչ — հեղահամ-
բույր ձայնով գիմեց Սումբաթը նրան, — եղ վո՞նց ա,
ուղի չես ասածիս...

— Զե, Սումբաթ ախպեր, եղ թանն իմ ամանութան չի: Յես կարալ չեմ մարսիլ — զլուկը կախ զըցած, ձեռքի ճիպոտի հետ խաղ տալով պատասխանեց Փիլոսոփ:

— Վայ յես քու մարդ ասողին ինչ ասեմ... բա
ել խի՞ յես գդակ ծածկում զլիխիդ... բա մարդ ել հա-
զիբահագրաբաշխ թիքից յետ կենամ... բա զու քու ո-
գուտն ելս չես իմաննեմ... — սկսեց կշտամբեն Սում-
բաթը:

— Զե, Սումբաթ, չե, իմ բողազս հառամ թիքին սովոր չի, յես եղ բանս անողը չեմ, — հատու կերպով մերժեց Փիլոսն ու պատրաստվեց սայլակն առաջ քը շելու:

— Բա դու մինչի յերբ պիտի թող տաս կնգանդ

ու յերեխուղ փայ թիքեն աշխմորիցդ կտրեն, թե ինչ
ա ձիու գին են յեղ պահում. — զե, դու գիտաս, յես
իմն ասեցի, մասցածը մնում ա քեզ, — խորամանկ
աղվեսի հայացքը վերջին անգամ Փիլոսի զեմքին ուղա-
ղերով վրա բերեց Սումբաթը. — յես ուզում եմ, վոր
դու վերջու չփոշմանեա: Յես մեղավոր եմ, վոր դու քու-
լանի ու վազն ուզողին իրարից ջոկել չես կարողա-
նում: Դե գնա, թող աշքդ հանեն, կոլխոզում աշխորդ
թող կտրեն, ոջախումդ վիզդ, կնազանդ ձեռիցդ խլեն, —
ասաց Սումբաթն ու ճամբան շարունակեց:

Փիլոսն սկզբում զիմի չընկավ, թե Սումբաթի
ակնարկն ընչի մասին եր: Աշխորը կտրելը, այսինքն
իրեն բերքափայից կտրելը գե ենա հասկանալի յեր,
բայց վիզը կտրելը վրըն եր: Սումբաթի եղ վերջին
խոսքերը դեռ ելի կարծես յերկար ժամանակ ական-
ջին հնչում եյին: Վճնոց թե կնպանդ ձեռքիցդ խլենց
Ո՞վ պիտի խլի: Խնչչ պիտի խլի: Յանի կնիկն ել յե-
ղան կամ ցաքատ ա, վոր գոսիցդ ընենց թոցնեն,
բան չիմանաս: Յերկար, շատ յերկար մտածեց Փիլոսն
եղ խլելու մասին, բայց ուզեղը կարծես չեր գործում:
Եղ խլելու մասին հնչքան ուզեց կնիկ խլելու վորես գեպք հիշել չկա-
խնչքան ուզեց կնիկ խլելու վորես գեպք հիշել չկա-
րողացավ: Բայց յերբ Փիլոսն աննկատելիորեն ձիուն
սաղացաւ, սայլակը տեղահան ըլավ ու նորից սկը-
սեց իր գողոսցը, նա նոր միայն հիշեց մի գեպք, յերբ
սաղ գեղն եր խոսում կնիկ խլելու մասին: Եղ են ժա-
մանակն եր, յերբ Մուգելանց Սեթն իրեն կնիկ առավ-
չոփուո Գրիշոյի կնկանը, յերբ նա մարդուց բաժնա-
վել եր: Սաղ գեղը բերանը մեկ առած խոսեց այն մա-
սին, թե Սեթը Գրիշոյի կնկանը խլեց:
Կնիկը վոր ինքը մտքումը չունենար, Սեթը կա-

բող եր նրան խլմը — մտածեց նա. — իսկ ով կարող ե խել իր կնկանը: Մթթե Սուսամբարը գժգոն ե իրենից, միտքը ծուել է, իրենից մախչելու միտք ունի ու ամենքը, ամենքը զիտեն այդ մասին, բացի իրենից: Ո՞վ կարող ե աչք դրած լինել Սուսամբարի վրա: Վոնց փոր յեղանով խոտ շուռ ու մուռ տաս, նա յերկար միտքը շուռ ու մուռ տպեց, բայց չկարողացավ կանգ առնել իր ծանոթ ու մոտիկ մարդկանցից վորեւ մեկի վրա: Մշուշոտ կերպով նա հիշեց, վոր մի մարդ ել եր նրան ակնարկել, թե՝ «Փիլոս, կոլխոզից մեկը առնդ ուղում ա քանդի»: Հիշեց նաև այն, վոր այդ ասողը քսա Միխակն եր:

* * *

Բլուրները նիրհեցին գիշերային մթության մեջ: Հեռու, հեռու լեռներից սառը քամին հախուռն հորձանքով իջավ դաշտերի վրա ու ալիք-ալիք որորեց ցորենի վոսկեհատիկ խալիչաները:

Փիլոսը դեռ տուն չեր վերապարձել:

Կոմյերիտ Վաղոն, վոր Փիլոսենց զբկիցն եր, տան մոտով անցնելիս, լեց յերեխայի լացն ու տուն մտավ:

Մանկությունից ծանոթ եր նա Փիլոսենց ընտանիքին, մանավանդ Սուսամբարին, վորի հետ աշխատել եր և հասարակական կազմակերպություններում:

Ալչի, Սուսամբար, — ձայնեց նա հանկարծ, յերբ մոտեցավ թախտին գույնդույն փալասների մեջ փաթաթած յերեխային ձեռքն առնելու, — բա ես խիչ չես յերեխուն մտիկ տալիս, տակը խարաբ ա արել...

Սուսամբարն իսկույն զլիսի ընկալ, թե բանն ին-

չումն ե: Ամոթից քիչ կարմրեց ու փալասի կտորը ձեռքին մոտ վ զեց յերեխայի շաքերը մաքրելու:

— Եղ ել երեխու ադաթն ա, — արդարացրեց ի- բեն Սուսամբարը. — ինչքան սւզում ես մաքրի, ելի տակը կեղտոտ, ելի տակը կեղտոտ ա ըլելու:

— Դե շուտ արեք, մեծացրեք ելի, վոր դու ել գործերիդ կենաս, — կատակեց Վաղինակը ժպիաը դեմ- քին, — եղ երեխեդ քեզ թամամ պասսիվացրեց հա...»

— Ա տղա, զոռով ել երեխա մեծացնիլ կլի...

— Բա խի չի ըլիւ վոտիցը դու բռնի, գլխիցը Փիլոսը, ենքան ձիգ տվեք, վոր մեծանա, — ասաց Վա- ղինակը քահաքան ծիծաղելով:

— Խի, քու ծնողները քեզ ըտենց են մեծաց- րել...

— Դե, խոսք ա, ասեցի ելի: Սուսամբար, քեզ մի բան պիտի խնդրեմ, զու պիտի անես: Փիլոսին ասա, վոր են կուլակ Սումբաթից ու քոսա Միխակից մի քիչ հեռու կենա, թե չե կոլխոզիկներն ինչ վոր շատ են խոսում, թե Փիլոսը իրեն Սումբաթին ու Միխակին շատ մոտիկ ա պահում:

Սուսամբարը ինչ վոր բան հիշեց ու պատմեց նրան, թե ինչպես կուլակ Սումբաթն առաջարկել եր Փիլոսին՝ ձիու բաժին գարին զողանալ ու իրեն տալ:

— Դու ել հավատում ես, վոր Փիլոսը նրանց խոսքովն ըլի ու նրանց լսի, — հատեց Սուսամբարը Վաղոյին:

— Յես հավատում չեմ, ամենքի բերանն ել ցե- խում եմ, համա գի ընչի՞ խոսան: Համ ել ասա, վոր ես գիշեր դպրոցում քաղպարապմունք կա, թող անպատ- ճառ գա, — պատվիրեց Վաղինակն ու գուրս թուավ:

Վաղինակը հենց նոր եր վոտը դուս դրեւ, վոլ
ներս մտավ Փիլոսը:

— Ա, տղա, եղ խի եղքան յեղացար, — սեղան
պատրաստելով հաբց տվեց Սուսամբարը:

— Ֆուրգոնը սարքի զցեցի, մի քիչ ել յաշիկ-
մաշիկ պատրաստեցի, վոր առավոտը ճամբա պիտի
գնամ, — մտախոհ, աչքերը ցած զցած պատասխանեց
Փիլոսը. — կոլսողի հմա լանսպա յեն ասում, թե լան-
սպաս են ասում, բերել են, պիտի գնամ ստանամ:

Խոռքը լայնապառի ապրանքների մասին եր, վոր
ստացվել եր հարևան գյուղի կոռպերատիվում և պիտի
գնար, բերեր գյուղ:

— Հա, գնալ ասիր, միտս յեկալ. նոր հենց Վա-
ղինակն ըստեղ եր, ասեց, վոր գնաս դպրոց, քաղխըմ-
բակի պարապմունքին:

Այդ որը Փիլոսն ինքն ել չկարողացավ հասկա-
նալ թե ինչու Վաղինակի անունը նրան այնքան ան-
հաճո թվաց: Գուցե հենց եղ Վաղինակն ե, վոր տունս
ուզում ե քանդել, կնիկս խլել, — անցավ նրա մտքով:

Ախչի, Սուսամբար, — գիմեց նա թախծոտ ձայ-
նով կնոջը, — մի բան ասեմ, չպիտի նեղանաս. ինձ ըս-
կի գուր չի գալիս, վոր եղ Վաղինակը շուտ-շուտ տուն
ա պրծնում:

— Եղ ինչ բան եր, — շշմած վրա բերեց Սուսամ-
բարը, — նա լավությունից բացի, իոտ վատություն չի
արել մեղ. Հըեն հա, եսոր ել մարդը զգուշացըեց, վոր
դու Սուսամբից ու քսա Միխակից հեռու մնաս, թե
չե, ասում ա, սադ կոլսողնիկները վրադ իսոսում են,
թե Փիլոսը կուլակի ու յենթակուլակների հետ ա մո-
տիկություն անում:

— Մոտիկությունը վմբն ա, նրանց հետ վոչ
նստում, վոչ վեր եմ կենում. զե վոր պատահում են՝ մի
բարեւ, մի աստծությարին՝ եղ ել չտամ.. — արդարաց-
րեց իրեն Փիլոսը և ընկավ ինչ վոր մատածմունքների
մեջ:

— Դե հիմի գեղացիք վոր ուզենան, ես ել պատ-
մություն կշնեն, — բերանը սրբելով ու սեղանից յետ
քաշվելով, շարունակեց Փիլոսը. — Միխակն իմացել ա,
վոր առավոտը գնում եմ Քյոսալար, խնդրել ա, վոր
իրեն Յ փութ գարին ել տանեմ հետո, տամ Մազմա-
նանց Քյոսոյին, տանեմ վհչ: Յես չեմ, զու ես, ա Սու-
սամբար, կմերժես, չես տանի:

— Եղ տանիլը գե վոչինչ, համա վոր դրանցից
քիչ հեռու կենաս, ավելի լավ:

* *

Փիլոսի հետ պայմանավորվելու համաձայն, ծեզը
նոր հենց բացվելիս, Միխակը մնշոկով գարին բերեն
թողել եր գոմում, վոր նա սայլակով իր հետ տանի
Քյոսալար գյուղը:

Փիլոսը գոմի գուսը թեթև ճռոցով բացեց, ներս
մտավ, սանձից բռնած ձիուն գուրս բերեց ու վերու-
յով ջուրը կողքը զրած, սկսեց նրա մարմինը լվանալ.
Նրան լողացնում, մաքրում, թիմարում եր այն ինամ-
քով, ինչ ինամքով Սուսամբարն եր լողացնում ու մաք-
րում իր փոքրիկ յերեխուն: Զին վիճացնում ու գլու-
խը դեմ եր տալիս նըան, կարծես հաճույք եր զգում,
վոր մարմինը մաքրվում, թեթևանում եր:

Ցերը սայլակն արդեն պատրաստ եր, Փիլոսը մե-

շոկներն ու արկղները սայլակին տեղավորելուց հետո, դիմեց դեպի գարեն, վորպեսզի գարու մեջովն ել տեղափորի սայլակի վրա, առանց կասկածելու, վոր այդ գարեն Սումբաթինն եր, և վոչ թե Միխակինը և այդ գարու այնքան տեղ հասցնելը չեր կարեռ, վորքան սայլակի վրա զանվելը:

Այդպես եր պետք Սումբաթին, վորպեսզի կարողանա կեղափ բիծ դնել Փիլոսի վրա ու նրան վարկաժեկել կոլխոզում:

— Յես վոր ասում եմ, գուշ հավատում չեք, գուշ ինձ կուլակի տեղ եք դնում ու խոսքս դալը աբասու տեղ ել չեք անցկացնում,—խորամանկորեն վարակում եր իր թույնով Սումբաթը Քոքոր ամուսն հենց նույն առավոտը, յերբ նրանք իրար հանդիպեցին կոլխոզի դասնառջնու խոսելով Սումբաթը նրան տարավ կանգնեցրեց զեղի վերջում գալարումներ տվող են ճամբի մոտ, վորտեղից պիտի անցներ Փիլոսը:

— Յես վոր ասում եմ, թե կոլխոզը քանդողը հենց կոլխոզի ներսը նստած մարդիկն են, Քոքոր ամի՞ դու ինձ չես հավատում,—ծոր տարով շաբունակեց Սումբաթը, այ, մենակ քեզ եմ ասում, ուրիշի չե, ականջովս ա ընկեր վոր Փիլոսը ձիու փայ գարուց գուղացել, տանում ա հետը Քյոսալար՝ ծախելու: Դե վոր ձիու փայը կտրես ու ինքդ ուտես, ինարկե, ձին կը սատկի: Իմ մտածմունքս ինչ ա, յես վախում եմ թաղա ձիու զլուին ել ուտի, այ թե ինչ: Յես ուղում եմ, վոր մենք յերկուսս ել համոզվենք եղ բանում: Դուդա, հոգի ունեմ տալու, յես Փիլոսից եղ բանն սպասում չեմ, համա մարդ ենք, ով ա խմանում, ինչ իմանաս, թե մարդ իր ներսում ինչ չար ու բարի միտք:

ունի: Փիլոսը վոր կանցնի, — փափսաց նա Քոքոր ամու ականջին, — դու մոտեցիր ու սայլակը մի աչքածա:

Քոքորը մնացել եր շվարած: Փիլոսը գնդ... Նա գժվարանում եր հավատալ: Նա շատ լավ գիտեր, թե Սումբաթն ինչ պտուղ ա, համա զե մարդն ընչի պտի սուտ խոսա, — մտածում եր ալեխառն ծերուկը՝ մանկանը հատուկ միամտությամբ:

Յերբ գյուղի ճամբամիջում Փիլոսի սայլակը յերեաց, Քոքոր ամու սիրտն սկսեց թրպրտալ: Ասես գուղությունն ինքն արած լիներ:

Փիլոսի սայլակը զազացով յեկավ, վոր նրանց մոտով անցնի, Քոքոր ամին ձեռքով կանգնելու նշան արեց:

Սայլակը կանգ առավ:

— Փիլոս, եղ մեր, — հարցրեց Քոքոր ամին:

— Գնում եմ Քյոսալար, լանսպասը բերեմ:

Քոքոր ամին Փիլոսի պատասխանից իսկի բան չխմացավ, վորովհետեւ գարեն կլանել եր նրա ուշաշըությունը. Նա մոտեցավ սայլակին ու յերբ մեշոկը զերեկից դրած աչքն ընկավ, նրա աչքերը կարծես հըրավավեցին ու հարց ավեց:

— Եղ մեշոկինն ինչ ա:

— Գարի ա, — ու բացատրեց, թե ում գարեն ե և ուր և տանում:

Հրձվանքի ժպիտը խաղում եր Սումբաթի ճակատին ու հենց վոր սայլակը տեղից շարժվեց ու Փիլոսն արգեն բավական ենուացավ, Սումբաթը ներքին զոհուանակության զգացումն իր մեջ զսպելով, զիմեց Քոքոր ամուն.

— Տեսաբ... իսո տեսար, իսո համոզվեցիր... վոնց
ել ձեռաց սարքեց, թե Միլակինն ա... Համա, Քոքոր
ամի՞, յես ըլեմ դու, մարդու անգամ գցես վոչ մեղք ա,
վկին դալաբալ կսարքեն, կոլխոզից դուրս կքշեն ու
մի կտոր հացից ել կզրկի: Յես մնակ ուղեցի, վոր
իմանաս, թե ով ա կոլխոզի թշնամին, ով բարեկամը:
Ելի յեմ խնդրում՝ մարդու բան ասես վոչ — կրկնեց
խնդիրը Սումբաթը, խորապես համոզված լինելով, վոր
Քոքորն այդպիսի կեղոսու գործեր իրանում պահողը չի:
Դե, Քոքոր ամի՞, ինձ ներողություն կանես,
յես եսո՞ր բոստան ունեմ ջրելու, վասար գնում եմ բոս-
տանը, — ասաց Սումբաթն ու թեքվեց գեղի ձախ ու
հեռացավ:

Քոքորը տխուր մտքեր վորոճալով ուղղվեց դեպի
կոլխոզի գրասենյակը:

* * *

Այս յերեկո կոլխոզում ծեծվում եր բերքաբաշխ-
ման հրատապ խնդիրը: Ավելի շուա մշակվում եր բեր-
քաբաշխման կարգը: Ժողովը ձգձգվեց մինչև ուշ զի-
շեր: Ուշ լինելու պատճառով, ժողովականները հրա-
ժարվեցին ընթացիկ հարցերը քննելուց:
— Ա, խալիք, — դուան մոտ պատի տակ պայտած
տեղից ձայն ավեց Քոքոր ամին, — ինչ ուղում եք
արեք, համա ես մի հարցը հենց հմի քննվիլ պաի:
կոլխոզում գողութին կա, գողությունը պահելու, յետ
գցելու բան չի:

— Կոնկրետ ասա, դուզդուզ ասա, զողն ով ա,
դիմեց նրան նախագահ Պետիկը:

— Գողութինն իմ աչքովս տեսա, — մտմտաց
ձերուկը նորից, խոսքի կեսը կարծես կուլ տալով:
— Գողն ով ա, զողը, — ձայնեցին տարբեր
կողմերից կոլխոզնիկները:
— Գողը, հրես հա, ըստեղ նստած ա, — վորո-
շակի վրա բերեց Քոքոր ամին, հայացքն ուղղելով դե-
պի Փիլոսը, վոր նստած եր Քոքոր ամու աջ կողմը,
նրանից քիչ հեռու:

Փիլոսը հանկարծակի յեկավ, մեկ գույնը գցեց,
մեկ ել կարծես յեռացըրած ջուր ածեզին վրան:
— Փիլոսն ինչ ա զողացել — հարց ավեց կոմ-
յերիտ վաղոն:

— Գարի, — վրա բերեց Քոքոր ամին. — յետ
ինքս տեսա իմ աչքով, վոր նա տարավ Քյոսալար
ծափելու:

Կոլխոզնիկներն ապուշ կտրած իրար յերեսի նա-
յեցին:

Կոմյերիտ վաղոն մատը կծեց: Նա հիշեց Սու-
մբաթարի պատմածները կուլակ Սումբաթի ու բոս-
Միլակի մասին և նա եղ գողությունը կապեց նրանց
հետ:

— Բնկերներ, — ձայն խնդրելով նախագահից,
հայտարարեց Վաղինակը. — ըստեղ կուլակի սարքած
բան կա, հարկավոր ա մի հանձնաժողով ընտրել և ես
գործը մանրամասն քննել:

Նրա առաջարկն անցավ: Հանձնաժողովն ընտրվեց
կոմյերիտ Վաղոյի նախագահությամբ:

Մի շաբաթ անց, կուլակ Սումբաթն արդեն ձեր-
բակալված եր՝ իբր կոլխոզի թշնամի ու կոլխոզը քայ-
քայող հականեղափոխական տարր, իսկ քոսա Միլա-

կը դուրս շպրտվեց կոլխողից՝ իբր յենթակուլակ ու
անհարազատ ելեմնատ:

Իսկ Փիլոսը շամել եր:

Նա դեռ ուշքը գլուխը հավաքել չեր կարողա-
նում:

Կարճ ժամանակում յերկու փորձանք կայծակի-
պես յեկել գլխով անցել եր: Լավ ե, վոր յերկուան-
ել անվաս անցան:

— Կուլակ Սումբաթից ով ա իեր տեսել վոր
յես տեսնեյի, — մտածեց նա ինքն իրեն ու մտքումն
իրեն խիստ պախարակից: — Բա վոր Վաղոն Հեր-
յես խո կորած եյի. ով կհավատար, վոր զարին իմ
չի, գարու գողը յես չեմ, այլ քոսա Միխակն ու կու-
րակ Սումբաթը:

Անսահման շնորհակալության զգացմունքով նա
համակվեց զեպի կոմյերիս Վաղոն. բայց մտքում
լայն դաշտի մթության մեջ հնոավոր ճրագի պես առ-
կայծեց «տունը քանդելու և կնոջը խելու» միտքը,
վոր նրան տվել եյին վորոշ մարդիլ:

— Վաղոն արդարությունն ուղեց պաշտպանու-
թե Սուսամբարին սիրաշահել, — անցավ նրա մըտ-
քով, յերբ նա վերադաշել եր առւն ու մտախոն նըս-
տել յերեխու կողքին: Բայց նա իրեն խիստ կշամ-
բեց, յերբ սառը դատողությունը իշխեց նրա վրա:

Ի՞նչ եր տեսել Փիլոսը Սուսամբարի և Վաղոյի
միջև: Վոչինչ: «Թող վիզդ կտրեն ու կնկանդ ձեռիցդ
խլեն» — հիշեց կուլակ Սումբաթի խոսքերը, վոր նա
դաշտում ուղղել եր իրեն, յերբ նա կտրուկ կերպով
ճրաժարվել եր գողություն անել, կուլակ Սումբաթի
կամքը կատարել: Չե վոր կուլակ Սումբաթն ու քոսա

Միխակը ավելի զազիր միջոցներով եյին փորձում իր
վիզդ կտրել ու կնկանը ձեռիցդ խլեր:
Թմփլիկ յերեխան, վոր մինչ այդ անուշանուշ
նաջում եր, հանկարծ շարժվեց ու տունը լցրեց լացով:

Սուսամբարը զրպից տուն վազեց:

— Ա, տղա, յերեխու կողքին նստած ես, բա կա-
րում չես ձեռդ առնես ու գուրգուրեն, — հարձակվեց
Սուսամբարը:

— Սուսամբար ջան, յերանի մեկն ըլի, ինձ
գուրգուրի, — զլուխը կախ մտմտաց Փիլոսը:

— Եի, թազա յերեխա յես դառել գլխիս:

— Սուսամբար ջան, յես ես յերեխուց ել պստիկ
եմ, վորովհեակ նորսնոր եմ սկսում խելքս գլուխս
հավաքել, իմ խերն ու շառը հասկանալ:

Յերբ Սուսամբարը հայացքն ուղղեց զեպի յերե-
խայացած Փիլոսը, նա գլուխը բարձրացրեց ու աշքե-
րը հառեց Սուսամբարի վրա, ասես խոնարհ մեղայա-
կան խոսք ուղեց ասել նրան, վոր փորձել եր զեմ
գնալ նրա խելացի խորհուրդներին:

Այդ մեղայական խոսքն ասվեց յերեխայի թմփ-
լիկ թաթիկներից կուշտ ու անհագութ համբույնելո-
քաղելով:



ՅԵՐԲ ԲԱՑՎՈՒՄ ԵՐ ԳԱՐՈՒՆԸ

Նա լավ գիտեր, վոր բնության ու յերևույթների
մեջ ամեն ինչ ունի իր չափն ու սահմանը:

Բայց ինչո՞ւ անսահման են միայն իր հոգու չայ-
րուվերումները, հույզերը...

Վարարել են այդ հույզերը դարնան լեռնային
գետակների պես, շնողալից վազում են ու վազում են,
տաճում են նրա թրթուն սիրտը, հոգին ու մտքերը
քամուց թեթև ու քամու թրթուն թերով: Ո՞ւր...
մինչև ժուր... ինքն ել չգիտե...

Կարենը փորձեց մկրատը ձեռքն առնել ու միտ-
քը տալ իր առջև փողած կտորի ձերն:

Չեղավ, բան դուրս չեկավ:

Քիչ մնաց մկրատը շեղեր ճանապարհը:
Ու հետո...

Հետո կտորը կիշանար: Դա դեռ բավական չե-
չարեան վարպետներ՝ Սեղբակն ու Մուկուչը նորից կը-
ծիծաղեյին: Նորից ձեռք կառնեյին նրան:

— Հը՛, մեր տղա, սիրահարվել հո չե՞ս... ուշք
ինչ-վոր կորցրել ես...

Հիշեց Կարենը Սեղբակի այն որվա ակնարկը,
յերբ նա, հոգեկան նույն ապրումների մեջ, պահան-
ջած կտորի տեղ սխալմամբ մկրատը հրամցրեց Սեղ-
բակին:

Կարենը ջանք գործ դրեց ուշքը հավաքեր վոր-
պեսզի չմատնի իրեն, վորպեսզի վոչ վոք չնկատի իր
հոգու անհավասարակշությունը, մանավանդ, վոր ին-
քը «հարվածային» եր ու իր գանդաղկոտությունը
գործի մեջ կարող եր ամոթով անել նրան ընկերների
մատ սոցմերցման խնդրում:

Կարի գործարանի հակա դարպասում տեհուային
շարժում ու կյանք կար: Յերկշարք կարի մեքենաների
դրացը բռնել եր սրանց: Կար անող կանայք ու տղա-
մարդիկ գլխիկոր, կըանված իրենց աշխատանքով, ձե-
զում եյին ու կարում, կարում եյին ու ձեռում: Կտորի
տձեւ կտրտվածքներ բանվորների հարվածային լեռտա-
յում, սեղանի մի ծայրից սկսած, ձեռքից-ձեռք անց-
նելով ձմբում եյին ու վորեե հագուստի կերպարանք
ստացած ընկնում, կուտակիում եյին սեղանի մյուս
ծայրին ու հագուստեղենի մի թումբ կաղմում:

Լավ ե Կարենը կապ չուներ լեռտայի հետ: Լեռ-
տայում նա հնարավորություն չեր ունենա սուզմելու
իր հոգին որորով այն հիշողությունների մեջ, վորոնք
այնքան անուշ եյին, այնքան հաճելի... Յեկ յերը նա,
վես ու գեն նայելուց հետո, համոզվեց, վոր իր վրա
ուշաղրություն գարձնող չկա, գաղգահի վրա փուած
կտորը շուռ ու մուռ տվեց, նորից ուղղեց, վոր ձեկի:
Սև ու յերկայն կտորի վրայի կավճի մերմակ գծիկնե-
րը, բաց գաշտում փոված ու հեռուներում ձուլվող
ձամբի նման, նրա միտքը տաճում եյին դեպի զյուղ,
հասցնում նրան կանաչներում թագնված են մարտզը,
ուր նա վերջին անգամ տեսնվեց նրա հետ, Մելինեյի
հետ:

Սիրուն եր Մելինեն: Փթթած գարուն աղջիկ:

Մազերի թանձը խոպոպիկները, յերբեմն, ծածկում ելին
նրա ճակատն ու թուխ ֆոնի մեջ ավելի գրավիչ, ա-
վելի գերող դարձնում նրա աչքերը: Մելինեն անսահ-
ման սիրում եր Կարենին: Կարենն ել իրեն շատ վա-
զուց եր կապված զգում Մելինեյի հետ:

— Կարեն ջան, վոր գնամ քաղաք, մեկ ել յերբ
կգաս, — հարցը եց նա համարյա շշունջով, յերբ նրանք
վերջին անգամ զյուղի դպրոցի շենքի մոտ, յերեկոյան
մթնշաղին, հանդիպեցին իրար:

— Մեկ ել ամառը կգտմ, ամառն ինձ մի ամիս
ոտղուսկ ունեմ, կզամ քեզանից կարոս առնելու, —
պատասխանեց Կարենն ու հուղված գրկեց Մելինեյին,
կուշա համբուրեց ու հետո... հետո ինքն ել չխմացավ,
թե ինչպես բաժանվեց նրանից, վազեց տուն ու քիչ
անց ճամբա ընկալ գեպի քաղաք:

Հիշեց այս բոլորը Կարենն ու գեմքը շառագու-
նեց. Թագուն ծոցի գրպանից նամակի նման մի բան
քիչ բարձրացրեց, նայեց, նայեց ու նորից պահեց:

Կարենը համոզվեց, վոր նոր ստացած նամակը
Մելինեյից եր: Նա անհամբեր սպասում եր աշխատան-
քի դադարին, վորպեսզի քաշվի մի անկյուն կամ դե-
պի տուն ու ափահությամբ կլանի նամակի բովանդա-
կությունը:

* *

Յերբ Կարենը տուն յեկավ, յերեսին գույն չկար:
Ասես գեմքին աշուն եր թառել:

Յերկը սրբի յերկար պատշտամբի ծայրի
փոքրիկ ու նեղիկ սենյակի դուռը աննկատելի բա-
ցեց, գլխարկը մի կողմը նետեց ու առանց հանվելու

ընկալ թախտի վրա փոած անկողնի վրա յերեսն ի
վայր:

Զքնեց, վորովհետև նա քնելու մտադրություն բո-
լորովին չուներ: Մի ներքին փոթորիկ ալեկոծում եր
նրա անդորրն ու սուզում նրան խառնիխուռն մտքերի
անհանգիստ ծովը:

Մի փրփրահույզ ու չարախինդ միտք, արծվի
հման, կտցում եր նրա հոգին ու խորունկ ցավ պատ-
ճառում:

— Ձեր հերն ել անիծուծ, թե չեք ընդունի,
կարծես ուզեց հանգստացնել իրեն Կարենն ու քիչ
անց նորից մոմտաց.

— Ախր հորս հետ ի՞նչ կապ ունեմ. նրանց հա-
ցին եմ, թե ջրին, վոր նրանց պատճառով ինձ չեք ըն-
դունում:

Խոսքը կուշաբքերն ընդունելու մասին եր: Կա-
րենը վաղուց եր փափազում կուշաբքերը մտնել. այն
ել ասենք, վոր նրան այդ քայլն անել դրդել եյին
կուսրջիթի քարտուղարն ու սրտակից ընկեր Վասմը:

Այս յերկուսն ել չափազանց նպաստավոր կար-
ծիք ունեյին Կարենի մասին և գտնում եյին միանգու-
մայն արժանի, վոր նա լինի կուսակցության շարքե-
րում, վորովհետև Կարենն իր տոկուն աշխատանքով
եր նրանց բերել այդ համոզման: 18 տարեկան թըռ-
փառն յերիտասարդ եր Կարենը, յերբ գյուղից քաղաք
յեկավ ու մտավ կարի զործարան փեշակ սովորելու:
Սրբեն 4 տարի յեր ինչ աշխատում եր գործարանում
և աշխատանքի ընթացքում նա ցույց եր տվել մեծ
ընդունակություն կար ու ձեր գործում:

Դա բավական չե: Նա և ակախիխստ եր: Գործա-

բանում ինչ խմբակ կազմակերպվեր, կարենը մեջն եր: Տեղկոմին կից վորևե հանձնաժողով կազմվեր, ամենից առաջ պիտի կարենի անունը տային: Կարենը մասնակցում եր պատի թերթին, յերբեմն ել տպագրական մամուլին և գիշերային դպրոց եր հաճախում: Բջիջի բաց նիստերի մշտական հաճախորդն եր:

Միմիայն մի չարաքաստիկ գեպը նրա բախտի անիվը քիչ թեքեց: Տեղկոմը աշխատակիցներից ինչ վոր նախատելով փոքրիկ գումար եր գանձել և փողը գործադրելը հանձնել եր կարենին: Կարենի ծակ գըրպանից կորել եր փողը, բայց հավատացնելն ով եր...

Անկատելիորեն, բայց վորոշակի խախտվեց ընկերների հավատը գեպի կարենը:

Այդ բանը շատ վատ ազդեց նրա վրա, բայց ինչ կարող եր անել... «Լավ ե մարդու աչքը դուրս գա, քանց անունը»—ասում ե ժողովրդական իմաստությունը: Յեվ այս բանի հետևանքով նա շահեց «պըստիկ սաստրատչիկ» մականունը:

Այդ զեպքից անցել եր արդեն մի տարի: Կարենը չեր դադարում ակտիվ աշխատելուց: Յերբ գործարանում «հարվածային» աշխատանքի մասին խոսք բացվեց, կարենը մեկն եր նրանցից, վորոնք իրենց «հարվածային» հայտարարեցին:

Ու մի որ ել վորոշեց դիմում տալ բջիջին իրեն կուսակցության շարքերն ընդունելու համար:

Բջիջը նրա ինսդիրը ժամանակավորապես յետաձգեց, նկատի ունենալով վորոշ չստուգված տեղեկություններ:

Հայտնի չե վորակեղից, բայց բջիջի անդամներից մեկի ականջն եր ընկել վոր իբր թե, յերբ գյուղի-

կոլեկտիվի վարչությունը կարենին առաջարկել եր մոնել կոլեկտիվ, կարենը մերժել եր: Այս հանգամանքըն աչքաթող անել բջիջը չեր կարող:

Յեվ անա այս վորոշան լուրն եր, վոր նրան անհանգստացնում եր:

Յերբ կարենը զլուխը բարձից բարձրացրեց, սենյակում արգեն մութն եր: Փողոցից միայն լույսի մի յերկարածիք շող ներս եր ընկել պատուհանից ու ընկել հանդիպակած պատին:

Նա, հանկարծ, սթափվեց, տեղից վեր կացավ, փոքրիկ մրակալած լամպը վառեց ու նստեց սեղանի մոտ:

Նամակ գբեց ծնողներին.

«Ամի ջան, նանի ջան, շատ կարուտալի բարե ձեզ ևս քույր Պայծառին ու յեղբայր Վրթոյին: Յես շատ լավ եմ, նույնը և ձեզ ցանկամ: Փեշակս ել արգեն լավ սովորում եմ: Բըյուկ ձևելն ել սովորեցի, վոր գամաւուս ու Վրթոյի համար միամի բըյուկ պիտի ձևեմ ու կարեմ: Ամի ջան, նամակում գրել եյիր, վոր փող զրգեմ, ցորեն առնեք, հաց անեք ուտեք, վոր կովի ու յեղներիք համա ել կեր առնեք... Ախր գե վոր եղ անտեր անստուններն ու դուք առանց կերի ու հացի եք մնացել լավ չի ըլի՞ վոր են ա միանգամից մտնեք կոլխող ու ձեր անգամն ել զնջացնեք, իմն ել... Ամի ջան, եղ յես ի՞նչքան պտեմ դարգիր վոր համ հացի տաք, համ կերի, համ սերմացուի, համ ել զեղի ու վարի: Են ա են կոլխողը համ հաց ունի, համ կեր, համ ել հաղար տեսակ մաշինեք: Բա խելքներդ ի՞նչ ա կըտրում, վոր մինչկլի հմի չեք մտել:

Ամի ջան, նանի ջան, այ, յես ձեզ ասում եմ, վոր

յես քաղաքից կարալ չեմ ենքան զբգեմ, վոր դուք ծերը ծերին հասցնեք: Թե ուզում եք, վոր յես ձեր վորդին ընեմ ու իմ վոտը ձեր ոջախումն ելի յերեա, ևս նամակս ստանաք թե չե՞ զրվեք կոլխոդ: Ես նամակի հետ ուզարկում եմ մի պրաշենիս եւ հենց եղ պրաշենին ել ամի ջան, կտանես, կներկայացնես կոլխոդի վարչությանը: Պրաշենի թղթի յետել խաչ նշան եմ դնում, վոր շշփոթեք:

Ամի ջան, մի խնդիր ել ունեմ. կոլեկտիվ ընդունագեք թե չե, ինձ ել մի գիր զրի, վոր իմանամ: Սպասում եմ պատասխանի:

Բարես նաև Թոփալենց (Մելինեյի հարազատներին): Կարեն Ալջոյան»:

Կարենը նամակը դրեց ծրարի մեջ, կոտրած ուսուերենով հասցեագրից, լույսը մարեց, զլիարկն առավ և անից գուրս յելավ:

● * *

Հոդին իր փխրուն շուրթերով մի քանի անգամ համբուրզել եր ձյունի մանրիկ ու սառը փաթիլների հետ: Բայց դաշտ դուրս գալ աշխատանքի գյուղացին գեռնս չեր կարող: Սարերի գոշերը դեռ ևս ձյունի հաստ շերտով պատած եյին: Դեռ վաղ եր: Այնուամենայնիվ գյուղացիք գարնանացանի հոգով եյին տարաված: Բահ, խոփ, գութան և այլ գործիքների նորոգման մեջ եյին:

Յեղսան նանը շատ նախանձեց, յերբ տեսավ Պոռշ Լեքսունց Սեթն յեկավ, իր գրկից Մարուքի կոտրած խոփը տարավ, անփող նորոգեց ու բերավ ել յետ տվավ տիրոջը:

— Շատ ել վոր կոլխոդի մարդ ա, բա մի թիքա աղ ու հաց ել ա չի կորել իմ տանը, վոր մի լավութին ել մեղ աներ, մեր խոփն ել դգեր ու մեղ տար, — մտածեց նա ինքն իրեն:

— Ճար չկա, ա կնիկ, մհնք ել պտենը մանի կոլխոդ, եղպես ա ուզում կարենս, — ասավ Քոքու ամին, յեր գյուղամիջից տուն վերադարձավ.

— Եի՞, ա մարդ, վհնց թե կարենս ա ուզում:

— Կարենս շաշ տղա չի: Նա ինձանից ու քեզանից ավելի լավ ա հասկանում աշխարհի խերն ու շառը, մեր ոգուտն ու մնացը: Վոր կոլխոդից մեղ ոգուտ չի, բա նա սհենց բան կզրի... — ասաց Քոքոր ամին ու նամակը մեկնեց կնոջը:

Ցեղան նանը վրա ընկապ, նամակը մարգուձերիցն առավ ու գիրը թարս բռնած, յերկու անգամ ծրարից համբուրեց ու կարոտագին կրծքին սեղմեց:

— Արեիդ մեռնեմ, բալա, դարեր դուշ բալա, կարոտս ելա նամակիցդ առնեմ, — ու աչքերում ինչ-վոր փայլից:

— Ես ա զնում եմ պրաշենի տամ կոլխոդին, վոր մեղ ել ընդունեն, — վրա բերեց Քոքոր ամին:

— Այ մարդ, գդվել իսո չին...

— Ելի՞ յեմ գդվել:

— Եելքդ հացի հետն ես կերել: Ուզում ես տունըս բրէշակ անել, շներոց-գելերոց անմէլ:

— Ա՛ Յեղսան, ախր մի տես ինչ ա դրում ե կարենը: Ասում ա, թե վոր ուզում եք, վոր իմ վոտը մեկ ել ձեր ոջախը մտնի, պտի ընդունվեք կոլխոդ, համ ել թե՝ ձեղ կարալ չեմ հացի վող զարգեմ:

— Վայ, ջահել ա ե, ջահել, նա շատ ա հասկա-

նում բանն ընչումն ա... Վոր մեռնեմ ե, կարալ չեմ
հարիր հոգու հմա կարած յորդանի տակ մոռնեմ...

— Ա, կնիկ, նա վոր չի հասկանում, բա դու յես
հասկանում... Յանի կարենը մեր գուշմանն ա... Վոր-
դին իրա ծնողների վատը կուզի... Հալբաթ լավն եղ
ա, վոր ասում ա, — ու Քոքար բիձեն վառած փեշի
կողքին հստած, տրեխներից մեկի կապերը քանդեց,
տրեխը թափ տվեց, գուլպայի կրնկի պատուած մասե-
րն իրար վրա բերեց, նորից հագավ ու տեղից դը-
վարությամբ բարձրացավ; Յերբ Քոքոր ամին խնդրա-
զիրը ձեռին սենյակից դուրս յեկավ, Յեղանը շատ
յերկար աչքը նամակին գցած, տեղումը մեխված մնաց
ու մտածմունքների մեջ ընկավ:

* * *

Զմեու դեռ չեր վերջացել բայց գարնան հոտն
արդեն բուրում եր: Ճկճկան արել խաղում եր սարե-
սի ձյունի վերջին մասցըրդների հետ: Սարի դոշի ա-
մեն փոսից առու յեր բանում: Գյուղի ծուռ ու մուռ
փողոցներում, հոսող ջրերի շնորհիվ հսկայական ցեխ
եր ստեղծվել ու տեղատեղ սայլերն այնպես եյին խըր-
վում ցեխի մեջ, վոր մարդիկ հաղիվ եյին նրանց
դուրս հանում:

Գյուղում աշխուժություն կար:

Ամենի բերանին կոլխոզն եր: Բոլորը խոսում
եյին կոլխոզի մասին, նրա կամ լավը, կամ վատն եյին
ասում:

— Համատարածս վերն ա, ախալեր, թող տան
ամեն մարդ իրա ուզածի պես ապրի ելի, — վանդատ-
մում եր դուքանչի Դեղալ Ունանը, վորի մասին զե-

լացիք միաբերան են եյին ասում, թե՝ «Նրա տանը
ծակ յեղից բացի, ամեն ինչը բոլ ա»:
Երա հետ համամիտ եր և Թոփալենց Մինասը՝
Մելինեյի հայրը:

— Կոլխոզ հնարողի տունը կրակ ընգնիլ պաեր,
առաջ մի որ ինքն իրեն Մինասը, յերբ իմացավ,
վոր գեղի մեծ մասը խնդիր և տվել կոլխոզ մտնելու
համար:

Յեղան նանին ել շատ եր մտածել եղ կոլխոզի
մասին: Յերեկ աղբբի գլխին կնանիք շատ խառնուխա-
թիշ բաներ պատմեցին կոլխոզից: Լավ ել ասին, վատ
ել համա կասես վատն ասող ավելի շատ յեղավ...

— Աղջի, բնչ ասիր, կնկափնին, — հարցրեց ջահել
հարսներից մեկը տերաերի կնոջը:

— Հա բա, կոլխոզում մարդիկ կնկափնիս են ա-
նելու, ով ում կնկան հավանեց, նրա ծոցն ել կերթա,
— վրա բերեցին աիրուհին ու կուլակ Դեղալ Ունանի
կնիկ Սավգյուլը. — բա խելքը գլխին մարդը գլուխը
կնիկը կոլխոզի հանկը կացի, — կուժն ուսը քաշե-
լով վերջացրեց խոսքը Սավգյուլը:

— Եղ լիզուդ քոքիցն ա կտրելու ե... Ա, մերդ
մենի վոչ եղ լի՞ յես սարսաղ-մարսաղ դուս տալիս,
ես կնանոց միաբն ել պղտորում, — վրա բերեց բատրակ
կոլխոզի կնիկ Հեղնարը, վոր գեղի նոր ականվացած կա-
նանցից եր. — ես ա քիրս երկու տարի ա կոլխոզի ան-
դամ ա, բա լի՞ չի մի ահենց բան պատահեց նրան:
Կոլխոզի բնամ գալը ձեղ ձեռնոտու չի համ... Ուզում եք
գեղնարի ելի են մութ մարդիկը մնան, վոր ձեր առաջ-
գելացիք ելի մութ մարդիկը մնան, վոր ձեր առաջ-

իւա դովրանը բանեցնեք համ...

Հեղնարի խոսքը Յեղանանին շատ դուր յեկավ:

— Ինչ տեղին ասեց ե, — մտածեց Յեղշ
սանն ու հիշեց իր թագա խալիչեն, վոր Սավայուլը
տակովս արեց մի թումնում: Եղ են ժամանակն եր, յերբ
կարենին քաղաք ուղարկելու համար փող հարկավոր-
վեց: Յեղսանը ստիպված յեղավ Սավայուլի ոգնությա-
նը դիմել ու խալիչեն նրա մոտ գրավ դնել:

**

Մութն արդեն ընկել եր, վոր Քոքոր ամին առնե-
վերադապ կոլխոզից:

— Ա՛ Յեղսան, գնա մի Բիրդանի տղին կանչե-
կարենիս մի նամակ զրեմ, իմաց անեմ, վոր արդեն
կոլխոզ ենք:

Յեղսանը ընկավ մտածմունքների մեջ: Յերբ Հեղշ
նարը կոլխոզի խաթեր խփեց տիրուհուն ու յերկու թունդ
լոսոք ել ուտեցրեց Սավայուլին, Յեղսանն այնքան վո-
գուստվեց, վոր այն մոմենտին նա շատ ափսոսաց, վոր
ինքը գեռ կոլխոզի անդամ չի. բայց հիմի... հիմի յերբ
արգեն կոլխոզի անդամ ե, հիմի ինչի տրամադրու-
թյունն ընկավ: Զերպողացավ հասկանալ: Նրա միտքը
քամու հարվածներին յենթարկվող ծառի վտիտ ճյուղի
նման մեկ աջ եր թեքվում, մեկ ձախ:

Յեղվագեմ եր կոլխոզը, և լավ:

Լուսաղեմ եր:

Կապտավուն մութը արեկի հառագայթների հեռա-
վոր բեկեկումների տակ հետպհետե ցրվում եր:

Յեղսանը տնից դուրս յելավ հավ ու ճպի կուտ-
տալու, յեղներին կեր տալու համար:

Մտավ գոմ:

Տիրան կովի կողքին փնչացնում եր ու մոք

պտուկների հետ խաղում փոքրիկ աչառը: Կանգնեց մի
պահ Յեղսանն ու անկուշա նայեց:

— Եգուց ել իմը չես ըլելու համ, Ծիրան ջան, —
շթունքների թույլ գողգոզոցով արտասահնեց Յեղսանն
ու մի բան, կարծես, կոկորդին դեմ առավ:

— Ա Յեղսան, վհաց թե Ծիրանը քոնը չի ըլե-
ռու: Եգուց սակ կոլխոզի Ծիրանն ա քոնն ըլելու, — ա-
սավ Քոքոր ամին, վոր աննկատելի ներս եր մտել գո-
մը, ինչ վոր բան վերցնելու համար:

Դեռ արել չեր թեք ընկել եր վերջին հենակե-
տին՝ գիմացի Տավշան սարին, յերբ դյուղում տնե-
տուն լուր ընկավ, թե՝ գյուղն ինչովոր քաղաքի բան-
վոր մարդիկ են յեկել ու գյուղացոց ժողովի յեն կան-
չում: Յեկողը կարի գործարանի բանվորական բրի-
գաղն եր: Շատերը, մանավանդ հասակավորները, իսկի
գաղն եր: Ծատերը, մանավանդ հասակավորները, իսկի
գաղն ել հասականում, թե բրիգագն ինչ բան ե ու բրի-
գաղի տեղ «պըիկազ» եյին առում:

— Արա, Մաթոս, խըճիթում ոլրիկաղ ա յեկել գը-
նանք մի հա տեհնանք ինչ ժողով են անում:

Բրիգաղի ակտիվ անդամներից մեկն ել կարենն եր:
Յեղսանի ու Քոքորի համար կարենի գյուղ գալը
այնքան եր անսպասելի, ինչքան անսպասելի կլիներ
արեկ յերևալը մութ գիշերին:

Քոքորն ուղեկցեց գորդուն ժողովի:

Բազմությունը մեծ եր:

Որակարգի միխը բատրակ Մուքելի առաջարկու-

թյամբ դարձավ համատարած կոլեկտիվացումը:

Հարցը վճռվեց համարյա միահայն: Գյուղը հայ-

տարարվեց կոլեկտիվացման յենթարկված։ Վորոշվեց նաև 4 չարամիտ կուլակի գույքն ու ունեցածքը հանրայնացնել։ Դրանց շարքին եր և Թոփալինց Մինասը։

Ժողովի հետևյալ որը Թոփալինց Մինասի մարագի մոտ յերկու սալիք սահելով անցան ու մտան Մինասի մոտ։

Թեև սակամարդ, բայց այստեղ ել ժողով եր։ Ինչ վճռվեց, հայտնի չե, այսքանը պարզ է միայն, վոր բոլոր հարցերն այստեղ ել վճռվում եյին միաձայն։

* * *

Բրիգագայինները գյուղում կպել եյին յեռանդուն աշխատանքի։ Վոչ մի բարբակ, չքավոր ու միջակ զյուղացի չեր մնացել, վորի համար կամ խոփի, կամ զութան, կամ բահ ու մանգաղ նրանք վերանորոգած չըլինեյին։

Իսկ յերեկոյան դեմ, որվա աշխատանքը վերջացնելուց հետո, կոլխոզնիկներն ու բրիգադայինները հավաքվում եյին «կանցելարում» ու «զասեղանի» սարքում։

Թանձր, մութ գիշեր եր։

Բրիգագի գյուղ գալու յերկրորդ գիշերը, յերբ կարենը մենակ տուն եր վերադառնում, զյուղի նեղ փողոցներից մեկում գտնվող կարենանց անից վոչ հեռու մի սալիք շարժվեց ու վագեց գեղի կարենը։

Մելինեն եր։

Կարեն, կարեն — ձայնեց նա կիսաձայն։

Կարենը սթափվեց, կանգ առավ ու յետ նայեց։ Հստ յերկութիւն, ձայնը ճանաչեց, բայց դժվարացավ հիշել, թե ում ձայնն եւ Շարժվեց գեղի ստվերը։

— Կարեն ջան, բա դու եղքան անգութ ե՞ս, յեկել ես գեղ ու ինձ չես ուզում տեսնել ինձ չես հիշում։
— Մելինե, դու կես գիշերին եստեղ ի՞նչ ես շինում։

— Յեկել եմ քեզ տեսնեմ։ Կարեն ջան, ախր դու իմը չեյթ՝ բա ես դու չես գրեթ՝ ապաց Մելինեն ու մթության միջ ձեռքը տարավ գեղի կուրծքը, շրի տակից հանեց մի նամակ ու մեկնեց գեղի կարենը։

Կարենը մի բովե իրեն կորցրեց։ Մի գուրեկան հուշ փովեց նրա ուղեղում։ Արյունն առանձին յեռանդով կարծես սկսեց խաղալ նրա յերտկներում։ Դեմքն սկսեց այրվել տաքությունից։ Նա աննկատելի մոտեցավ Մելինեյին, գրկեց նրան ու մի համբույր ցանեց նրա այսին։

— Յես քեզ ելի սիրում եմ... համա չե, չեմ սիրում... Յես կարալ չեմ քեզ սիրեմ։

— Բնչի, չփոթված հարց ավեց Մելինեն։

— Դու կուլակի աղջիկ ես, քեզ հետ կապվել չեմ կարող։

Մելինեն վախկու թռչունի պես ամբողջ մարմնով լողում եր։ Նա սկսեց շատ խուլ հեկեկալ։

— Կարեն ջան, ինձ թողնիլ մի բերախտ, յես առջիդ դուլ կլեմ, թաք ըլի դու ինձ հետ ըլես, դու իմն ըլես։

Մելինեն ու Կարենը բոլորովին չնկատեցին, թե ինչպես նեղ փողոցի անկյունից մի մարդկային ստվեր վստակերի ծայրերով անցավ փողոցի մի անկյունը։

— Դումք, լսվեց հրացանի մի սպայթյուն ու Մելինեն ձաց։ Գնդակը կպել եր ճիշտ Մելինեյի կողքին ու նա ընկավ կարենի վրա։

Գյուղն իրարանցում ընկավ: Գյուղի ակտիվն ու
բրիգադայինները վոտքի յելան:

Մարդասպանը բռնվեց:

Թոփալենց Մինասն եր: Կատարել եր կուլտակների ժողովի են զիշերված տերրորի վորոշումը: Բայց Կարենին սպանելու անեղ սպանել եր իր աղջկան.

* * *

Կոլխոզը որեցոր ծաղկում եր:

Ամբողջ գյուղը, առես մի փեթակի մեղու դառած, քրտնաջան աշխատում եր:

Կոլխոզի ամեն մի անդամ մտել եր իր գերը և զիշտեր իր անելիքը: Աշխատանքը կոլխոզիկների մեջ բաժանելու ժամանակ Քոքոր ամուն ընկել եր կոլխոզի անսպուններին հետեւեն ու տիրություն անելու աշխատանքը:

Գարնան շունչը տարածվել եր ամենուրեք: Դաշտերն սկսել եյին անդադադ կանաչին տալ: Դեղի ճամրին ինչոր անսովոր գյուղատնտեսական մաշինք յերևացին:

Զուխտ տրակտորներ ինչ-վոր անուշ խրխնջում եյին գաշտում, յերբ Թոփալենց Մինասին տարան քաղանա նստեցնելու:

Նա գնում եր գունատ, մտքերի ծանրության տակ գլուխը ճկած ու շարունակ կրկնում եր.

— Ի՞նչ արի, յես իմ ձեռքով առւն քանդեցի, — ու յերեսակայության մեջ պատկերացնում եր նա Մելինեյին զիակնացած, արնաթաթակ իր առջև գրված մւմ սպանեցի, ինք ինձ, — մըթմթաց նա ինքն իւրին:

Գարուն եր արդեն:

ՆՈՒՆՈՒՖԸ

Վարդաբլուր գյուղում ենքան վարդեր չկային, ինչքան բլուրներ, բայց թե ինչու գյուղը Վարդաբլուր եր կոչվում, դա շատ շատերի համար մնում եր հանելուկ: Լեռնային մշուշում պահ մտած ու բլուրներից կազմված այդ գյուղը վարդի յերես համարյա թե չեր տեսնում, յեթե հաշվի չառնենք այն միակ թռուփը, վառը պատահական անցորդի պես հյուր եր ընկել Համբոյինց փոքրիկ բախչան:

Ամեն գարնան փթթում ու ծաղկում եր վարդի այդ լղարիկ թռուփը, բոսոր ծաղիկներով գուգում եր իր կարճիկ իրանն ու գյուղի ջահելների ուշադրությունն եր վրա գրավում: Բլուրներից մեկի վրա միայնակ բազմած վարդի այդ թռուփն եր գուցե պատճառը, վոր գյուղը կոչվում եր Վարդաբլուր:

* * *

Գարնան արեկող որերին, յերբ գանգրահեր ու թուխաչյա նունուֆը Համբոյինց բախչի մոտով կուժն ուսին աղբյուրն եր գնում, նա իր արեսականչ ու խոնուն հայացքն ուզզում եր զեպի ժպտերես վարդենին, մի պահ կանգ եր առնում, անհագուրդ նայում ու ապա ինչ-վոր անորոշ ցանկություն թրթում, վետ վետում եր նրա հոգու խորքում:

— Ես տունը մերը պտեր, — մտածում եր նա աշմեն անգամ ու առկայժող աչքերը հազիվ պոկելով տանու բախչայի վրայից, շարունակում եր ճամբան:

Դժվար չեր գուշակել վոր նրա ուզածը ենքան բլրին թառ ըլած քարաշեն ու ցեխածեփ տունը չեր, վորքան այդ տան մեջ վարդենու նման փթթած սևաչյա Մամոն եր, վորին հիշելիս անգամ խնձորի նման կարմրում եր Նունուֆը:

* * *

Անցան որեր...

Ու յեղավ ենպես, ինչպես Նունուֆն եր յերաշում:

Եղ տունը յեղավ Նունուֆենցը, այսինքն՝ Նունուֆը դարձավ համբոյենց հարսը:

Լայնաթիկունք ու սկաչյա Մամոն իրեն շատ յերշանիկ զգաց Նունուֆի հետ:

Բրիգադավար եր Մամոն կոլխոզում և ակտիվիստ կոմսոմոլիստաներից ամենաակտիվը: Յերբ նրա հայրը՝ կոլխոզնիկ համբոն մեռավ, նա լիովին փոխարինեց հոռը և համառ պայքար տարավ կոլխոզը քանզող կուլտակների դեմ: Մի որ նույնիսկ կուլակ Գասպարը փորձեց սպանել նրան, բայց բան գուրս չեկավ ու չարագործը տեղն ու տեղը բռնվեց ու բանա դրվեց:

Նունուֆը թէ ու թիկունք յեղավ Մամոյին: Մամոն վոչ ախալեր ուներ, վոչ քույր: Նունուֆը փոխարինեց թէ մեկին ու թէ մյուսին:

Կոլխոզում Մամոն բրիգադի հոգին եր: Նրա բրիգադը պլանների թերակատարում չգիտեր:

Ավելին, վորտեղ պլանի թերակատարում, այնտեղ

Մամոյի բրիգադը պիտի ոգնության համակեր ու ճեղքը վերացներ: Նունուֆը կարծես կրկնապատկեց նրա աշխատանքային վոգերությունն ու յեռանդը. գուցեայդ եր պատճառը, վոր նա ավելի ու ավելի սիրեց Նունուֆին:

Մի որ, յերբ նրան ուղարկեցին ուայոնական կենարոն կոլխոզնիկների կոնֆերենցիա, վերագարձին նա Նունուֆի համար մի գույց նախշուն չափությունը բերեց: Մամոյի մայրը՝ Զանանը հեչ չխանդեց, թեև դա առաջին անգամն եր, վոր քաղաքից գալիս գորդին իրեն համար ընծա չեր բերում:

Նունուֆը մի որ շատ տիրեց, ասես ունքերից գորշ ամպի կատրներ կախ ընկան:

Մամոն զնում եր կարմիր բանակ:

— Ախչի, բա ամանչում չեմ... Նոթերդ ընենց կիւտել ես, ասես զնում եմ, վոր ել չգամ, — հանգստացրեց Մամոն Նունուֆին:

— Գալդ գիրամ, վոր գալ պտես, համա դե աչք ա ելի, իրեն փայ արտասուքն ուզում ա, — գոզնոցի ծայրով աչքերը սրբելով, հազիվ զսպեց լացը Նունուֆը:

Յերբ նորակոչիկներին ուղեկցող զուռնի ձայնը հեռու տարածության մեջ մարեց, նոր միայն Զանան նանին ու Նունուֆը տուն գարձան, արցունքի փայլ փըլուն կաթիլներն աչքերին:

Առաջին նամակը Մամոյից ստացվեց նրա բանակ մեկնելուց ուղիղ ամիս ու կես անց: Կոտրտած գրերով գրած նամակում Մամոն նկարագրում եր, թէ ինչպես իրենք տեղ հասան, ինչպես իրենց զիմապորեցին և ինչպիսի վերաբերմունք կա բանակում զեպի նորակոչիկները: Նամակի վերջում՝ Զանանի ու Նունուֆի հա-

լը հարցնելուց հետո, Մամոն Նուռնուֆին առաջարկում եր խարաբներ գրել գեղի անց ու դարձից ու ակտիվ կերպով մասնակցել կոլխոզի աշխատանքներին, մինչև իր դալը:

— Թող մեր գուշմանների՝ աչքը քոռանա: Քու ակտիվ աշխատելը համ տան համար լավ կլի, համ քեզ համար, տանը տիսուր չես նստի, — գրում եր նա:

Եւրբ Նուռնուֆը գիրը հազիվ ջոկելով նամակը կարդաց, Զանան նանը մոտը նստած, մերթ տիրում, մերթ ուրախանում եր, ուրախանալու պահին նրա գեմքի կնճիռներն, ասես, անհայտանում եյին:

Նուռնուֆը խնամքով նամակը ծալծեց ու կոխեց սնդուկի մի անկյունը:

Ամեն անգամ, յերբ Նուռնուֆի միան եր գալիս Մամոն, սկեսրոջից թագուն հանում եր սնդուկից նամակին ու նորից կարգում ու ելի խնամքով ծալում ու դնում իր տեղը:

* * *

Բերքառատ գաշտերը բանուժի կարիք ունեյին: Յորենի հասուն ու վոսկեհատիկ հասկերը գլուխները կախ զցած սպասում եյին, վոր հյուր գան իրենց հողն գացող մեքենան ու մարդը, գուրգուրեն, խնամքով փնջեն և արնի ու անձրեի ծեծկումներից ազատելով, հանգիստ տան իրենց:

Դյուզի կոլխոզում ընդհանուր ժողով եւ:

Մայրամուտին գեմ կոլխոզները կամաց-կամաց հավաքվում են զպրոցի սրահներից մեկում:

— Ընկերներ, 10 որդա ժամկետում կոլխոզի բերքը պտի համաքված ըլի, վորպեսզի պետությանը

հանձնավելիքը հանձնվի պետության, իսկ մնացածը տեղավորվի կոլխոզի ամբարներում, — հայտարարեց կուլիովի հախազան Արութը, — համա, վոնց վոր ձեզ եւ խոզի հայտարար Արութը, — հազիր համար քայլությանի ա, մեզ մոտ բանովը քիչ ա, ուտողը շատ: Մարդիկ կան, վոր հազիր հաղթաբացի յեն ման գալիս: Մեկ հարկավոր ա թագբանների դիմակը պատռել, նըրանց կարգի հրավիրել վորպեսզի բերքահավաքի գործը չտապալիքի:

— Եղ վաղուց եր պետք, — ձայնեց տեղից Կակոսանց Ունանը, 40 տարեկանին մոտ մի մարդ, վորի աչքերի փոսերը խոսելիս կարծես ավելի եյին խորանում:

— Եղ լավ ա, վոր գու ել չես ժխտում, — վրա բերքը Արութը զայրութը հազիվ զստելով, — հենց մեկը քեզ նման լողի դիմակն ա հարկավոր պատռել վոր գործի որմեջ ես գուրս դալիս:

— Բա խի, յես պարտավոր եմ աշխատեմ, վոր չամբունց, Վրթոանց ու ուիշների ոջախները վայելին... — առարկեց Ունանը:

— Ամենքն իրենց աշխատանքն են վայելում, դուք քո արշինով մի չափի ուրիշներին, — կարուկ հատեց նրա խոսքը Արութը:

— Բա երեգ համբոյենցից մարդ խի չեր յեկել հանգը հնձի:

— Ընկերներ, — զողացող ու ամոթիսած ձայնով միջամտեց Նուռնուֆը ու նոնեգույն շրթունքները հուզմունքից խաղ տվին: — Երեկու որ եր, վրես հալ չկար, որ վոնց աշխատեյի: Այ հմի լավ եմ, ելի կարող եմ աշխատել:

— Դե, Նուռնուֆին նոր չպիտի ձնանչենք, մենք

ամենքս՝ ել գիտանք, թե նա վոնց աշխատող ա, Ունանը թող իրա գարզը քաշի, — մեջ ընկան մի խումբ կոլխողնիկներ:

Նունուֆի ինքնասիրությունը շոյվեց, հուզմունքից գույն ավեցի գույն առավ ու տեղը նստեց:

Բայց ինչ-վոր միտք նրան անհանգստացնում եր: — Հմի վոր չասեմ, բա ել յերբ ասեմ, — մտմտաց նա ինքն իրեն ու ջանը քոր ընկածի պես տեղում անհանգիստ շարժումներ արեց: Թվում եր, թե Նունուֆին ինչ-վոր ներքին պայքար և ապրում:

Յես հա հիվանդ եյի, հնձի չեկա, Փարսոյին բնչ եր ըլել, վոր երեգ ու ըսոր աշխատանքի չի յեկել: Բա խի չի զրա մասին ել խոսում Ռւնանը: Փարսոն իրեն ախտերն ա հա, — տեղից յելավ ու վճռական տեսնով խոսեց Նունուֆը: — Դե, Փարսոյի դուռը դասն կած ա ու յես տեսնում ու իմանում եմ: Փարսոն յերկու որ ա կուլակ Մաղաքի հնձին ա զընում, ու կոլխողին խարար ա անում, թե միթամ բերեմ ա...:

Դահլիճում վոնց վոր սումբ, պայթի:

Փարսոն, վոր դահլիճի վերջին շարքերում նստած եր, ատամները կրծտացրեց ու աչքերն ասես արնակաւեցին:

— Սուտ ա, սուտ ա, — տեղից ժանգոտ ձայնով զոռաց նա, բայց մտքում ասաց. — «Ա զատի, տես, թե քու հախիցը վոնց գամ յես»:

Նունուֆի ջանը մի անսովոր դող ընկավ, ասես, ինքն եր գողության մեջ բւնվեր:

Յերբ ժողովը վերջացավ ու ժողովականները ցըիվ յեկան զյուղի անհարթ ու քարաշատ փողոցներում

Նունուֆը չառ յերկար խորհեց այն մասին, թե լավ արեց, արդյոք, վոր Փարսոյի արարքը բացեց, թե չեղակես եր պետք, շատ ել լավ արեցի, — վըճառեց նա:

* * *

Այն գիշեր Նունուֆը շատ եր անհանգիստ: Գիշերը հազիվ կես ըլած լիներ, յերբ Նունուֆի աշքերը բացվեցին զբուծ լավող թեթև քայլերից: Նունուֆի սիրտն ահ ընկավ, ուղեց իրեն հանգստացնել ու պուր քնի տալ, բայց մեկը կարծես նրան հրեց ու տնից դուրս զցեց: Նա հիշեց, վոր Մամոյի հրացանը մասանում կախ տած ա. ափսոս միայն, վոր հրացանից կրակել չդիմե:

— Վեր ունեմ, — մտածեց նա, — թե մարդ յեղավ, չկրակեմ եր բալքի վախեցնեմ:

Յերբ նա հրացանը ձեռքին սենյակից դուրս յելավ, Զանան նանը ստիերի նման հետեւից արդեն քայլում եր.

— Ախչի, Նունուֆ ջան, եղ ուր...

— Վոչինչ, մայրիկ ջան, գնամ կովին մի աշք ածեմ:

Եղ նույն պահին գոմի յերդիկի կողմից ինչ-վոր վստերի թմիթմիոց լավեց...

Նունուֆը Զանանին ել բան չասաց, բայց գլխի ընկավ, վոր մեջտեղը գողության հոտ կա, ու անպատճառ Փանոսի մատը մեջը խառն ա:

Զե վոր նա իր գողությամբ ել հայտնի յեր:

Հաջորդ որը եղ պատմությունն արգեն հայտնի յեր կոլխողի վարչության նախագահին ու կոմբջիջի քարտուղարին:

Յերկու գիշեր դարան մտնելուց հետո; Փանոսը քոնվեց հանցագործ մտադրության մեջ և բանտ ու զարկվեց:

Իսկ Նունուֆն ավելի կրկնապատկեց իր յեռան- գը և ավելի նվիրվեց կոլխոզի աշխատանքներին: Նա իր ակտիվ աշխատանքով աչքի ընկավ կոլխոզնիկների քրջանում և նույն իսկ մի որ կոմբջիջի քարտուղար ընկ. Մելիտոնն առաջարկեց նրան հայտարարություն ներկայացնել կուսաշարքերն ընդունվելու համար:

Այդ առաջարկը շատ հաճելի թվաց Նունուֆին: Ինչքան կուրախանա Մամոն, յերբ իմանա Նունուֆի կուսարքերը մտնելու լուրը:

Մի բան միայն նրան շատ եր անհանգստացնում. այդ այն եր, թե, արդյոք, Ի՞նչպես կնայի այդ խնդրին Զանան նանը, վորին այնքան ել դուք չեր գալիս, վոր իր հարսը շարունակ ես ու են տղամարդու հետ ընկած յա գոնեգուսն ա գնում, յա ժողովից ժողով ա վազում:

Կալերն արդեն լիքն եյին ցորնի փոսկեղին հա- տիկներով ու սայլաշարքը-սայլաշարքի հետևից գյուղի անհարթ համբաներով ուղղվում եյին դեպի հատիկա- հավաք կետերը:

Նունուֆը կոլխոզում լիովին փոխարինում եր Մա- մոյին ու տղամարդկանց հավասար աշխատանք կա- տարում: Նա մտքում զբել եր այնպիս անել, վոր Համ- բոյենց վրա լեզու բանեցնող բոլորովին չինի: Բայց և զլխից բոլորովին չեր հետանում ըջիջին հայտարա- րություն տալու խնդիրը:

Մամոն իր յերկրորդ նամակում տանեցիների հալն ու ափալը հարցնելուց և զրությունը նկարագրե-

լուց հետո նորից եր կրկնում կոլխոզում ու գեղում ակտիվ աշխատանք տանելու մասին:

Մի յերեկո, յերբ աշխատանքից հոգնած գյուղն արգեն թմրել քուն եր մտեր Զանան նանն ել սենյա- կի մի անկյունում անկողնում հանգիստ մշմշացնում եր, Նունուֆը լամպի աղոտ լույսի տակ նստած գիր եր զրում Մամոյին: Եամակը վերջացնելուն պես, վերց- րեց մի յուղած թղթի կտոր ու զրեց.

«Կուսընկերներ, խնդրեմ ինձ ել ձեր շարքերն ընդունեք, յեթե գտնեք, վոր յես արժանի յեմ: Յես շատ եմ ուղում ձեղ հետ աշխատել ու կոլ- խողը վոտի կանգնեցնել:

Համբոյենց Նախութ»:

Նախ քան թղթի կտորը ծալելը, նամակի հետ ծը- րարի մեջ զնելը, Նունուֆը նամակի տակն ավելացրեց:

«Մամո ջան, զրում ես, վոր դու բանակում ավե- լի գրագետ ես գարձել ուղարկում եմ քեզ բջիջին զրած զայտկենիս. թե վոր սխալ բան կա, ուղղի ու յեդ զրգի, վոր հանձնեմ Մելիտոնին:

Մնամ զրու կարոտով՝ Նունուֆ».

Մի ամիս անց պատասխան յեկավ Մամոյից, զր- ությունը մեջը:

Մամոն իր հրճվանքը հայտնել եր յերկտողով: «Նունուֆ ջան, շատ լավ ես զրել շատ լավ ես անում: Վոր գամ, քեզ համար մի խաս շրացու յեմ բերելու»:

Համբոյենց բախչի վարդի թուփը ամեն գարնան շնչին դեռ ելի փթթում եր ու զելի ջահեների ուշա- զրությունն իր վրա զրավում:

ՈՒՄ ՀԱՍԱՐ...

Յես նրան առաջին անգամ հանդիպեցի հյուսիսի
խոռվ քաղաքներից մեկում, յերբ նա մեծ պատերազմի
որերին ուղարկվել եր պահեստի ինչ-վոր մի գունդ: Այդ
գունդը համարում եր պատրաստում բանակի զանազան
զորամասերի համար:

Մեր ծանօթությունը շատ պատահական յեղավ
և շատ ել կարճ տևեց, վորովհետեւ ընկանք տարբեր
զորամասեր:

Թիկնեղ ու սիրունագեմ յերիտասարդ եր թորոսը՝
արեւելու պղնձագույն գեմքով, սև ու խոշոր աչքերով:
Նրա վերին շրթունքի աջ ափը համախ ցնցվում եր:
Հիվանդագին յերեսույթ եր դա, և այդ հանգամանքը
չեր կարող վրիպել իմ ուշադրությունից:

Մի որ, յերբ հանգստի ժամին զորագնդի բակում,
սովորականի նման, նրա հետ նստած զրույց եյինք
անում, շրթունքի ցնցումը նկատելուն պես, յես կա-
տակի ձեռվ դիմեցի նրան:

— Թորոս, ջղային ես յերեսում, հա...

— Ե՛, Մելքոն յեղայր, են ոյինը, վոր իմ գլու-
խըն ա յեկել ուրիշը դժվար թե դիմանար:

Նա այնպիսի գառնությամբ ու այնպիս հուզվե-
րով ասաց այս վերջին խոսքերը, վոր ակամայից իմ
հետաքրքրությունը բորբոքվեց:

Ի՞նչը կարող եր այնքան հուզել այդ դեռևս
իր ծաղկուն հասակն ապրող յերիտասարդին, — մոտ-
ծեցի յես:

— Վաղմեց ե այդ հիվանդությունը:

— Այն որից, յերբ գյուղի տեր ու ակրական
վաշխառու Մեսրոբ աղեն մեր տան բախտի անիվը
շրջեց, — աչքերը հրակալած, շրթունքի ծայրի ցնցում-
ները կրկնապատկած վրա բերեց նա ու սկսեց անել
իր թախծալից անցյալի պատմությունը:

Յերկար չեր այդ պատմությունը:

Սկսվել եր նա վաշխառու Մեսրոբ աղայի աղային
ծեծելուց, յերբ նա փորձել եր պարտքի գիմաց վերջին
յեղը դուրս քաշել գոմից: Պատմությունը վերջացել եր
նրանով, վոր Մեսրոբ աղեն, գեղական ստարշինայի
հետ խոսքը մեկ արած, զլուխն ազատելու համար գյու-
ղից փախած թորոսին բռնել եր տվել ու սալդաթ զըր-
կել՝ իրեն տղի փոխարեն ու թորոսի հորն ել — Մելքո-
նեղ դայուն 2 ամիս տուսաղ եր անել տվել: Այդ ձևով
եր նա լուծել իր վրեժը թորոսից:

— Հիմիկս ել կնկանիցս նամակ եմ ստանում, թե
հերդ կուրացավ, տանդ ել վարին ու հանգին նայող
չկա, տուններս քանդվում, դրները վրեններս խուփ ա-
ըլում, — հաղիվ լացը զսպելով արտասանեց նա: — Ես
պատերազմին ել վերջ չի ըլում, վոր գնանք մեր անե-
րը, ավերված ոջախներիս տիրություն անենք:

Ի՞նչ կարող եյի ասել, ինչով կարող եյի հանգըս-
տացնել սրտամորմոք յերիտասարդին: Թե ասեյի «ար-
խային կաց, ես ա պատերազմը կվերջանա, կդնաս
տուն», ինչպես ասեյի, քանի վոր ինքս չեյի հավա-
տում պատերազմի շուտ վերջանալուն: Պատերազմը

դեռ նոր-նոր եր թեժանում, նոր-նոր պետություններ
եյին խառնվում պատերազմին ու թնդանոթների հրա-
կալած յերախներով խոսում միմյանց հետ:

Արյան առուները ֆրոնտում վեր եյին ածվում
արյան գետերի:

Սրտմաշուկ ու մղձավանջային եյին որերը:

* * *

Դվինսկ—Ռիգա ճակատամասի կոփիվերը համար-
վում եյին վճռական: Գերմանացիներն այդ ֆրոնտն
եյին նետել իրենց լավագույն և բազմապիսի ուժերը:
Նրանք փորձում եյին ճեղքել այդ ֆրոնտը՝ ուղիղ գը-
ծով Պետրովագի վրա հարձակվելու և ցարական մայ-
րաքաղաքն իրենց ձեռքը ձգելու համար:

Մեր գիվիվիան՝ իրը համալրում, նետվում եր այդ
ճակատամասը: Յերեք որ Բարանովիչում հերթի սպա-
սելուց հետո, վերջապես, մեղ տեղափորեցին գնացքում
և ուղեցին դեպի Դվինսկ:

Արդեն տասն որ մենք գիրքի եյինք նստած Դվին-
սկից 17 վերստ հեռավորության վրա գտնվող ամրաց-
րած խրամատներում: Մեր խրամատները ծածկված
եյին բլինդաժներով, նրանք հիշեցնում եյին քսենո-
ֆոնյան գետնափոր տները՝ հողե մահճակալներով և,
գիշերները ցրաից պաշտպանվելու համար, պալատկա-
ներից սարքված վարագույներով: Յերկշար փշալար
արհեստական խոչընդուաներն ու մի ընդարձակ քացատ-
մեղ բաժանում եյին թշնամուց: Թշնամին գրավել եր
քացատի այն կողմն ընկած անտառի փեշերը:

Բոլորս ել սպասողական գրության մեջ եյինք:

Կովի, ավելի շուտ գրոհի ուրիշականը բոպե առ
բոպե հետապնդում եր մեզ:

Բայց լայն ֆրոնտով կոիվ տեղի չեր ունենում:
Ըստ յերեսույթին, թշնամին դեռևս հավաքում եր իր
ուժերը՝ գրոհելու համար:

Թեև մեր աջ կամ ձախ թեր կողմից բավում եր
թնդանոթի գնդակի հատ ու կենա դզրդյուն, կամ գըն-
դացիրների տկտկոց, բայց դա գեռևս այն չեր, ինչ
վոր տեսել կամ սպասում եյինք գերմանացիներից:

Հոկտեմբերյան որեր եյին:

Աշունը նոր եր թափահարում իրեն:

Առավոտը—թանձր ու անթափանց մառախուղ՝

կեսորին թույլ ու ջերմագուրք արե, հետո նորից մա-
սախուղ՝ շրջակա անտառը մշուցալ—ահա հյուսիսի հոկ-
տեմբերի հունարը:

Ծառի տակ նստած ոգտվում եյի աշնան թույլ
արկից: Իմ յետելից մեկը ուստ ցնցեց:

— Մելքոն յեղբայր, դեռ սազ ես:

Դեմ կանգնած եր թորոսը՝ կենապաթքիու ժպե-

տը յերեսին, մի ոստ զինվարի հետ միասին:

Ինձ այնքան ել տարորինակ չթվաց այս հարցը,
վորովհետեւ այդ դարձվածքը ֆրոնտում գանգողների
համար սովորական եր, Հաճախ, շատ հաճախ, կոփիվե-
րի որերին զինվորները ֆրոնտում թիթեռնեկի կյան-
քով են ապրում:

Այսոր կաս, վաղբա, ել չկաս:

Զինվորն առաջին որը շարքերում, առաջին գը-
ծումն ե, յերկրորդ որը՝ գնդումն ել չեւ բարձր առ ուրի

կամ սպանվել, կամ վիրավորվել ու թիկունք
ուղարկվել:

Թորոսի անսպասելի հայտնվելն ինձ մեծ խնդություն պատճառեց: Վաղուց մենք բաժանվել ու այլս չելինք տեսնվել:

Ինձ զարմացրեց Թորոսի վզովը գցած դաշտային հեռախոսի արկղիկը:

— Եղ ուր:

— Զեր վաշտի տեղամասը, — պատասխանեց նա հազիվ լսելի ձայնով, — բատարեյայի նավողկայի*) համար:

Պարզվեց, վոր նա հետիոտն գնդից խնդրել ու տեղափոխվել ե հրետանու բատարեյան, կարճ ժամանակամիջոցում ծանոթացել ե թնդանոթի հետ և բատարեյայում դարձել ե նավողչիկ:

— Զահես գնաց ես կոփմերից, զահես. մի գյուղ-լս ելա ինձ չի կպչում, վոր յա գես ըլեմ, յա գեն, — գանգասովեց նորից Թորոսը. — հրես, երեկ ել կոնջից նամակ ստացա, թե մի կերպ արա, արի: Ախը վոնց գնամ. կարծես գնալն իմ ձեռին ա ու յես ել չեմ գը-նում: Հալբաթ մի որ մի բան կդնա ելի... մտմտաց նա, — կամ մենք կդնանք, կամ մեր մահվան խարարը:

— Լավ բերան բաց արա, Թորոս, ի՞նչ ես կը-կում ագռավի պես:

— Մելքոն յեղբայր, ենպես ես ասում, կարծես, դու համոզված ես, վոր սաղսալամաթ պիտի պոկ գաս եսանդից: Ծիւը վոր ծիտ ա, նա ել ես բարութի ոդից անվաս գուրս չի պրծնում, դու ես ուզում պրծնեմս...

Յերկուս ել մի պահ լոեցինք: Յես զգում եյի, վոր նա իրավացի յեր:

*) Թնդանոթից թշնամու վրա կըակելու համար ուղղություն ցույց տալու:

— Մելքոն յեղբայր, — անսպասելի վրա բերեց Թորոսը, — մարդ ենք, ամեն բանի մասին մարդ առաջուց պիտի մտածի: Ես ա, գիտես, վոր եսոր մենք գրոհելու յենք պատրաստվում: Խոսք տուր, թե վոր ինձ բան պատահի, դու մեր տուն խաբար անես, թե վոր քեզ պատահի, յես խաբար կանեմ. բնը՝ քեզ իմ աղբեւոը, — այս ասկով նա մի թղթի կտոր պատրաստ զրած գլխարկից հանեց ու ինձ տիեց:

Յես մի պահ շշմեցի: Զգիտեյի ինչ կերպ վարվել մինչ յես կմտածեյի, թղթի կտորը մեքենայորեն ընկել եր արդեն ձեռքս:

Այ թեմի կողմից գնդացիրի ձայն լսվեց:

Թորոսն ու իր ընկերը շտագ մնաս բարով ասին ու բարձրացան մոտակա ծառապատ թմբի զլուխը՝ նա-գողկայի տեղ վորոնելու: Հեռվից յես զեռ ելի տեսնում եյի նրանց գլուխները: Մի անգամ ել զլխարկներով ու ձեռքի նշաններով խոսեցինք իրար հետ:

Բարակ անձրես մաղում, ծառերի ու տերենների աշքերից արցունքներ եր քամում:

Վաղուց արդեն մենք նստած եյինք մեր զիրքերում:

Թշնամին սկսեց մի կատաղի թնդանոթային գրոհ: Թշնամու թնդանոթներից արձակվող 6—8 մատնաշափանոց գնդակները նոր ու հսկայական փոսեր եյին փորում մեր խրամատների ուղղությամբ: Թշնամուն աշղողիկ եր մեր զիրքերի ուղղությունը գտներ Ռւ նա ծեծում եր մեզ անխնա՝ գնդացիրներից՝ ողանավերից նետվող ուղմբերի ձայնացությամբ: Աջից ու ձափից փոշու թանձր քուլաներ լեռնանում եյին մըրկիվող ծովի ալիքների նման ու գահավեժ թափում ցած:

Զինվորները բոլորը դուրս թափվեցին խրամատներից և նետվեցին վոմանք զնդակների փորած փոսերը, վոմանք գեպի խիտ ծառուտները:

Կես ժամ անց, թնդանոթները լոեցին, գնդացիրները դադարեցին խոսել արյան լեզով:

Սանիտարներն անցան աշխատանքին: Նրանք անվերջ կրում եյին նասիլկաներով — դիակներ ու վիրավորների:

Գունատ արե ծիածանեց լազուրում:

Յերբ հայացքս գարձրի խմբի կողմը, թորոսն այլև չեր յերեռմ: Նետվեցի գեպի թումբը: Թորոսի բանած դիրքի տեղում մի հակայական փոս կար միայն: Հողի տակից յերեռմ եր փոշեծածի մի վոսք միմիայն:

Թորոսի վոտքն եր այդ: Մազովի պատճառով կըտրած սապոդից ճանաչեցի:

Գունատ հուսալքում պատեց ինձ: Այդնույն արհավիրքը ակնհայտ սպասում եր և ինձ:

Կատարել թորոսի խնդիրը, դրել նամակ, — մտածեցի յես մի պահ:

— Չե, չեմ գրի, — վճռեցի յես:

Ինձ համար շատ դժվարին խնդիր:

Ինչու այդքան ծանր պարտականություն դրիլ ինձ վրա, լնկ. Թորոս, — դժգոհեցի յես մի պահ:

ՄիխԱԿ ԴԱՅԻՆ

Առատառատ անձրեներից ուռճացան բամբակի կանաչ թփիկները, խոնավ հողից կուշտակուշտ ծծեցին այս, ինչ հարկավոր եր փթթելու համար ու... արև յերազեցին:

Յելավ արել կենսաթրթիս ու պայծառ:

Ծփաց բամբակի կանաչ ծովը:

Հեռավոր ծառերի կատարներից թրթռուն յերգերով վողջունեցին սարյակները յերնող բրոնզե արեկն ու խնդուն թռիչք տվին դեպի հարևան ծառերը:

Հեռանիստ տափաստանի հարավ-արեկելյան կողմը աղմկում եր «Փորձոնք» կայտառ ու աշխույժ և ակոսում կոլխովի աշնանացանի լայնածիգ ու ընդարձակ հողերը:

Իսկ արևախանձ գեմքով կոլխովի մարդիկ բամբակի քաղհան եյին անում զաշտում, մաքրում բամբակի ցանքը մզախոտերից, վարպետի յերկիրն առատ բամբակ ունենա, ապահովի բամբակի անկախությունն ու ծաղկի բանվորա-դյուղացիական ինդուստրիան:

Աշխատանքի վոգեորությունը համակել եր մեծից մինչ փոքրին: Աշխատանքը բամբակի ձերմակ զաշտերում դարձել եր «փառքի, պատվի ու արիության գործ»:

Անհատ կոլխովներ ու բրիգադներ հայտարա-

ըել են սոցմբցում—ով ավելի շատ տարածություն կազմատի մոլախոտերից, ով ավելի շատ քաղհան կանի մինչև բրոնզե արևի թագաւարի մտնելը հեռանիստ լեռների յետևում:

ԶԵ վոր յերեկ ժողովում հայտարարեցին, թե «ով շատ և լավ աշխատի, նա ել շատ կստանա...»։

Իսկ այդ պահին՝

Ալեհեր ու պինձագույն մորուքը տմբտմբացնելով, մի յերկար մահակ ձեռքին Միխակ դային դանդաղ քայլերով գաշտ մեկնեց:

Մի գեղ եր, մի Միխակ դայի։

Պոպաքար գեղում նա մնձից մինչ փոքրի հարականքն եր վայելում։

Դուք կարծում եք Միխակ դային եղ հարգանքը ձեռք եր բերել իրեն հարուստ ամբարների, կթանների կամ թե չել լիքը քսակի մուժով։

Վոչ։

Միխակ դայուն սիրում եյին իր ճեղ բնավորության և լայն սրտի համար։ Գեղում քյասիք տուն չը կար, վորի համար նրա սիրաը ցաված ու ձեռից յեկած ոգնությունը հասցրած չիներ։ Գեղի ձեռը պակաս, ուժը պակաս մարդկանց համար նա սարի նման կանգնած եր։

— Միխակ դայի, մոլախուն ենա արտին խեղդում ա, երեխես ել տաքության մեջ երվում, փոթոթվում ա, գիրում չեմ արտիս յերեխին մտիկ անեմ, թե երեխիս, — գանգաւալից մի որ թոքրանց Մելիխունը, վորը նույնպես գեղի չուներներից եր։

— Բա երեխուն թողած, արտի մասին կմտածեն, — վրա բերեց Միխակ դային, — մարդ ել մարդկու-

թինը վհր որը պար բանեցնի։ Դու երեխիդ իլլաջ անելու մասին մտածի, քաղաք ես տանելու, քաղաք տար, արտիդ քաղհանի մասին մինք հալբաթ մի ճար կանենք։

Ու Մելիխունի յերեխան գնում եր քաղաք, իսկ նրա արտին ճար անողն ու մոլախուից ազատողը մինում եր Միխակ դային, իրեն նման մի յերկու քյաւսիքի հետ միասին։

Սյազես եր նա բոլոր չունեորների համար։ Բայց այդպես եր նա շատ տարիներ առաջ, յերբ ջանին ջան կար, վոտներին՝ ուժ։

Հիմի տարիներն արձիճ եյին կախել նրա վոտերից։

* * *

Գյուղի ծայրին, այնտեղ, ուր խաչաձևվում են արտերի կածանները, տերեախիտ մի ծառի ստվերի տակ հանգստի նստեց Միխակ դային։ Նստեց, վոր շունչ առնի։ Նա չիրուխը հանեց գոտկի միջից, մոտիկ ընկած քարին թափ տվեց, խոթեց մախորկայի քիսի մեջ, լցրեց ու չիրուխի ծայրն ուղղեց գեակի բերանը։

Թանձր ծուխը բերնից ու քթից քուլա-քուլա գուրս թողեց ու ընկալ մաքերի գիրկը։

Ինչքան, ինչքան գործ ունի անելու, բայց... ով անի։ Մենակ մարդն ինչ կարող է անել։ թաք ձեռը ծափ կտամ... Մարան նանն ել ծեր, դաշտային աշխատանքի համարյա անընդունակ, իսկ տղեն... տղեն ել գե ենա քաղաքում, ուսման յետևից ընկած։

Միխակ դային, ճիշտ ե, 60 տարին գլորած մարդ եր, բայց գեռ ելի իրեն աշխատանքի անընդունակ չեր

համարում: Քթից ծուխ եր յելսում, յելք հիշում եր
իր ջահելությունն ու յեռանդը:

— Ելի ուրիշի մուննաթի տակն ընկնողը չեմ, —
միմիթարում եր նա յերբեմն ինքն իրեն, բայց ափառ,
վոր սիրալ... սիրան եր քիչ դավաճանում. նա, վոնց
վոր ինքն եր միշտ տառում, սրաի «թրթոոց» ուներ:

* * *

Յերեք տարի առաջ եր:

Գյուղում կոլխոզ եր կազմակերպվում:

Միխակ դային կոլխոզի մասին ենքան ել պարզ
պատկերացում չուներ, բայց ենքան, ինչքան իրեն
բացատրել ելին, ենքանից գլխի յեր, վոր կոլխոզը
իրերով բան ա, չուներներին կուլակի շահագործումից
ապահովող բան ա:

Ու ել մեմ չորամագրեց կելխոզ մանելու. ինքն ել
առաջիններից մեկն եր, վոր կոլխոզ գրվողների ցու-
ցակի մեջ մտավ, բայց...

Մարան նանը քար դրեց նրա առաջը. բան ել
չհասկացավ, թե ինչ սատանա յեր մտել Մարանի գլու-
խը, վոր չեմ ու չումը ցցեց ու խանգարեց: Ինքն ինչ-
քան չափ ու ձե եր անում, կոլխոզի տված ոգուաը
շատ մեծ եր թվում:

— Ա, Մարան, արի եդ քարը փեշիցդ թափ տու
ու զուր տեղը համառիլ մի, — համոզում եր նա հաճախ
պառավին, — կոլխոզում վոչ վարի համար կմոլորվենք,
վոչ քաղհանի համար, վոչ ել բամբակը ջրելու համար:
Եդ բոլորը բոլորս միասին կանենք, վոնց մի մարդ, ի-
րար մեջք տալով:

Բայց Մարանին վոչ մի խորհուրդ չեր ազդում,
նրան գժվար եր կոտրել:

Մոլորել եր Միխակ դային:

Յերբ ծառի դուրեկան ստվերում բավական հան-
գստացավ, տեղից ծուլորեն յելավ ու չիբուխը փըստ-
փստացնելով ճամբան շարունակեց:

Ահա են ել իր բամբակի արտը:

Կոլխոզի բամբակի արտին մնա:

Վողերգած աշխատանքն աղմկալից հոսում եր
կոլխոզի արտօւմ: Մի զիլ յերգ թրթում եր ողում:

Կոլխոզի արտի կողքին ընկած եւ և իր բամբակը՝
խղճուկ ու գաճաճ: Թփիկները կարծես բողոքով դիմա-
վորեցին Միխակ դայուն, վոր նա ժամանակին չի ա-
զատում իրենց մոլախոտերից, վորպեսզի իրենք եւ
փթթեն ու աճեն այնպես, ինչպես փթթել ու աճել են
հարևան կոլխոզի բամբակի թփիկները:

Միխակ դային ակնապիշ ու մոլորուն յերկար,
շատ յերկար նայեց իր արտին ու հիշեց Մարան նա-
նին, ուզեց նրան հայհոյել, բայց... զեշ խոսքը բերնից
դուրս չեկավ:

— Բա յես ասի վ՞էշ, ա պառավ, վոր հաբկավոր
ա կոլխոզ մտնել, — մտմտաց նա ինքն իրեն, — ախր
կոլխոզն ամեն աշխատանք հեշտ ա կատարում, չունքի
վոր ամենքը նրան թե ու թիկունք են: Յես մենակ
ենքան գործը վոնց անեմ... ես ա քաղհանը քիչ ել ու-
շացնեմ, սպիտակ վոսկին ձեռիցս գնալու ա...

Ու յերկար մտորեց նա՛ աննկատ թախիծն աչքե-
րին:

Կոլխոզի արտօւմ բամբակի թփիկները սվավում
ելին թեթե քամուց:

Յերբ Միխակ դային հայացքը դարձրեց դեպի
իր արտը, տեսավ նրան յեթիմի պես աչքաթող ընկած՝
սիրաը ճմլվեց, կծկվեց ու մտքում վորոշեց յետ դառ-
նալ տուն, պառավին խելք հասկացնել, վոր քանի ուշ
չե, մտնեն կոլխոզ, թե չե ջուրը կզա ու յերկու իս-
տիարին ել կտանի:

Ու նա քայլերն ուղղեց դեպի տուն:

* * *

Կոլխոզնիկ Սենեքը, վոր հարվածային բրիգա-
դերներից մեկն եր, արտադրական խորհրդակցության
ժամանակ առաջարկ մտցրեց բուքսիրի վերցնել չքա-
վոր անհատականների արտերը:

Առաջարկն անցավ միաձայն:

Մի որ ել անցավ:

Ու այն որը, յերբ յերկու իստիարը՝ Միխակ դա-
յին ու Մարան նանը գնում եյին իրենց բամբակի
արտին ճար անելու, կոլխոզի մարդիկ արդեն իրաց-
նում եյին Սենեքի առաջարկը նրանց արտում և հա-
մարյա ավարտում եյին բամբակի յերկրորդ քաղհանը:

Միխակ դայու աչքերից իննությունն ու հըրձ-
վանքը արցունքի ձև ոտացած դուրս ցայտեցին:

— Բա յես վոր ասում եյի...բա յես չեյի ասում...
— մտմտում եր նա ու պառավին մատնացույց անում
կոլխոզնիկների աշխատանքը:

* * *

Անցան որեր:

Բամբակի արտերը ծածկվեցին լայնածավալ ճեր-
մակ սավանով: Բանվորական ուժերը գյուղից ու քա-

դաքից առուշառու հոսեցին դեպի գաշտերը բամբակա-
պվաքի: Խումբը խմբի հայտարարեց սոցմրցում: Ան-
նկատ լցվում եյին բարդանները սպիտակ վոսկով ու
դիզվում եյին այս ու այն կողմը:

Հեռվում ճոճուն սայլերը դանդաղ ու վոլորա-
պտույտ շարժվում եյին դեպի բամբակահաքի կետերը:
Իստիար սայլապաններից մեկը, վոր իրեն հար-
վածային եր հայտարարէ, ճոճում ու ճոճում եր մըտ-
րակն ոգում — հո-հո անում, վոր կոլխոզի յեզները
կրկնապատկին իրենց յեռանդը՝ մի քանի շրջան ավե-
լի կատարելու համար:

Հարվածային սայլապանը Միխակ դային եր:
Քաշտի թեթև ու դուրեկան զովը շոյում եր նը-
կնձուստած դեմքը:



Դ Ա Ր Ձ

Ոսանն ինքն ել նկատեց, վոր մարդը՝ Ալեքն ևն
որն այնքան հարբած չեր, ինչքան բարկացած։ Տարու-
թինակն են եր, վոր նա սովորականից վաղ եր տուն
յեկել։

— Շուտ արա, անկողինս բաց արա, — դիմեց
նա կնոջը հազիվ լսելի ձայնով։

Յերեխանսիրը՝ 5 տարեկան Մարինն ու Շտարե-
կան Նունիկը հորը տեսնելուն պես վրա վազեցին, ու-
ղեցին՝ իրենց սովորության համաձայն՝ վարվել նրան
ու կատվախաղ տալ, բայց իրուր...

— Դենը սադ ըլեք, զլուխս ցավում ա, պիտի
քնիմ, — մրթմրթաց նա ու փոքրերին յետ վանեց ի-
րենից։

— Ալեք ջան, ինչ ա պատահել, հիվանդ խո չես,
— հարց տվեց Ոսանը շառագունած, վոր մոտեցել եր
մարդուն և ուզում եր ոզնել շորերը հանելիս։

— Զահլա մի տանի, քեզ ասում եմ շուտ, անկո-
ղինս բաց արա, պիտի հանգստանամ։

Ոսանը լսեց, ել չուզեց հարց ու փորձը շարու-
նակել, վախեցավ մարդուն ավելի զայրացնել ու ան-
միջապես գործի անցավ։

— Շուն շանմորդի, կտեսնենք, — շնչաց Ալեքն

նքն իրեն, յերբ արդեն բոլորովին շորահան յեղածի
վերմակի տակ եր մտնում։

Հայնոյանքն Ոսանին շատ խորթ թվաց։ Ալեքն
ու հայնոյանք... Յեթե Ալեքի բնավորության մեջ կար
մի գիծ, վորը պատկառանք եր զարթեցնում Ոսանի
մեջ գեղին նա, ապա այդ այն եր, վոր Ալեքը «բերնից
մաքուր եր»։ Ինչքան ել խմած տուն գար, «ջանը» բե-
րանից անպակաս եր։

Ու Ոսանի հետաքրքրությունը լարվեց։ Ել չամ-
բերեց։

— Եղ հեմ ես ուշունց տալիս, Ալեք, շանմորդին
ու ա։

— Քու ազիզ, քու կոմունիստ տեղը, — առանց
կնոջ յերեսին նայելու փնթինթաց Ալեքն ու վերմա-
կը քաշեց վրան։

Քնել յերկար ժամանակ չկարողացավ նա։ Կես
ժամ տեղում շուռ ու մուռ գալուց հետո հազիվ կարո-
ղացավ աչքը կպահել

Ոսանը բան չհասկացավ։ Նա շվարած մեխմել եր
տեղում ու ընկել մտորումների մեջ։ Մտքերի մի թան-
ձըր շերտ, ամպակույտի պես, յեկավ նրա սրտին դեմ
առափ։

«Մացակին ինչի՞ պիտի հայնոյի, — մտածեց
նա, — Մացակին, վորը լավությունից բացի, իրենց վատ
բան չի արել»։

Ոսանը, ճիշտն ասած, շատ ել գոհ չեր Ալեքից։
Ուղիղ ինչը տարի յեր անցել նրանց ամուսնությու-
նից, բայց ինչը տարվա մեջ ինչը մխալի չափ ել
չեր փոխվել նրա բնավորությունը։ Սահնք, փոխվելը՝
փոխվել եր, բայց գեղի վատը։ Դեռ այսոր ել նա իր

լավ ու վատ ընկերներին չեր կարողանում ջոկել այս-
պես, ինչպես իննը տարի առաջ: Դեռ այսոր ել գինին
ու արագը նրա ուշադրության մեջ ավելի մեծ տեղ
ելին գրավում, քան առևնն ու յերեխաները: Ի՞նչ ո-
գուտ, վոր ուշիար ժամանակ գործի մեջ հունարով եր
ու մեծ աշխատավարձ եր վերցնում: Թանի անգամ եր
նա ոռօնիկ ստացած որն ամբողջ ոռօնիկը հարբեցող ըն-
կերների հետ գուրսը կերել ու դատարկ ձեռքով առև
յեկել:

Ոսանը միմուռը սրտին, նախանձով եր նայում
ամուսնու նախկին ընկերներին, վորոնք խորհրդային
իշխանության զրով խելքի յեկան, մարդ դառնան:

— Այ մարդ, խելքի զլուխտ հավաքիր, — հա-
ճախ դժոխում եր նա, — մինչև յերբ զլուխտ գինուն
տուր տաս ու մեզ փոանատակ տաս: Կթքեմ, կթքեմ
քեզ վրա յել, տան ու տեղի վրա յել, յերեխանց
վառնեմ ու կփախչեմ: Հետո նստիր ու մենակ զլուխտ
վայ տուր: Միրսո ցավում ա, վոր տեսնում եմ ընկեր-
ներիդ մարդ դառնած: Հրեն, Ավետին առաջ քաշեցին,
դրին ձեր զավոդում դիրեկտոր: Ասլանին սայյուղում
նախագահ նստացրին, ել մեր հեռու գնանք, քու հա-
րազատ ախուզորդ ձեր զավոդում մեստկոմ նշանակեցին:
Բա զու յերբ ես առաջ գնալու:

— Ե՞ն, ամեն ինչ ել բախտի բան ա, — յերեսը
դարձնելով պատասխանում եր Ալեքը կնոջն ու՝ խոս-
քը շուռ տալով՝ ուրիշ բանից խոսում:

Մացակն ուշիար ժամանակը յերբեմն ներողու-
թյուն եր խնդրում կնոջից, մանավանդ, յերբ նա զըմ-
գոհելու ժամանակ արցունք եր ցույց տալիս ու խոս-
տանում, վոր ել չի խմի, բայց խոստումը միշտ ել

դրժում եր ու հետեւյալ որն ելի խմած եր տուն գա-
լիս: Ոսանը հոգնել եր շատ խրատելուց: Նրան տան-
ջողը մի հարց եր, թե չինի Ալեքին հարբեցողության
պատճառով նորից հեռացնեն գործից և գործադրկու-
թյունն ու կարիքը նորից գան իրենց գուանը չոքեն:
Այսպես թե այնպիս, հո մի կտոր հաց տուն եր բե-
րում: Զե վոր մի անգամ նրան գործից հեռացրել ելին
հենց նույն պատճառով ու ելի Մացակն եր նրան մի
կերպ պահել:

* *

Գիշերվա ժամը 8-ից հազիվ 15 ըռպե անց, Ո-
սանն արդեն յերեխաներին թեյը տվել վերջացրել ու
քուն եր գրել Արթուն եր մնացել մենակ ինքը: Սե-
նյակի լուսությունը խախտում եր Ալեքի խոսոցը: Ո-
սանն ուզեց յերեխաների չուլքիները կարկատեր, բայց
ձեռքը կար չըռնեց: Ներքին մի անհանգստություն
տիրել եր նրան:

Հանկարծ, կարծես, մի բան միտն ընկալ: Շատապ
տեղից յելավ, թեյի պարագաները պահարանում դա-
սավորեց, թեյամանը կերասինկայի վրայից վերցրեց
ու կրակը հանգըրեց, մոտենյավ յերեխաներին, վեր-
մակները լավ վրա քաշեց, վերարկուն հագավ լամպն
ել քիչ իջեցրեց, տան զուռը դրսից մի անգամ կող-
պեց ու զուռս յեկավ փողոց:

* *

Դուրսը տիրում եր մարտ ամսի շունչը: Յերեկվա
ընթացքում որը յերկու անգամ փոխել եր իր դեմքը:
Առավոտավա ձյունին հաջորդել եր ճաշվա զուրեկան,

բայց դեռևս թույլ արել, իսկ գիշերը, յերբ Ռամնը փողոցի աջ մայթի վրայով շորոր տալով ու մտադրադ գնում եր, մի բան թրջում եր և գետինը, և նրան գժվար եր վորոշեր թե ի՞նչն եր նրան թրջում—անձ ըմբը, թե ձյունը:

— Ախր, բանն ինչնեմն ա, — զնում եր նա փողոցով ու վորոճում այս հարցը. գնում եր Մացակից մի բան իմանա:

Յերկու փողոց թեքեց նա միայն ու արգեն սկեսութեաց տանն եր:

— Ախչի, ես կես գիշերին մենակ ի՞նչ ես յեկել հը, բան հո չի պատահել, — անհանդիսա հարց տվեց սկեսութե՝ դալլաքանց հերիքը, վոր խշխշան սամովարի մոտ յերկուտակված նստել, թեյի բաժակներն եր լվանում:

— Զե, մայրիկ ջան, վոչինչ չկա, — պատասխանեց Ռամնը վերարկույի կոճակներն արձակելով: Պառավին դեռ չուզեց վոչինչ ասել բայց քիչ անց, հարցրեց.

— Մացակը տուն չի յեկել...

— Զե, չի յեկել համա, ես ա գալու վախտն ա, — փոքր ի՞նչ հանգտացած պատասխանեց հերիքն ու շարունակեց.

— Ախչի, բա յերեխանցն ում ումուգով ես թողել:

— Ալեքի:

— Եղ վոր խաչիցն ա վաղ ա տուն յեկել հը, ես շաբաթ խո ել չի հարբել:

Պատասխանի փոխարեն Ռամնի աչքերից յերկու ջինջ արցունք դուրս ցայտեցին:

— Ինչ հողը տամ գլխիս, այ վորդի. դրա տունը փիս ընկերներն ու գիշին են քանդում, ուրիշ ոչով Ռակի փեշակը ձեռին, խոսք ու հունարը տեղին, համա ի՞նչ անես, վոր խաթրի գերի, փալաս ա, փալաս:

— Բեզրել եմ, մայրիկ ջան, բեզրել, ել չեմ կարում գիմանամ, — հաղիվ շնչաց Ռամնն ու հուզմունքից շրթերը գողացին. — մինչև յերբ գիմանամ, խըմում ա թե չե, աշխատանքը տանում, ուրիշների փորն ա ածում, իսկ իրան ոչախն ամեն բանից զրկում: Յերեկ առավոտ իսկի հացի փող ել չկար գրպանում: Թե մինչև հիմի ուշուշ եր հարբում, հիմի շաբաթը յերկույի երեք որ հարբած ա տուն գալի, բա վճնց գիմանամ: Բաժանվելն աշխարհի համար աղաթ ա, մեզ բեղաթ... կդնամ, կգնամ, յախս կթափեմ ու կաղատվեմ, — ու Ռամնի սիրուր փլեց, կուտակված վշտերը լացի միջոցով դուրս հոսեցին և լցրին սենյակն ու պառավիր սիրուր մի ճնշող թափիծով...

Հերիքը թողեց թեյի բաժակներն ու մոտեցավ հարսին, ուզեց հանգտացնել նրան:

— Եսոր հետդ հո չի կովել — մրմնջաց նա:

— Զե, չի կովել համա՝ վոնց վոր յերեաց՝ ուրիշի հետ կոված տուն յեկավ:

— Յես նրա արել սև կանեմ, մուլափ մի գամ, — գուրգուրեց պառավը հարսին ու քաշեց նրան սեղանի մոտ:

Դուրս պատշգամբում վոտնաձայն լսվեց: Յեկող կար: Ներս մտավ Մացակը՝ Ալեքի փոքր յեղբայրը:

* *

Մացակը 24 տարեկան, նոր ծլած բեղերով, սիրունագեմ յերիտասարդ եր, աշխատում եր՝ Ալեքի հետ
9

միասին միենույն կաշեգործարանում: Հոր մահից հետո, մայրը ստիպված յեղավ նրան տասը տարեկան հասակում հանել ծխական դարոցից ու աշակերտ տալ կոչկակարի մոտ: Վրաստանի խորհրդայնացման հենց առաջին տարին նա իր յեղբոր՝ Ալեքի ոգնությամբ ընկավ կաշեգործարան ու մինչև որս ել այնտեղ եր աշխատում: Ինքը յեռանդուն ու հետաքրքրվող տղա, գլուխն ամեն տեղ զցել գիտեր: Նա շատ շուտ կցվեց կոմսոմոլի բջիջին, մտավ քաղցպըց, քաղաքական անգրագիտությունը վերացրեց ու գարձավ կոմսոմոլի աշմենակախիլ անդամներից մեկը: Պատի թերթ սիրում եր անսահման ու նրա, կանոնավոր լույս ընծայման գործում նա մեծ ջանք ու յեռանդ եր ցուցադրում: Կոմսոմոլից գեռ իսկի կուսակցության մեջ չեր տնյել, վոր գործարանի բանվորները Մացակին Փարկոմի նաշխագահ ընտրեցին: Արդեն յերկու տարի յեր նա այդ պաշտոնում վերընտրվում եր: Մացակին բոլորովին չեր գոր գալիս իր յեղբոր՝ վարքը, վոր նա գործարանում վոչ մի բանով չի հետաքրքրվում:

Այդ գեռ վոչինչ:

Նրան ջղայնացնում ու նրա ինքնասիրությունը վիրավորում եր այն, վոր աշխատանքի պիսցիպինան խախտող սակավաթիվ բանվորներից մեկը հենց իր յեղբայրն եր: Յեկ նրան ցավ եր տալիս այն, վոր յերբ իսուք եր բացվում գործարանի արտագրողականության անկման, այս կամ այն բանվորի թերությունների մասին բանվորներից վոմանք նրա յերես սովոր ելին տալիս Ալեքի արարքը...

— Բա քու ախալերը...

— Յես նրա համար պատասխանատու չեմ, —

կտրուկ կերպով հայտարարեց Մացակը մի որ արտադրական հանձնաժողովի նիստերից մեկում, յերբ նըման ակնարկ արվեց Ալեքի հասցեյին:

— Յեթե գտնում եք, վոր նրա հարցն ել պետք եր գրվի այստեղ, գնենք ու լուծենք ընդհանուր կարգով, — հայտարարեց նա շատ վորոշակի շեշտով:

* * *

Մացակի գեմքին գույն չկար, յերբ նա ներս մտավ սենյակ: Ռսանը, վոր մինչև այդ արցունք եր կաթեցրել աչքերից, թաշկինակով սրբեց աչքերը, աշխատեց հուզմունքը զսպել, լուրջ գեմք ընդուներ վոր տեղը բան չնկատի: Ռսանը գեպի Մացակը տածում եր մի անհուն հարգանքի: Դժվար եր չափանիշ գտնել այդ հարգանքի խորությունը չափելու համար: Մի հարգանք, վորը նահապետականության բացակայության պայմաններում հեշտությամբ կարող եր փոխիկել սիրո:

— Յերանիքո շնորհքի կեսի չափ շնորհք ել Ալեքն ունենար, ել ուրիշ գարդ չունեմ, — մտածում եր նա յերբեմն Մացակի գեմքին նայելիս ու իզուր չեր, վոր տեղը յեկած ժամանակ նա Մացակի անունով եր պարծենում:

Մացակն այդ հանգամանքը լավ եր նկատեր: Նա յերբեք չեր թագցնում, վոր հարսն իր արժանիքներով ավելի բարձր ե, քան իր յեղբայրը: Նա են ել եր ըզգում, վոր Ռանի համար ինքն ու իր յեղբայրը հանդիսանում եյին կշեռքի այն թաթերը, վորոնց համեմատությունը զարթեցնում եր ցավ ու հակակրանք նեպի Ալեքը և համակրանք՝ գեպի Մացակը: Հենց սը-

բանով պիտի բացատրել այն, վոր նա չափազանց խղճում եր թե հարսին ու թե նրա յերեխաներին: Աշխատում եր ավելի քան ուշադիր լինել: Յեղբոր անգիտակցությունն ու անպարտածանաչ վերաբերմունքը գեղի կինն ու յերեխաները, կարծես, ուզում եր մերմել իր ուշադիր վերաբերմունքով: Յեկ առիթներ քիչ չեն յեղեւ յերբ նա՛ պրոգուշչիկ յեղբորն առել եր իր պաշտպանության տակ՝ հանուն նրա փոքրահասակ մանուկների:

— Ամոթ դրան, ամոթ, — շնչաց ինքն իրեն Մացակը, գլխարկն ու վերաբերմուն հանելիս:

— Մարդ ամ դա, խայտառակ արեց թե ինձ, թե իրեն, — շարունակեց նա առանց մոր ու հարսի յերեսին նայելու:

— Ո՞վ, Ալբը, — անհամբեր հարց ավեց մայրը:

— Բա ել մի, — կտրուկ պատասխունեց Մացակն ու վառած լուցկին գեմ տալով բերանի գլանակի ծայրին, դիմեց հարսին:

— Տուն յեկամի:

— Հա, յեկամի:

— Ի՞նչ առեց:

— Վոչինչ:

— Ի՞նչի կասի, ձեռնոտու ամ, վոր առի. քեզ մոտ ել երեսատեղ կունենամ, վոր ասի:

— Մացակ ջան, ի՞նչ ա պատահեց պարզ ասա, բան հասկանանք, — շնչաց Ռունը սրտի արագ բարախումը հազիր դսպելով:

— Ել ի՞նչ պիտի պատահի, հրեն անունը զբել են սև տախտակի վրա ու եզուցվանից ելի փողոցները պիտի չափչիի:

— Ա՛ տղա, լոնչի, — հարց տվեց վրդովված ձայրը:

— Վ՞նց թե ընչի, հարբում ա, հարբած գործարան գալիս, ձեռքի գործը փչացնում, դիմ բրակ գուրս բերում ու գործարանին ահազին մնաս հասցնում. բարան վերջ պիտի լինի, թե վոչ: Եսքան վախա ել յես եյի ու իմ անունն եր, վոր պահում եր գրան գործարանում, համա ել պահելու ճար չկա: Ինձ բոլորը մեղադրում են խնամիության մեջ, յես հո չեմ կարող դրա պատճառով ամենքի մոտ կարմրել: Տո, եթ անիշումը խելքի չեկավ ելի, չեկամի: Չեմ հիշում, վոր մի յերկուշաբթի որ գա կանոնավոր գործի յեկած լինի: Կամ բոլորովին չի գա, կամ կգա հարբած:

Ռունը լուս լսում եր Մացակին ու զգում եր, վոր կոկորդին ինչ վոր բան դեմ ե առել և ուզում ե խեղզել իրեն: Հայացքը սեստած մի անորոշ կետի, աւ սես, հետեւում եր իր մոքի պրապումներին, թե ինչ ե լինելու այս բոլորի վերջը: Նրա սայթաքուն միտքը կոնկրետ լուծում չեր կարողանում գանել... Նրա մըտքերի ծանրության տակից գործազրկությունը, քաղցն ու յերերուն անտեսական դըությունը ցուցանանում եյին իրենց մերկ զլուխը պարզ ու վորոշակի:

— Բա պահելու ել վոչ մի ճար չկա, — խեղդվող կոկորդից հազիվ լսելի ձայնով մըմնջաց նա:

— Վոչ մի ճար, — պատասխանեց Մացակն ու, կարծես, զգալով, վոր իր պատասխանը շատ եր խիստ, տպավորությունը մեղմելու նպատակով ավելացրեց.

— Թող գնա կորչի, աչքներիս չերես, ձեզ յես կպահեմ:

— Աչքն իրանը դուրս գա, վոնց վոր հրես դուրս

ա յեկել — մտմտաց ինքն իրեն Հերիքն ու թառանչ քաշեց:

Հերիքը հիշեց, վոր Մացակը ցոտից ա յեկել ու թեյ կուղի. թեյի բաժակները լցրեց ու քաշեց մեկը Մացակի կողմը, մյուսը հարսի:

— Մոտ նստեք, վորիք, մոտ նստեք, չայ խը մինք, — դիմեց նա Մացակին ու հարսին, ապա հետո դիմեց տղին.

— Մացակ ջան, տես, բարքի մի իլլաջ անես, դու յել վոր չոգնես ու չպահես, բա ել ովզ պափ ոպնի Քուլիաթի տեր մարգուն գործից հանել վճնց կլի, — քիչ ինդրի ու քիչ ել պահանջի առնով դիմեց մայրը:

— Ախր, մայրիկ ջան, բանի եյությունը դու չես հասկանում ե... Աբա դու մտածի, եղ վոր բոլոր բան վորները հարբեն ու հարբած գործի գան, են գործարանում ել խեր ու բարաքաթ կմնամ... Ամեն բանվոր, վոր գործարանից շաբաթվա մի որը գողանա, են գործարանը կոպտիք, թե կվասավի: Իհարկե, կվասավի: Մենք ասում ենք գործարանն որեցոր վոտի կանգնեցնենք, հետզետե մեծացնենք, բիրժի անգործներին գործի քաշենք ու բանվորների ոսմիկները բարձրացնենք, այն ինչ, աղբորս պես անդիտակից ու հարբեցող բանվորները քար ու քանդ են անում մեր ծրագիրն ու հարյուրավոր բանվորների տունը քանդում: Ով ուղում ա ըլի. եղ տեսակ անհասկացող բանվորներին մենք հեռացնում ենք գործարանից, — հուզված վերջացրեց խոսքը Մացակը:

— Մեռնեմ եղ խելքիդ, խելոք ես խոսում, այ վորդի, համա ելի ախպերդ ա... Գոնե Ռաանին ու յերեխանցը խղձա:

* * *

Պառավին գժվար եր համողեր, վոր Ալեքին պահելը մենակ Մացակից չեր կախված, այլ այն բանվորական կոլեկտիվից, աշխատանքի ստուգատեսն անցկացնող այն հանձնաժողովից, վորն Ալեքին եր ուրիշ մի յերկու հոգու հետ, մտցրել եր անպարտաճանաչ ու աշխատանքից զրկվելու յենթակա բանվորների ցանկի մեջ: Թեև այս ել պիտի ասենք, վոր Ալեքի անուն ավողն ու ցանկի մեջ մտցնողը յեղել եր հենց ինքը Մացակը: Հանձնաժողովից անդամներից վոչ վոք չուզեց Ալեքի անունը տաեւ վորպեսզի Մացակի խաթրին չփառչի:

Հենց ինքը, Ալեքն եւ են համողման եր, վոր իր տակը փորողն ու իր տունը քանդողն իր յեղբայրն եւ վոչ ուրիշը:

— Իմ թշնամին նա յե, նա, — մրմնջում եր նա ինքն իրեն հետեյալ որը, յերբ նա առավոտը շատ վաղ յեկել կանգնել եր զավոդի զոնից հարյուր քայլաչափ հեռու և յեղբոր ճամբան եր պահում:

* * *

Որը թուխալ եր, ոգը վոչ սովորական սառնությունն ունեցող: Թանձը ամպերի շարանը յեկել, ծածկել եր շրջակա սարերի գլուխները: Մի տաք քամի շոյում եր մարգկանց գեմքերը և անձրեկի տեղ պատրաստում: Խաչաձևլող փողոցների տարբեր կողմերից հարյուրավոր բանվորներ շրապ-շտապ գալիս ու մըրշյունների պես ներս եյին խուժում գործարանի նեղ

գոնից նրա հոկայական բակը: Սռելիչը վերջին անգամ սուլեց ու բանվորների հոսանքը դադարեց:

Ալեքը, վոր մոտակա գինետան գուան մոտ կանգնած, մարտաղ եր մտել գեռ հեռվից նկատեց յեղբորը, վորն արագ քայլերով շտապում եր գործարան. նա շտապեց առաջ գնալ ու ճամբան կտրել:

Մացակին՝ Ալեքի անսպասելի կերպով իր առջև ցցվելը՝ շտա տարորինակ թվաց ու անհաճու մտքերի առիթ տվեց: Նրա հուզված գեմքը Մացակին մի քիչ այլայլեց, բայց և այսպես աշխատեց չկորցնել իրեն: Նրան մի բոպի թվաց, թե Ալեքը պիտի իրեն հոշուի: —Ի՞նչ ես ուզում ինձանից, տո, լածիրակ շանվորդի, — հարձակվեց Ալեքը յեղբոր վրա:

— Յես քեզանից ի՞նչ պիտի ուզեմ:

+ Ի՞նչի յես ինձ դուրս անել տալիս, շտո վախտ ամ, ինչ մարդ ես գտնել ու ախսպորդ ել մարդառեղ չես գնում... Թէ ուստում խմում եմ, իմ աշխատանքն եմ ուստում քեզ ի՞նչ վիաս եմ տալիս:

— Վնասը գործարանին ես տալիս; ինձ ի՞նչ պիտի վիաս տաս: Թո՛ հարբերով դու քո լեզուն ել ես կտրում ու իմն ել քու պատճառով յես չեմ կտրուանում բանվորներին պարզերես մտիկ տաք — տաց Մացակը հուզված ու մտքի թելը կորցնելով: Զղայնությունից Մացակի վզի ու ճակատի ուղղաձիգ յերակները զուրս եյին ցցվել:

— Բաս, ասա գնամ ջուրն ընկնեմ, ելի... Յես տեսնում եմ, վոր ինչ վոր կուսակցական գառապ, խիդեց շների փայտ արիր, ել վոչ ախսպեր ես ճանաչում մոչ ել հարազատ:

— Եխովերս վմբն ա,— գոտեպնդած ձայնը բարձ-

բացրեց Մացակը, — քեզ նման պիտնից մարդկանցից զործարանը պիտի մաքրենք, հասկանաւում ես, թե չե:

— Լավ, հո եղակես ա, թե յես քու հախիցը չըգամ, կտեսնես, — ու բառնցքը յեղբոր վրա թափահարելով, Ալեքը դարձալ ու շտապ հեռացավ:

* *

Յերեք որ հետո զործարանում տեղկումին կից զտում անցկացնող հանձնաժողովի նիստն եր: Այն փոքրիկ սենյակը, ուր տեղի յեր ունենում նիստը, ծխախոտի ծխի առատ քուլաներից մշուշապատվել եր: Փոքրիկ սեղանի շուրջը բոլորվել եր զործարանի ակտիվ:

— Այսոր մենք յարեք խնդիր ունենք քննելու, առաջինն Ալեքի կոնչ խնդիրն ե: Կոնչը խնդրում ե զես զուրս չանենք, ժամանակ տանք, բաւըի Ալեքն ուղղվի: Ի՞նչ կասեք, ընկերներ, խնդրում եմ արտահայտիք:

Մացակը, վոր ներկա յեր այդ նիստին, ամոթից կարմրեց, ճակնդեղի զույն ընդունեց:

— Յես առաջարկում եմ նրա հարցը համարել արգեն լուծված և հանել որակարգից, — կերկերուն ձայնով շնչաց Մացակը:

— Կուլիանին զերեզմանը կուզդի. նա նոր պարուղով, — ձայնեց քոսա Միսակը, վոր սենյակի մի անկյունում նստած բլոկ-նոտում ինչ-վոր հարցեր եր նշանակում:

— Էնկեր նախագահ, խնդրում եմ, յեթե կարելի ա, մի խոսք ել յես ունեմ ասելու, — հազիվ լեկի

ձայնով մտմտաց Ռուփի գային, գործարանի պապաշան, հին, բայց առաջադիմ բանվորներից մեկը:

— Ալեքին լովենք արել վոր հանել ենք գործից, — շարունակեց նա, — համա նրա ոջախը մեղքա: Յեկեք նրա փոխարեն կնոշը մի գործ տանք գործարանում:

Բոլոր ժողովականները լուսվյամբ, կարծես հավանություն տվին նրա խելացի առաջարկին:

— Ընկերներ, — խոպոտ ձայնով սկսեց զակրոյշեկ Ստեփանը, — մի խոսք ել յես ասեմ: Իմ կարծիքն ընենց ա, վոր մենք Ալեքին պիտի ժամանակ տանք: Մենք խո չենք կարող մեր բոլոր անդիտակից բանվորներին փողոց շպրտել: Իմ կարձ խելքով յետ եռքանը կասեմ, վոր Ալեքն անուղելի մարդկանցից չի: Յեթև նա մինչև որս չի ուղղվել մեղավորը մենք ենք, վոր նրան չենք քաշել վորեւ աշխատանքի: Թող Մացակը չնեղանա, յեթե նրա յերեսին ճշշտն ասեմ: Ալեքի չուղղվելը, մասամբ, մեր Մացակի մեղն ա, վորը՝ իրը ֆարկոմի անդամ՝ կարող եր նրան տուաջ քաշը շել ու հահճածողպակերից մեկին կցել, վոր աշխատի: Իմ միտքս ընենց ա կարում, վոր՝ հասարակական աշխատանքին լծվելով՝ նա հեշտությամբ կմոռանար զիւնին ու կդառնար մեղ նման ակտիվ բանվորներից մեկը: Այ, յես ձեզ համար մի որինակ: Կարող ե՞ք ասել, թե յես են եմ, ինչ վոր վեց տարի առաջ: Մացակի շիտակությունը մենք լավ գիտենք. նրա կուսակցականի ինքնասիրությունը վիրափորփում ա, վոր մեր անդիտակից բանվորներն անկյուններից նրան մեղադրում են խնամիկության մեջ, բայց իմ կարծիքով, դա

ըսկի ել խնամիկություն չի: Ցեխն ընկնող բանվորի թեր բոնելն ու վոտի կանգնեցնելը մեր ամենքիս գործն ա, մեր ամենքիս պարտականությունն ա: Վերջացնելով խոսքս, ընկերներ, յես կարծում եմ, մենք Ալեքին վոչ թե պիտի փողոց շպրտենք, այլ պիտի ուղղենք մեր սխալը և նրան վոչ միայն գործի թողնենք, այլ և աղքենք նրա վրա ու ուղիղ ճամբի դնենք:

Սենյակում տիրեց ճաշող լուսվյուն: Ստեփանը խոսքը վերջացնելուց հետո թաշկինակով ճակատի քրտինքը՝ սրբեց ու հայացքն ուղղեց ժողովականներին: Կարծես հարց եր տալիս, թե ել ով ա ուղում խոսք: Բայց խոսելու տրամադրություն ել վոչ վոք չցուցադրեց: Ստեփանի ազգու խոսքը, կարծես, մի նոր միտք ակուեց ներկա յեղողների մեջ ու, ասես, բոլորն ել լուսվյամբ ավին իրենց համաձայնությունը:

— Ընկերներ, ուրիմն ուրիշ արտահայտվող չկա... Յես քվեարկում եմ: Բօվ ա կողմնակից Ալեքին թողնելը Բոլորի ձեռքերը մեկեն բարձրացան:

— Ուրիմն անցավ միաձայն, — ինքնազո՞ն ձայնով հայտարարեց Ստեփանը: Չեռնպահ մասց միայն մեկը՝ Մացակը:

— Ընկեր Մացակ, խարար արեք Ալեքին, թող վաղվանից զա աշխատանքի, — հայտարարեց Ստեփանը հաղթական մի ժամկան:

* *

Որերը գորպեցին իրենց սովորական կարգով: Անխախտ եր նրանց իրար հաջորդելու ընթացքը: Բայց, յենող արեկի ձանանչների տակ փոխվել եր ու

բերի բովանդակությունը, մանավանդ Ալեքս համար:

Յերբեք Ռաանն իրեն այնքան յերջանիկ չեր զգացել ինչպես այն որը, յերբ Ալեքս գործարանից նոր տուն յեկած, նստեց ու ինչպոր բան սկսեց գրել:

— Ռաան ջան, թե կարող ես յերեխաներին քիչ չանգստացրու, յես մի քիչ բան ունեմ պրելու, ինձ իւանդարում են, — թախանձեց Ալեքս:

— Ալեք ջան, եղ ինչ ա, ճիմ ել շկոլ ես զնում, զասեր ունեմ... — հարց ավեց Ռաանը խինով յերեսին:

Չե, եղուց բանկոսպի անդամների ընդհանուր ժողովն ա, յես, իրը մեր կոսովերատիվ հանձնաժողովի նախագահ, մի պուճուր վեկուցում պիտի տամ մեր աշխատանքի մասին, — ասաց Ալեքս ու զլուխն ավելի թեքեց տոջեր փոռած թղթերի վրա:

Ռաանման բավականության մի ճառագայթ փլուզեց Ռաանի գեմքին, ու նա յերեխաներին քաշեց մի կողմ, նրանց զրազեցնելու համար:

Հետեւյալ որը, յերեկոյան, նշանակված ժամանուակից մի ժամ առաջ, Ալեքս թղթերի մի կույտ ձեռքին գնում եր գեղագի ակումբ, ուր աեղի պիտի ունենար ժողովը: Ակումբը հասնելու համար նա պիտի անցներ գործարանի դռան առջեկաց: Խոկ նրա զիմաց տնկված եր միկիան Միիմայի դուքանը, ուր յերբեմն Ալեքս իր մի քանի ընկերների հետ միասին՝ մաքրագարգում ու պլոկվում եր, վոնց վոր փետրահան հավ:

— Ալեք, Ալեք, համեցեք, համեցեք, — կանչեց մեկը խանութից, յերբ նա անցնում եր:

Ալեքի միաքը գեկույցով եր զրազված: Զայնը համարյա չհասավ նրա ականջին: Բայց ավելի ճիշտ էլլինի ասել, ձայնը հասավ, բայց Ալեքը չլսելուն դրեց:

Ակումբում ժողովականներն արդեն հավաքված, սպասում եյին վեկուցողին, յերբ Ալեքը կոսովերամիսիացի մյուս անդամների հետ բեմ բարձրացավ: Նրա սիրալը սկսեց արտասովոր կերպով բարտիսեր: Արյան մի գուրեկան հոսանք բօսոր գույն, ավեց նրա զեմքին, յերբ նա առաջին զանգը տվեց ու կարդի հրավիրեց հանդիսականներին:

Մի գայրը ան, կաբծես, նա կորցրեց մաքերի վաղուոքը շաբանյուսած թելը: Բայց... անցավ ըովեն ու նա հավաքեց իրեն:

Թե ինչու կորցրեց իրեն, ու հասկանալի յեր: Սովորական գատարկամիտ լուժակամառ չեր, վոր նա պիտի ասեր ժողովում, այլ մի ճառ, մի զեկույց, փոքը պիտի ցույց տար և կոսովերամիսիայի թափած աշխատանքի արդյունքը, և իր անհատական դարձի փայլուն ու հաղթական պատկերը:

1928 թ.

ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՆ

Նատան շատ եր պառավել, վոչ ջանին եր ջան մնացել վոչ վոտին՝ ույժ. աչքերն ել առաջվա պես չեյին կտրում: Փողոցով տմբամբալին գնալիս՝ քանի անդամ եր նա գիտնին ընկած փայլուն կոճակը արծաթ փողի տեղ ընդունել գծվաբությամբ բարձրացրել, անդղեր անդղեր շուռ ու մուռ տվել ու նորից փնթիսթալին դեն գցել...

— Ի՞ն, անտեր անեմ քեզ... Ես խիս որեցոր աչքիս լիսը պակասում, քա... — տրտնջում եր նա ինքն իրեն ու զարմանում, վոր իր կյանքի վեցերորդ տասնամյակի սահմանագլխին թե աչքերն են դավաճանում ու թե մասամբ, լուղությունը:

— Ե՛, վորդի, կիսին ել չեմ արժան, — հաճախ նա գիմում եր խոսակից հարևանուհիներին. — հիմի ել ի՞նչ գարդ ունիմ յես. տերը բարի տա ես բալշեկներին. Սահակս ընենց ա փոխվել վոր ըսկի չես ճանաչի. գիշեռ երես ըսկի չի ուղում տեսնա, ուշըն ու միաքը տանն ա ու իրա գործին: Սրանից դենն ա, վոր յես որ պիտի տեսնեմ: Համա... են ել ի՞նչ ասեմ, վոր կծիկս ա սկսել յետ տալ...

Ու իր կյանքի կծիկը յետ տալու որերին՝ մի քիչ հանգիստ ապրելու միջոցն ու յելքը գտնում եր Սահակի ամուսնության մեջ: Ու ամեն առիթ բաց չեր թողւ-

նում Սահակին համոզելու, վոր նա մտածի ամուսնության մասին:

— Ա՛ տղա, Սահակ ջան, քեզ չես խղճում, գոնե ինձ խղճա, տեսնում ես, յես ել վոչ հարաքյաթ, վոչ ել ույժ ունեմ տանը շուռ ու մուռ գալու, ես տունը հարս ա ուղում, յես ել եսոր կամ, եգուց չկամ, բա տանդ մի ճրագ վառող ու քեզ մտիկ անող չունենամս...

Ճիշտն ասած Սահակն ինքն ել գեմ չեր ամուսնալուն: 25 տարեկան փթթած գարուն հասակ, առողջ ու վայելչակազմ մարդ. ձեռքն աշխատանքի ու մի փոքր ել գիրք ստեղծած իր համար:

— Ախչի, տեսաբ, — շնջում եյին հարնան կանայք իրար մեջ, — Նատոյի տղեն մենձ մարդ դառակ Բլի. գիփ պապկեն ձեռքին ա ման գալի...

— Բա նոր ես իմաննում, վոր մենձ մարդ ա... Յաշեյկա յեն ասում, ինչ են ասում, նրա սելլետարն ա... Հեյ գիրի համ, աշխարհի շուռ գալը կհավատայի, զբա մարդ գառնալը չեյի հավատա... Ծիմսո ջան, հիշում Բո, վոնց եր թազումը բասյակի պես ման գալի... հաց չունեյին ե, ուտելու հաց... Համա հիմի թազամիշում մատով նշանց տալու մարդ ա գառել... Երնակ են աղջկան, վոր զրան կնիկ կդնա...

Յեկ խկապես, թազում վմբ աղջկա վրա մատ դներ նա, վոր ծնողները գեմ կենային, գեռ հալա վրեն ել քրթամ ու բաժինք չհասցնեյին: Բայց Սահակի հոգում այնպիսի բեկում եր տեղի ունեցել, վոր հազիկ թե նա ընկներ ներկված ու սրված աղջիկների յետեց, ե, հետո, կարծես, ժամանակ ել չուներ ամուսնության մասին մտածելու:

Խորհրդային իշխանությունը նրա համար բացել

եր նոր կյանքի մի գուռ, մի լուսավոր ուզի. ընկել եր
նա եղ լուսավոր ուզին ու գնում եր առաջ առանց
յետ նայելու, արդին 4 տարի յեր խաբազ Ռհանեղի
աշկերտ Սահակը դարձել եր անճանաչելի:

Միկամանի դուքանը փոխարինել եր կուսքիջով.
թաղամիջի են գուքանը, ուր ընկերների հետ հավաք-
զում եյին դատարկաբարանելու համար, փոխարինել եր
քաղցրագիտական խմբակով և որերի ընթացքում
թե ըջին ու թե քաղցմբակը տեսնում եյին իրենց
պործը, կուռմ ու դարբնում եյին Սահակի մեջ այն նոր
միտքն ու հոգին, վորն անհրաժեշտ եր յեխող դասա-
կարգի պայքարի համար. Յեկ զուր չեր, վոր կուսզաբ-
քերը մտնելուց մի տարի հետո ուայկոմը քաշեց նրան
իր կողմն աշխատանքի՝ իրը առաջադեմ ու ակախի
տարբէ:

Տարիների ճնշման տակ խամբող Նատոյի սիրաց
ցնում եր իր զորդու առաջադիմությամբ, և նա տեհն-
չում եր վերջին իցձն ել իրագործված տեսներ.

— Այ զորդի, յիս տեսնում եմ, զու շատ և
բնուզում, քու մասին իսկի չիս մտածում, յիս քեզ հմա
աղջիկ եմ ճարել նուտամանց Մաթոսի աղջիկը յիս
քեզ հմա շատ հարմար եմ գտնում: Սիրուն, խելոք, ա-
բուն եղեսին, մոր փեշի տակ մեծացած աղջիկ ա, յիս
գիդամ, մենձ ել բաժինք կունենա: Արի նավար կոտրի
ու նշնիր...

— Զե, մայրիկ ջան, ես տարի ել չե, մեկել տա-
րի անպատճառ կնշնվիմ, — մորը համոզում եր Սա-
հակն ու քթի տակ նրա միամտության վրա ծիծա-
զում:

Գաբուն եր:

Նատոնց բակի պապենական փոքրիկ բախչեն
նորից կանաչով ծածկվեց: Փոքրիկ բախչի յերկու նը-
շենիներն իրենց ծաղկանց անուշանուա բուրմունքով
լցրել եյին բակը: Մենակ շիշակարոյ յերեք բարդենու
անուշ բուրմունքը լցվել եր բակը: Նրանց գուրեկան
սվավոցը մի տեսակ ներդաշնակություն եր մտցնում
պառավ Նատոյի յերջանիկ սրտի ապրուների մեջ:

Ու Նատոն հաճախ կարկատանի բոխչեն ձեռին
զուրս եր զալիս բակը, բարդի ծառերի տակ մի պու-
ճուր փարփակ փոռում, յերկու զույնի թելով կապ ու
կշիռ տված ակնոցը զնում աչքերին, իր սրտի ուրախ
թոթիռներին անձնատուր յեղած, սկսում եր կարկա-
տանը. բակի մեջ միակ հարևանը թափամազ կատուն
եր, վոր զնում՝ Նատոյի կողքին փարփակի վրա
փովում, կամ զունչն եր լվանում, կամ ձանձերի ձեռ
խաղ տալիս:

Նատոն մաքով Ռոստոմանց Մաթոսի աղջիկ Շու-
շիկին տուն հարս եր բերում ու յերեակայում, թե նա
վժնից հեզ ու խոնարհ իր աչքին ու ունքին պիտի մը-
տիկ տա:

— Շուշո ջան, մատնոցս կամոդի վրա մնաց, թոփ
մի ձեռաց բեր, — և Շուշոն իսկույն վազում ե բերում ե,
սկսեսուը մատին գնում, կամ թե՝

— Շուշո ջան, կերակրի տակը մտիկ արա, կըակը
չհանդչի, եստ մարդիդ գալու վախտն ա:

Ու Շուշոն գնդակի արագությամբ թոչում ե դե-
պի խոհանոց և քուրացի առջև փափում....

* * *

Մի որ, յերբ յերեկոյան արեի պղնձագույն շիշ
թերն այսքան եյխն բարձրացել վոր զգվել եյխն փոք
ըիկ բախչի բարդիների կատարներին, Սահակը տուն
յեկավ, տոթից նեղվելու պատճառով խալաթի յախեն
բաց, մի անծանոթ աղջկա հետ:

Անծանոթը կլոր, լիբը գերքով, թխահեր աղջկ
եր, մազերը կարած և պարզ հագնված: 18 գարնան
բույր կար նրա խոշոր և հրապուրիչ պէքերին թառած:
— Մայրիկ ջան, ծանոթացիր, իմ նշանածը,

դիմեց Սահակը մորը:

Պառակն ըստ յերեսութիւն լուվ չմեց:

— Վորդի, ինչ ասեցի՞ր...
— Ասում եմ ծանոթացիր իմ նշանածի հետ:
— Ի՞նչ... իհ, լավ, լավ, ուռ վոր գիդաս անշնորհք
հանաք անել—ու պառակը մի ինք հայացք նետեց
անծանոթ աղջկա վրա:

— Դեղի ջան, ինչ հանաքի բան կա, սըանից գե-
նը ընկ, Գոհոն կլինի մեր ոջախի անդամներից մեկը,
իմ ընկերը...

Նատոն մի քիչ իրեն կորցրեց, հազար ու մի
միտք զլիովը պատվեցին, ուզեց սեկ ել դժոնի, բայց
քիչ անց մտածեց:

— Ե՛ն, ջնանդամը, թող իրա ուզածն ըլի և իրա
որտով ըլի, շատ ել վոր հուշեռ անեմ, ինչ կարող եմ
անել...

Ու մի կերպ հաշտվեց են մտքի հետ, վոր իր յե-

արդեն ոգնող ձեռք ունի և բեռն ել թեթևացած կու-
նենա:

Ձեռքի խոր ամանը նա դրեց սեղանին, մոտեցավ
հարսին, մի քիչ որհնեց, ճակատից համբուրեց և զույ-
գին մաղթեց «մի բարձի ծերանալ»:

Գոհոն, վոր մինչև այդ փափ վրա յեր զգում իրեն,
պառավի զուրգուրանքից նետո զգաց իրեն շոյված,
ձեռքի կեպին պատի մեխից կախեց և նստեց Սահակի
կողքին, սեղանի շուրջը՝ ձաշի:

Պառակը յերկուտակված՝ կերակրի պղինձը ներս
բերեց թե չե, Գոհոն վեր թռավ տեղից, ամանները
մոտեցրեց և ուզեց ոգներ:

— Այ ապրի արեդ, արի յե, արի յե, մենակ հո-
գիս դուրս եկավ, նմի քու տունը, քու տեղը, դու գի-
գաս՝ վոնց վոր տերություն կանեն...

Սահակը զիտում եր մոր և կնոջ միջև ստեղծված
պատկերը և հրձվում, ու յերբ Գոհոն հայացքն ուզդեց
զեպի նա, Սահակը ժպատլով պէքով արեց նրան: Գո-
հոն հազիվ պահեց ծիծաղը:

— Ա տղա, բա ըտենց սուսիկ-փուսիկ նշնվել կը-
միներ, վոր դու նշնվեցի՞ր... Մերդ եմ, բա ինձ մի բե-
րան ել ա բան չպիտի ասեցի՞ր... Հազար ու մի բարե-
կամ ու չարակամ կա. վոր լսեն, ինչ կասեն...

— Եհ, մայրիկ, ինչ բաների հետեւից ես ընկել,
ինձ եղանակը եր հարմար, եղանակը, ում ինչ
գործն ա, — քիչ սրանեղած վրա բերեց Սահակը:

Ճաշը նոր եյխն վերջացրել, Գոհոն գործով սե-
նյակից դուրս յեկավ, Նատոն թե՝

— Ա տղա, հարսիս անումն ել կարգին չիմացա,
անումն ի՞նչ ա...

— Գոհոս:
 — Գոհոն, վորն ա, քա, մի կարդին անունը կը
տրվել ե՞ր:
 — Դեղի ջան, անկարգությունն ինչումն ա. Գոհ
հար կանդախսապով ա, կարձ ասած՝ Գոհո յենք կան-
չում մենք դրան:
 — Բա հեր, մեր չունի՞... Հետն ի՞նչ ա բերում...
 — Հետը բերում ա մի մաքուր սիրտ ու աշխա-
տանքի սեր, զրանից ավել ել ինձ ուրիշ վոչինչ հար-
կավոր չի:
 Նապայի համար այնքան ել հեշտ չեր հաշտվել
այն մաքի հետ, վոր հարսը յեկել եր մերկ, են ել վոչ
իրեն ասածը, համա ինչ կարող եր անել:

* *

Ընթանում եյին որերը սահուն ու յերջանիկ նո-
բատի ամուսինների համար: Յերկուսն ել տարգած եյին
կուսականահասարակական աշխատանքուի: Զարքաշ
աշխատավոր յեղբայրների պես՝ յերկուսն ել առավո-
րը միասին անից զուրս եյին զալիս, որվա մեջ յեր-
ուը միասին անից զուրս եյին զալիս, որվա մեջ յեր-
ուը միասին անից զուրս եյին զալիս, որվա մեջ յեր-
ուը միասին անից զուրս եյին զալիս, որվա մեջ յեր-
ուը միասին անից զուրս եյին զալիս, որվա մեջ յեր-

— Սահակ, մայրիկը շատ ե դժոհում իմ դեմ,
վոր յես տանը համար: չեմ լինում:
 — Ե՛, քեզ ով ա տառմ ուշադրություն դարձ-
նես, մի՞թե դաբանում ես, վոր նա դժոհում ե:
 — Ճիշտ ե, չեմ դաբանում, բայց անհաճ յե,
յերը գլխիկ շարունակ փնթփնթում են:
 — Գոհոն, մի՞թե զու չզիտես, վոր մեր կյանքի

կառուցման և նոր կենցաղի կաղապարման ճանապար-
հին անհաճո շատ ու շատ յերկույթներ կան, բայց
մենք նրանցից չենք խրտնում, այլ աշխատում ենք
դիմակը նրանց և ցանկալին իրականացնեք:

Ու Գոհոն, պարտվածի պես, լուսմ եր և բավա-
րարվում թունալից սիրտը մեղմող Սահակի բացա-
տրությամբ ու նոր թափ ամսում հետազա որերի աշ-
խատանքի համար:

— Ո՞վ ա խմացել, աղջիկն ել վրաը եղքան գուր-
սը պահի, քա, — գանգատվից նատոն մի որ Սահա-
կին, յեր Գոհոն անից բացակայում եր. — բա ամոթ
չի՞, այլիք չի՞, տուն ա գալիս վեշերն ուշ, մի թարուն
աղա յել յետեկ զցած, ի՞նչ կնկա արարք ա դա. հա-
րսկանները զիփ ել խոսում են:

— Խոսողների հերն ել անիծած, — համբերու-
թյունից յելակ Սահակը, — հերիք ըլավ ելի, մայրիկ,
ի՞նչ զործ ունես ուրիշների հետ, ինձ ի՞նչ թե ուրիշն
ինչ ա խոսում: Դու ուրախ կլես, վոր ուրիշի խոսելու
պատճառով կնկանս հետ շարունակ կովեմ.. Նա, ախր
քու կարծած աղջիկներից չի. թե իմ կնիկն ա, յես
նրան լավ եմ ճանաչում: Հետո աշխատող ընկերներն
են, ճամքա յեն զցում, ինչ կա վորս...

Ու պառավը լիզուն կարած՝ սուս եր կենում, վա-
խենում եր կոփի դառնա... Բայց քիչ անց՝ ներքին
դժոհությունն ելի պոռթլում եր:

— Ախր, նա քու խարջ չեր ե... Վոչ բարով ա-
մի՞ հարս յեկավ, զործս կհեշտանա, են կի չե՞ զործիս
զործ ավելացավ... Նրա թափածի ու ճոթուածի մասին
ել ջոկ մտածի, — տրտնջում եր նա:

* * *

Սահակն իր բնավորությամբ հանդարատ ծով եր...
Հեշտ հարով նրան համբերությունից հանել չեր կարե-
լի: Բայց մի կողմից մոր արտունջները հարսի դեմ,
մյուս կողմից կնոջ՝ Գոհոյի գանգատները սկսուրի
մյուս կողմից կնոջ՝ Գոհոյի գանգատները սկսուրի
փնթինթոցի ու թաքունաշկարա խայթոցների դեմ,
նրան հավատարակությունից հանում էին: «Նոր գի-
նին հին ակի մեջ պահել չի ըլի» — մտածում եր նա
նին ակի մեջ պահել չի ըլի» — մտածում եր նա
ու յերբեմն վորոշում անջատվել, առանձին ոջախ կազ-
ու մել պայմանով, վոր մորն ել ջոկ ապրուստի միջոց
տա, բայց... յերկար մտածելուց հետո, այդ գտնում եր
անհնարին ու իրեն անվանը պատիվ չբերող: Ելի ըս-
կում եր կնոջը խրատել, թե՝

— Դու գիտակից ես, ելի զու պիտի համբերես:

Մի որ... Սահակը գործից տուն յեկավ, թեմի տա-
կը մի թղթե փաթեթ...

Այդ այն ժամանակ, յերք ցըտաշունչ ձմեռը Սա-
հակի ու Գոհոյի ամուսնությունից հետո չորս շրջա-
ռարձ եր ունեցել ու այդ թափագլոր տարիների ըն-
թացքում յերեք տարեկան կիմիկը՝ նրանց յերեխան՝
սենյակում արգեն նոր նոր տուտիկ-տուտիկ եր անում:
Յերեխան աթոսից յերկու թմբիկ թաթերով պինդ
բանած ժամանակ տակը կեղտոտել եր: Տատը՝ նատոն
յերեխուն մաքրելու յետեկից եր ընկած:

Սահակը թե՝

— Գոհո ջան, մի զույգ եժան կոշիկ պատահեց,
չգիտեմ վոտիդ լավ կլինի, թե չե: Թե քեզ չգա, մայ-
րիկին անպատճառ կլինի, թող նա հագնի:
Չգիտեմ ինչը Գոհոյին զուր չեկավ. յերկի են,

վոր կոշիկը կարող եր մայրիկի բաժինը դառնալ ու
նա դժգոհեց:

— Սահակ ջան, ախր կոշիկի վախտն եր, վոր
զու կոշիկ ես առնում... Տանն ուրիշ քիչ պակասու-
թյուն ունենք: Նոր չեր մայրիկի համար կոշիկ ա-
ռար... Նորանարս հո չի, որը մի զույգ կոշիկ փոխի:

Այս բանն ընկել եր պառավի ականջն ու... բա-
րով-խերով չընկներ: Ատելության ոձը զալարվեց նրա
կրծքում ու թույն կուտակեց հարսի հանգեալ կրկնա-
պատիկ:

— Ե՛, վոչ խնդաս դու, վոչ, տեսնում ես ես ա-
նըգգամին, աչքին ցավ ա տալի, վոր տղես ինձ համա-
րան ա տանում, — մտմտում եր նա ինքն իրեն տանը
փափսալիս ու սպասում հարմար առիթի՝ թույնը թա-
փելու:

* * *

Զմեռն այդ տարի շատ զանդաղ անցավ: Ապրիլի
մահամերձն եր ու մայիսն յեկել, մարդկանց դոներին
չոքել, բայց որերը դեռ չեյին տաքանում: Կեսորվա
խարսափիկ տաքին հաջորդում եր մյուս՝ քամոտ ու
անձրևախան ցուրտ որվա կեսը: Փոքրիկ բախչի նը-
շենու ծաղիկները մի քանի անգամ ծեծվեցին ցուրտ
քամուց, մինչև վոր խսկական գարունն իր գեմքը բա-
ցեց ու ժամանց մարդկանց և ըշակա մարդ ու լեռ-
ներին:

Ու արևոտ մի որ Նատոն փարզակը փոած բախ-
չում՝ բարդիների տակ՝ յերեխային զբաղեցնում եր:

— Պապմ, պապմ, — կչկչում եր փոքրիկը,
բարդի ծառի կատարին խայտացող ծիտիկների պես

ու մատերը պցում հողի մեջ և հողի կտորները բերանը
տանում:

— Քիս, քիս, քիս ա, — ասում եր պառավ
Նատոն ու հողի կտորները փոքրիկ կիմիկի ձեռքից
խլում:

— Կուկլա յա, քա՛, ես ինչ յերեխա յա, — 22^{ըն}
ջացին հարևան կանայք՝ Անաքալին ու Վուկեհատը,
վոր յեկել եյին նատոյի մոտ մասլահաթի:

Մոտակա յեկեղեցու զանգերը, չգիտեմ ինչի առ-
թիվ, զնացին: Յերեք պառավը ել յերեխաները խաչ
հանեցին: Փոքրիկ կիմիկը, վոր պլշած աչքերով տա-
տիկին եր նայում, ձեռքով, մեքենայաբար, խաչ հա-
նելու նման շարժումներ արավ: Նատոն խնդաց թու-
ռան ցուցազրած արարքի վրա և աշխատեց յերեխու-
խաչ հանելու շնորհը կտորելապործել:

— Քիմի ջան (եսպես եր կանչում յերեխային),
ասա անուն հոլ... — յերեխան ել կապիկի պիս աշ-
խատում եր բերանի բացվածքին նման արտահայտու-
թյուն տալ:

Քըջում եյին պառավները հրճվանքից:
Անսպասելի կերպով բակը ներս մտավ Գոհոն:
Այդ ժամին նրա տուն զայն անսպասելի յել: Նա նը-
կատեց այդ բոլորը և տհաճությունից գիմքը կնճռու-
անեց:

— Մայրիկ, ինչու յես եղակո հիմար բաներ սո-
վորեցնում յերեխային. քանի անգամ եմ խնդրել վոր
եղակո բան չանես:

Պառավն իր ինքնասիբությունն իր ընկերուհի-
ների մոտ վիրավորված զգաց:

— Հը՛, ինչ յեկար ու ցոփիանի պիս վրա ըն-
կար: Իմ սովորեցը բաներին հավան չես, տանը վեր
ընկի ու ինքդ լավ բաներ սովորեցը ու: Մեջն ինչ ա-
մած, ի՞նչ, վոր եղքան թըկ ես զալիս:

Պառավն ակնարկում եր այն, վոր Գոհոն անպոքծ
եր, բայց զուտ հասարակական աշխատանքներով եր
զբաղված, վորից վոչ մի զբամական շահ չուներ:—
— Ցես քեզ ասում եմ, իրավունք չունենաս ձենդ
ինձ վրա բարձր պահելու: Հորդ հացին եմ ըլլ, թե
ջրին, թե քու բերած մենձ բաժինքի վրա յես վրես
քիքս զալիս:

Պառավներն անհարմար զգացին իրենց և հարսին
ու սկեսուբին ազատեցին իրենց ներկայությունից:

Գոհոյի ներքին, հոգեկան արեկոծությունը չափ
ու սահման չուներ: Նա յերեխային վերցրեց, քաշվեց
սենյակ ու ընկալի մահճակալի վրա:

Ժամը 3-ին նա պիտի լիներ ակումբում՝ կիս-
անկյան անդամների նիստին, բայց նոգեկան անհա-
վասարակշառությունն արգելք հանդիսացավ նրան աը-
նից զուրու գալու:

Ժամերը սովորականից ավելի եյին ձզգվում
մենչեւ Սահակի տուն գալը:

Յերբ Սահակը ներս յեկավ, Գոհոյի աչքերին սր-
ցունքի կաթիլներ տեսավ:

Գիշերը բոլորը քուն մտան ու սենյակում տիրեց
նատոյի մշմցը...

Սահակն ու Գոհոն շնչարով լուծեցին խնդիրը:
Տեղափոխսվել...

Մի ամիս անց, Սահակենց դուանը մի ապրանքա-
տար կառք եր կանգնած, ու Սահակը ինսամքով տնա-
յին իրերն եր զասավորում նրա վրա՝ նոր տունն
անցնելու համար:

Աշնան սահմանագլուխն եր:
Փոքրիկ բախչում ծառերը վաղուց եյին զրկվել
ծաղկունքից ու ծառերի տակ տեղատեղ զայր ընկած
փած պառզները վորդեր ու միջատներ եյին սնում
արգեն:

Ա Ս Կ Ո Ւ

Շաբամաղ ու տրեադիմ եք Ոսկոն:

Հաղթանգամ ու առնելան երև և Մաշտիկ իսմա-

ԱՐԵՎ. Ասկոն վասկեծամ, սիրունաչյա ու կարմրաթուշ
աղջիկ եր. Յեթև փորձելիք նրան կանգնեցել կարմրա-
թուշ պատուղներով բեռնված խնձորենու տակ, դժվար
կլիներ վորոշել թէ վորն է խնձորը — ծառի վրայինը,
թէ տակինը:

Ոսկոն մի հատիկ եր գլուզում:

Բայց իսմայիլների թիվը շատ: Գյուղի ամեն ուռնացած տնտեսությունն ուներ իր իսմայիլը — իր նոքյարը:

Նորյար մտավ Խոմայիլը Ոսկոյի հոր — Բալաբեկ
աղայի մոռ, յերբ մի հոգմաբեկ ճարակ գողառուկ գյու-
ղը մտավ ու զրկեց Խամայիլին հորից ու մորից:

ի՞ո՞ն աներ 14 տարեկան հասակում վորք ու ա-
նոռ մնացած իստավիլը: ԶԵ վոր ապրել եր պետք:

իսկ Բաղաբեկ աղայի մոտ գործն ու աշխատանքն անսպառ եր:

Անբավկ եյին Բալաբեկի հացի ամբարները, անվերջ ու անծայրածիր նրա ցանքադաշտերը: Իսկ յերբ նրա վոչխարների, խողերի, կողերի ու այծերի հոտերը յերեկոյան գիմ իջնում եյին մոտակա սարից, անես անհեղը ու անընդպրկելի սելավ եր հորդում սարն ի վար:

Համոզ ձեռքիք կարիք ուներ Բալաբեկ աղայի խոսքորի թարունք:

Իսմայիլը կարգվեց խողապահ:

Աւ ամեն որ, հենց վոր արիի բրոնզե սկուտեղը

գիմ եր առնում դիմացի լեռան կատարին ու նրա կենացապարար ջերմությունից ծլունակ հունդը հողում սկսում եր փթթել ու աճել խսմայիլը մի ճիպոտ ձեռքին, առաջ եր անում միշտ ինչ վոր բան վորոնող ու միշտ խոխոացող խոզերին ու քշում դեպի հանդ:

Զորագլխից, կազմուաների զովասուս առաջ՝
տակ, յերբ կիպիչ շոգից նեզվող խոզերն ու խոճկորնե-
րը՝ թազբյահի պոկ ընկած հատիկների պես շալ ելին
անցնում քչքչան առվակի աջ ու ձախ ափերին, իս-
մայիլը պառկում եր գետնին ու յերեսը դեպի լազուրն
ուղղած, ընկնում մտածմունքների մեջ:

Մաքերը հորձանուտ հսում ելին նրա ուղարկությունը արբանթաց ու մշուշապատ:

Նա խորհում եր լավ ու վատ որերի մասրմ, առ բուսաների ու չքափորների մասին, լի ու յերջանի կյանքով ապրազների և եր նման զրկվածների մասին և այն մասին, վոր պատմել եր իրեն գեռ անցյալ տարի ծեր Սնդոյի աղան — անցյալում իր նման չոբան իսկ այժմ քաղաքում բանվորություն անող Սեթը:

Սեթը շատ նոր ու նոր բաներ եր պատմել հեղու
փոխության մասին, կենինի մասին ու այն մասին, վո
շուտով մեզ մոտ ել հեռագոր մի յերկրի նման՝ կվ
բանան հարուստները, վերջ կտրվի շահագործմանը, վ
ել չի մինի հարուստ ու տղքատ, կյանքը կլինի ազա
ու յերջանիկ և կապիկն բալոր նրանք, ովքեր կաշի
տեն, հողի վրա քրտինք ու ջանք կթափին:

իսկ ինքը՝ իսմայիլն այնքան ընդունակ է ու
իստանքի, այնքան յեռանդ ու ցանկով յուն ու
վերացնելու հին կարգելը, աղաթինելը, վորպիսզի
և ման չարքաշներն ապրեն իրենց ուզածի պես:

Հետո մտքերը դառնում եյին չքսակ ուղարկություն՝ չափահանություն լուրջի թե չե, յես Ռուկուր:

պիտի առնեմ, — անցավ նրա ուղեղով ու արյան մի դուրսկան ալիք հորձանք տվեց նրա յերակներում. նրա թուխ զեմքը ամոթխածությունից բոսոր գույն ընդունեց, ասես կեծ-կեծ ջուր թափեցին վրան:

Իսմայիլին թվաց, թե իր այդ համարձակ՝ մտքերին ունկնդրող յեղով: Ես մի պահ իր շուրջը նայեց... Հանգստացավ, յերբ մոտիկ տարածության վրա վոչ վոքի չտեսավ բացի զույգ խոճկորներից, վորոնք մոտակա քարին գեմ ընկած, խոխուցնելով մնջքներն եյին քոր տալիս:

Տարիները սահում եյին փոթորկուն ու ամեն աշշուն նոր ույժ, նոր իմաստություն բերում իսմայիլին:

* *

Նոան պես հասուն Ռոկոն կյանքից և զոհ եր, և զժգոն:

Գոհ եր, վորովհետեւ անծանոթ եր կարիքին ու զրկանքին, զժգոն, վորովհետեւ իրավունք չունել յերազելու մեկի մասին — իր սիրած ջանելի մասին:

Ամեն անդամ, յերբ մութը կախ եր ընկնում ծրագող կտուրներին ու գյուղն ընկղմիում եր թանձր խավարի միջ, Ռոկոն մտնում եր անկողին ու գառում մաքի ճրագները: Նրա առջև կանգնում եր իսմայիլին եր թուխ աչքերով ու առնական մարմնով: Ահա հառում է իսմայիլն իր ժպտացող աչքերը Ռոկոյի վրա ու նայում, նայում անկիքը ու անկուշտ:

— Ռոկո, — զիմեց իսմայիլը նրան հովվական անկեղծությամբ մի որ, յերբ նա դաշտում հանդիպեց նրան ժաղիկներ քաղելիս, — խաս փափուճներ առնեմ՝ կհագնես...

— Կհագնեմ... Բա խի չեմ հագնի... — Ռոկոն ինքն իրեն կրկնեց իր տված պատասխանը ոպայի խավար մթության միջ ու մտքի թելերը նորից հետ բացեց:

«Իսկ յես աղբյուր լինեյի՝ կիմեյիր»...

— Կիմեյի, կիմեյի, — իսմայիլի փոխարեն ինքն իրեն պատասխանեց Ռոկոն ու ամոթից այրվելով գլուխաղեց փափուկ բարձի մեջ:

Ապա հիշեց նորը, նրա անհրապույք խոժոռ զեմքը, վորը խիստ զայրացել եր, յերբ Ռոկոյին ու իսմայիլին մի անգամ տեսել եր իրար հետ զրուցելիս:

— Քյաղաների հետ զյադաները կիսուին, իսկ իմ աղջիկը — Բալարեկի աղջիկը — զյաղային թայ ըլիլ չի: Այսպես եր կշամքել հայրը Ռոկոյին և պատճել իսմայիլին՝ Ռոկոյի մոտ իրեն համարձակ ու աղատ պահելու համար:

— Հագասարություն ընկնի թե չե, յես Ռոկոյին պիտի առնեմ, — մտածում եր համառ կերպով առնապես իսմայիլը ու մտքում շոյում Ռոկոյի վոկի ծառելու:

Իսկ մինչև այդ Բալարեկ աղան չքնար Ռոկոյի համար հարուստ փեսացու զատավ: Հետո զյուղից մարդիկ յեկան Բալարեկ աղայի մոտ քյոխվայի տղա զաքի համար իննամախոսելու:

Փոխարենը Բալարեկ աղան զյաղին պիտի սամանար վոչխարների ու խոզերի նոր թաբուններ ու զրբնացու վոնիկներ:

Մշանջնական իրեկուն իջամ Ռոկոյի հոգու վրա: Վիշար թե առած յեկավ, բուն զբեց Ռոկոյի հոգու մեջ ու ցեցի պես սկսեց ներսից մաշել:

Մի ամպահնած որ զիմացի սարից վոչխարների, փոխարի հոտեր իջան, անդան զյուղի կես ու մեռ փոշոցներով ու հոսեցին Բալարեկի զամերը:

Բալարեկի հոտերն ավելացան, Ռոկոյի — վշտերն ու արցունքները:

Ռոկոն շատ որորվեց ու արսրվեց, բայց չհամար ձակվեց նորը խոսք ասել, հասկացնել վոր իսմայիլից զատ ուրիշ վաքի վոչ ճանաչում և վոչ ել ուզում եւ:

Հայրը համառ ու միահեծան, մայրը՝ իրավաղուրի ու ամուսնու անխոս կամակատարը:

Խաս կտորներ ծալ-ծալ յեկան տուն, ֆիստան ու
ժակետ կարգեցին նոր հարսի համար: Ուր վոր ե, զյու-
զով մեկ կհնչի գուռնան ու փեսայի ջահել ընկեր տը-
դերքն ու հարուստ բարեկամները ձիերը հեծած, Ու-
կոյին կը ջապատեն ու կտանեն Մաղաքին ընծա:

**

Այն որն իսմաւիլն իր խոզերի թարունն արո-
տատեղից շուտ բերեց գյուղ ու գոմերն արեց: Խոզերը
շուտ տուն անելու համար մի պիտի բարկանար: Նա
գիտեր, վոր Բալաբեկը կանուխ առավոտյան մեկնել ե
քաղաք գործով:

Իսկ այդ «գործի» խարարն արդեն դեմ եր առել
իրեն ականջին:

Դոմից գուրս գալիս, նա աչքը զցեց տան կողմը,
աչքը Ուկոյի աչքին դեմ առավ:

Իրար հասկացան:

Ռևկոն ճիպոտը ձեռին վագեց հավի յետեից, իրը
թե նրան հավաբունը քշելու, բայց գոմի մոտով անց-
նելիս, խոսք փոխանակեց իսմայիլի հետ:

Յերբ գյուղի ճրագներն սկսեցին մեկիկ-մեկիկ
նվազել ու հոգի մարգիկ գաշտի աշխատանքներից հոգ-
նած քուն մտան, գոմի յետեի մարագի մոտ յերկու
հոգի շնչոցով խոսում ելին:

— Ուկո ջան, պինդ կաց, վախես վոչ գու իմն
ես, հենց վոր հավասարություն ընկնի, յես քեզ պիտի
տոնեմ:

Յանի վհնց պինդ կենամ, հերս գանակը դրել
ա վզիս, զոռով տալիս ե նրան:

Ու ելի ինչ-վոր շշունչներ...

Ու գույզերը պինդ-պինդ զգիցեցին, ապա հորդեց
կարոտակեղ համբուլյն ու բաժանվեցին սբտամբուռ:

**

— Ա, Բալաբեկ, յանի առենց բան կլի... Են տե-
րամես աղջկա սիրտը կպչում չի Մաղաքին, — սիրտն

ան զցած ու գույնը տված խոսք բացեց Զարնիշան ա-
րիլը, Ուկոյի մայրը:

— Կպչում չի, կպցնելը դժար ա, — չոր ու վը-

ական տոնով վրա բերեց Բալաբեկը:

— Զե, եղ բանը գլուխ գալու բան չի, — թու-
թորաց Զարնիշանը ու գեռ ելի ինչ-վոր բան ուզեց
ասել բայց միտքը չվերջացրեց:

— Ա պառավ, յես տեսնում եմ, վոր դու յել ես

ինելքը կորցրել:

— Գլուխ եկած բանը նոր գլուխ պիտի գամ...
Ետ ի՞նչ հանգի յես խոսում:

— Դե, ելի գուն քունն ես ասում, — դժգոհեց
Զարնիշանը Բալաբեկի տրեխները քանդելով: — Բե-
լա, իմացի, խոսքը մերը, տունը մերը, աղջկանդ բանը
բանից անց ա կացել:

— Ի՞նչ, — խոժոնեց Բալաբեկն իր վագրի աչ-
քերը, ասես պատրաստվեց պառավին հոշոտելու:

— Դե, առենց ա ելի... համա վոր դու գլխի չես
ընկնում...

— Ա պառավ, արէնը գլուխս տալ մի, — մի
պահ կորցրեց իրեն Բալաբեկը, ճակատը շվիեց ու նո-
րից դիմեց պառավին:

— Յանի ասածդ շիտակ բան ա, թե պիտիցդ ես
հնարում մի ասեց քեզ:

— Հենց ինքը, — ու պառավը պահ մի լոեց: —
Ես երիկուն կողքս մտավ խեղճ ու նաշար աղջիկը, ա-
սե երիկուն կողքս մտավ խեղճ ու նաշար աղջիկը, ա-
պի արցունը թափեց, լաց յեղավ ու գլխով յեկածը
պատմեց:

— Զե, յես վրան մորթիլ գեմ, թողնիլ չեմ, վոր
տունս պղծի: Են ել ում հետ, զյաղա Իսմայիլի հմա:

Բալաբեկը պահ մի պատրաստ եր մտնել աղջկա
սենյակը, անկողնում տեղն ու անդը նահատակեց բայց
իրեն զարեց ու հրամացից Զարնիշանին.

— Իմ գլխիս փափախ կա, իմ խոսքը խոսք ա,

յես խայտառակ ըլելու միտք չունեմ, յես Մաղաքի ու
աշխարհի մոտ ամոթանքով մնացողը չեմ: Առավոտը
ծեղ-ծեղանա ճար գիդա, ճար աբա, վոր աղջկանդ
վրայից կեղտը վեր ունի:

Կուսադեմին Զարնիւսն քույրիկը կանչեց իր մոտ
տատմեր Խումարին, մի վուկի զրեց բուռը, ինդրեց
նրան, վոր անզգամ աղջկա արածը հեռացնի նրանից
ու, վոր կարեոր ե, վոչ վորի ականջը չցցի:

Տատմեր Խումարին գործ ու բամբասանքի նյութ
յեղավ, Ասկոյին՝ նորից վշտի ու արցունքների աղ-
բյուր: Տատմեր Խումարը գործի զրեց իր ժանդա-
քալիաթինի ու գանակի նման «գործիքները» իսմա-
յիլի ժառանգի հետքը Ասկոյի արյունից զատելու հա-
մար:

Ասկոն արսորվեց ու ճշաց, ճշաց ու տրորվեց, բայց
չուզեց խոստովանել վոր ինքը ճիշտ չի ստել վոր
ինքը զուլալ և ապօրի ջրի նման, վոր ստել և միմիայն
չուզած մարզու Մաղաքի ճանկերից ազատվելու հա-
մար:

Ասկոն այդ բոլորի մասին շշունջով հայտնեց այն
ժամանակ, յերբ տատմերը հայտարարեց, վոր Բալո-
րեկի փափախի պատիվը փրկված է. Ասկոն կտավի
գույն ստացած մի կում ջուր խնդրեց:

Քիչ անց, վորշ արյան հոսանք սկսվեց և Ասկոյի
շուրջը լերգացած արյան ճակներ ստեղծվեցին:

Տատմեր Խումարը սփրթնեց, բայց վիժման ա-
նաջող յելքն ինչու սրբի ու խաչի վրա ցցեց:

* *

Դաշտերը կանաչ գոտի հազան, ծխացող կառւ-
ները կարմիր գրոշներ:
Յեկավ իսմայիլի հավասարությունը, բայց Աս-
կոն այլևս չկար...



ՑԱՆԿ

1. Փափէր	3
2. Հաշիվը	23
3. Ճամբին	31
4. Գողը	44
5. Յերբ բացվում ե գարունը	86
6. Նունութը	101
7. Ում համար	110
8. Միխակ դային	117
9. Դարձ	124
10. Սահմանագլուխին	142
11. Ասկոն	154

ՀՀ Ազգային գրադարան



NL0362955

55717

ԳԻՆԵ Յ Ա.



ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍՊԵԿՏՐ (разказы)

На армянск. яз.

ИЗДАНИЕ ГРУЗГИЗА

Тифлис

1935

